



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՏՈՆ ԼՈԳԻՆՈՎ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵԳԵՆԴԸ




ՊԵՏԱԿԱՆ ՇՐՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ՅԵՐԵՎԱՆ—1927



27

ԱՆՏՈՆ ԼՈԳԻՆՈՎ



# ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵԳԵՆԴԸ

~~17117~~  
A 4105


Թարգմ.

ՀԱՐ. ՊԵՏՐՈՍՅԱՆ յեկ ԳՄ. ՀԱԿՈՐՅԱՆ

Հ.Ս. Գ.Ս. Ի. Կ. Ն. Ն. Ն. Ն.  
ԿԵՆՏՐՈՆԵՍ  
ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
"Կ. Զ. Դ. Ե. Մ. Դ. Ս."

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒՅՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927





Գրառեպլար № 138 ք. 528

Տիրած 4000

---

Պետերատի յերկրորդ տպարան Յերեվանում—380

## ԱՌԱՋԱԲԱՆ

1900 տարի մարդիկ միեմուռն բանն են կրկնում:  
„Քրիստոս հարյա՛վ... քրիստոս հարյա՛վ: Հենց  
վոր զարունը գալիս ե (այդ բանը զարնանն են գլխի  
ընկնում) չորս կողմից հենց ես ես լսում՝ «քրիստոս  
հարյա՛վ՝ յեվ են ել՝ «ճշմարտապե՛ս»:

Կրոններից հենց վորն ել վերցնես բոլորինն ել՝  
«ճշմարտապես» ե:

Վոչ մեկը չի ուզում խոստովանել, թե իր կրոնը  
սուտ ե. բոլորն ել ես են ասում՝ «մենակ մեզ հավա-  
տացեք, մենակ մերն ե ճշմարիտ, մենակ մերի «հա-  
րությունն ե ճշմարիտ», իսկ մեկեղներինը սուտ ե:  
Մերն ե որենքով, մենք ուղղափառներ ենք, — ասում  
են քրիստոնյաները. մենք ել ուղղահավատներ ենք. —  
առարկում են մահմեդականները, — քրիստոնյաներին  
չհավատա՛րք. նրանք ել են խաբում...: Մեր աստծուց  
բացի ուրիշ աստված չկա»: Մնացած բոլոր աստված-  
ները սուտ են, կեղծ ու հնարովի: Վոչ վոր իր թա-  
նին թթու չի ասի. ու նրանք բոլորը մեկ-մեկու մա-  
տնանշելով, այսպես են ասում՝ մե՛զ հավատացեք յեվ  
վոչ թե նրանց. նրանց կրոնը «պիղծ» ե, ճշմարիտ  
աստծու համար այն ուղղակի զագրելի յե, սրբապղղ-  
ծություն ե ու վոճրագործություն:

Ուղղափառների համար Քրիստոսի հարուժյունն է ճիշտ, հույների համար՝ Դիոնիսիւսը, հռոմեացիների համար՝ Բաբոսիւսը, պարսիկների մեջ՝ Միտրա աստվածն է հարուժյուն առել, փյունիկեցիների մեջ՝ Ադոնիսը, յեգիպտացիների մեջ՝ Ոգիրիսը, ինդուսների մեջ Ազնին: Բոլորն էլ հարուժյուն են առել յեւ բոլորն էլ «եղմարտապես»:

Աստծու եղմարտությունը, ինչպես քրմերն իրենք են հաստատում, հենց այդ աստծու զործած հրաշքների մեծությունով է ապացուցվում: Բայց հրաշքներից ամենամեծը վո՞րն է: Ի հարկե, մեռելներից հարուժյուն առնելը: Բայց յեթե միայն կրոնին հավատաք, դուրս կգա, վոր լսլոր այն աստվածները, վորոնց մարդիկ այս լույս աշխարհում աղոթում են, բոլորն էլ հարուժյուն են առել:

Ուրեմն, իրենց զորությունով դրանք բոլորն էլ հավասար են:

Յեւ յեթե հավատացյալներից մեկը մյուսի սուտը բռնում է, այդ նշանակում է, վոր աստվածների մասին նրանց բոլոր պատմածները ամեն տեղ իրար նման յեւ ամեն տեղ եղմարիտ ստեր են:

Վոմանք ապում են, թե Քրիստոսը հարուժյուն է առել, վոմանք էլ՝ ասում են, թե Քրիստոսն աշխարհ չի յել յեկել: Դիտնական մարդիկ, բարեխիղճ ու խելոք մարդիկ, վորոնք հին Հրեյաստանի պատմությունը լավ եյին իմանում յեւ այն ժամանակներուս եյին ապրում, ինչպես որինակ, Հովսեփ Ֆլավիոսը, ուղղակի ասում են. մեզնում, Պաղեստինում վոչ մի Քրիստոս չի յեղել ու նրա մասին մենք բան չենք ել լսել: Ավետարանն ասում է, վոր այն ժամանակ,

յերբ Քրիստոսը խաչված տեղը շունչը փչեց, ժամ 6-ից մինչեւ 9-ը ամբողջ Պաղեստինը «սաստիկ» մութ ու խավար պատեց (Մատթ. XXVII, 45)։

Իսկ Պլինսոս, կրտսերը՝ հռոմայեցի զիտնական աստղաբաշխը, վորը նկարագրել է բոլոր այն խավարումները, վորոնք Պաղեստինում իրեն հայտնի յեն յեղել, կես խոսքով անգամ այդ բաները չի հաստատում։ Գուցե միայն Մատթեվոս ավետարանչի աչքերի առաջ է այն ժամանակ մթնել, սակայն Հրեաստանի բոլոր մնացած քաղաքացիների աչքերի առաջ լույս եր։

Հիմա մեզ ասելու յեն. բա մի՞թե կարելի լե Պլինիոսին հավատալ,—նա այլազգի յե, նա պիղծ է, նա քրիստոսին չի հավատում։

Բայց այլազգիներն ել փաստերը չեն ժխտում։ Վոր Պաղեստինում բոլոր ծառերի տերեւները կանաչ են յեղել, այդ ընդունելու համար Քրիստոսին հավատալու կարիք չկա, այլազգին ել այդ կընդունի։

Փաստերը հավատի կարիք չունին, յեվ յեթե, իսկապես, Քրիստոսը յեղել է ու Պաղեստինում ապրել է, ապա նրան, ի հարկե, հավատացյալներն ել կարող եյին տեսնել,—նրանք ել քրիստնյանների պես աչքեր ունեն։ Բա եդ վո՞նց բան է, վոր մենակ առաքյալներն են տեսել նրան։ Աչառու (կողմնապահ) կողմի վկայութիւնը չեն հարցի։ Մարդը վոր գողութիւն անի,—կնոջը վկա չեն կանչի։ Ուստի չի կարելի հավատալ առաքյալներին,—նրանք՝ իրենք իրենց դեմ վկայութիւն չեն տա, թուղթը—ինչ ուզում ես՝ գրի՛, ձեն չի հանի։

Բայց, կարծեք թե, իրենց գլխին «խաթա-բալա» յեն գրել։ Առաքյալները վո՞րտեղից են իմացել Քրիս-

տոսի հարությունը։ Այդ բանը հենց ի՞րենք են տեսել, թե՞ դրա համար հաստատ վկաներ են յեղել։ Իսկի յել չե։ Չես գտնի մի մարդ, վոր տեսած լինի, թե մեռելը հարություն ե առնում։ Յերբ Մարիամ Մագթաղինացին ու Մարիամ Կղեոպացին գերեզմանի մոտ, յեկան, նրանք գերեզմանը դատարկ գտան, իսկ առաքյալներին ասացին, իբր թե Քրիստոսի՝ մեռելների միջից հարություն առնելու մասին հրեշտակն ե ավետել նրանց, զոնե այսպես ե ասում Մատթեվոս ավետարանիչը (զլ. XXVIII 5)։ Իսկ Մարկոսն այս բանը ժխտում ե. վոչ մի հրեշտակ չի յեղել, ասում ե նա, — ուղղակի մի «սպիտակ շապիկով» անձանոթ յերեխայե յեղել (զլ. XVI, 5)։ Լակոտի մեկը հիմար-հիմար դուրս ե տվել, իսկ մեծ մարդիկ իրենց մեծ տեղով հավատացել են յերեխայական դատարկախոսություններին։ Ղուկասու ավետարանում այդ լակոտը դառնում ե յերկու հասած տղամարդ (զլ. XXIV, 4,) իսկ Հովհաննու ավետարանում՝ յերկու հրեշտակ (զլուխ XX, 12)։

Դե՛ յեկ ու հասկացի սրանից, թե Մարիամն ի՛նչ ե տեսել. վոչ են ե ասենք՝ աստծու հրեշտակ ե տեսել նա, վոչ են ե՛ փողոցային մի լակոտ յեվ են ել այնպիսի մի լակոտ, վորի դեմքից կարելի յեր, մոտավորապես, եսպես ասել, վոր 50 տարեկանից պակաս չի։

Դե՛ հիմա յեկե՛ք ու գտեք, ա՛յ ուղղափառներ, թե այդ չորս ավետարանիչներից վորն ե ամենից շատ փչել։ Բայց վոր նրանք սուտ են ասել, ինչպես ասում են՝ խղճները կորցնելով, առանց բաշվելու, այդ բանը հիմարն ել շատ հեշտ կհասկանա։ Յեվ Թ՛ո՛ղ իրենց

կենացը սուտ ասնն նրանց, ում զլուխը վորքան մտնի:

Գիտակից մարդու համար այդ հեքիաթները բոլորովին ել հետաքրքիր չեն: Կարելորն այդ չե, այլ մի ուրիշ բան: Հետաքրքիր ե իմանալ, թե ի՞նչ նպատակով եյին անում այդ բոլորը, այդ ո՞ւմն եր պետք՝ մարդկանց ստիպել հավատալու Քրիստոսի հարութունը, դրանից ո՞վ ի՞նչ շահ կամ ոգուտ ունեւր: Ի միջի այլոց, այդ ել դժվար չի հասկանալ: Ամբողջ աշխարհում բանվորները լավ բաժնի համար են կրօվում: Ամբողջ աշխարհում զործարաններն իրենց ամբողջ ուժերը այն բանի համար են դնում, վոր այդ բաժինը կրճատեն, կտրեն, փչացնեն: Բայց ի՞նչպես անեն այդ բանը: Պարզ ե, վոր սրա համար պետք եր բանվորներին ապացուցել, վոր նրանց համար յերկրի յերեսին վոչ մի յերջանկություն չկա, վոր յերջանկությունն այն ժամանակ կգա, յերբ նրանք կմոռանան «ես աշխարհի» մասին մտածել, կհրաժարվեն առորյա հացի սովորական ունայն հոգսերից յեվ իրենց բոլոր ուժերը հոգու փրկության համար զործ կդնեն:

— Ի՞նչ, ի՞նչ, — ասում ե բուրժուէն բանվորին:

— Երեւում ե՝ լավ կյանքի մասին ես յերագում: Բայց դու իմանո՞ւմ ես անտա՛ջ ծուռ-կրունկ, «վոր վասն մերո մարդկան յեվ վասն մերո փրկության» աստված հենց ինքն ստիպված ե յեղել տառապել աշխարհում: Քրիստոսին իրեն, աստծու վորդուն բանեցնելու յեն տարել, բռնել, ձեռքերին ու վտռքերին պիպեռներ են խփել ու փայտով նրա գլուխը ծեծել: Աստծուն ել են ծեծել ...

Բոլոր յերկրների շահագործողներն աշխատավոր-

ների լայն մասսաներին հորտացնելու յեվ իրենց կամքին հնազանդեցնելու հարցում՝ կրոնի վրա միշտ ել նայել են ինչպես յեզան պինչը գրած մի պղնձե ողի վրա: Աստծու խաչելության տանջանքների, աշխատավորների ու ծանրաբեռնվածների փրկչի գաղափարը մարտնչողի գիտակցությունն ավելի ուժեղ ե հարվածում, քան կաշե մտրակը՝ ծեծվողի բաց ուսերին:

Ահա թե ինչո՛ւ ճնշված դասակարգերի արյունքրտինքով կերակրվող՝ բոլոր յերկրների շահագործողները, բոլոր գիշատիչներն ու արյունարբուները, միշտ ել համոզված քրիստոնիաներ են յեղել յեվ աշխատավորների կամքը քայքայող՝ խաչված Քրիստոսի կրոնը նրանց մեջ տարածելու համար չտեսնված փողեր ծախսել:

Ահա՛ թե ինչո՛ւ նրանք չեն վախենում ավետարանի այն կեղծ սպառնալիքներից, վորոնք իրենց այսպես են ուղղված. «Վա՛յ ձեզ, մեծատուններ: Վա՛յ ձեզ հարկ հարկի վրա ավելացողներ»: — «Վոչի՛նչ, վոչի՛նչ, — ասում են նրանք, — թքած վրան: Կանցնի: Ավելի պինդ կլինի, մեկ ե, ավետարանը մեր թեվ ու թիկունքն ե, մեր ապավենը:

Նրանք մատնացույց են անում բանվորներին՝ նախատված, բռնաբարված, ծեծված, տանջված, արնաշաղախ արված, բիրերի վրա նստեցրած, անոգնական ու անգոր Քրիստոսի վրա... Մատնանշում ու ասում են.

«Ահա՛ ձեզ իդեալը, քրիստոնեյական հեզության ու հոգու մաքրության վեհ պատկերը: Նայեցե՛ք այդ խեղդամահ յեղածին ու խոցվածին, նրա խաչը ձեզ

վրա վերցրե՛ք, մասնակից յեղեք նրա վշտերին ու ձեր զորովագութ սրտով նրա տառապանքներին կարեկից յեղե՛ք...

Ճշմարտապես հարյավ, — վողբում են նրանք, աշխատելով խեղդել տառապող պրոլետարների տրնքոցները:

— Վո՛չ, — վեճական կերպով պատասխանենք մենք նրանց: — Վո՛չ, աշխատավորների կյանքի վրա իշխելու ձեր իրավունքը հարուժյուն չի առնի այնտեղ, ուր հաստագրպանների իշխանությունը պրոլետարների սվիններով ե տապալված:

— Ճշմարտապես, գերեզմանից դուրս չեն գատերտերական սուտն ու կապիտալի առջեմ՝ քրիստոնեյական զգվելի գաղափարը:

## ԱՎԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Հավատացյալ քրիստոնյաների մեջ շատ և տարածված այն նախապաշարմունքը, վոր իբր թե ավետարանները բառացի արձանագրությունն են այն ամենի, ինչ վոր առաքյալներն անձամբ Քրիստոսից են լսել: Միանգամայն պարզ և, վոր այդ համոզմունքն իրականության չի համապատասխանում— ի հարկե, նրման բան բնավ չի յեղել և չեր ել կտրող լինել: Իրժվար և նույնիսկ հասկանալ, թե ինչի վրա յե հիմնված այդ սարքովի բանը:

Հենց ինքը՝ Ղուկաս ավետարանիչը, անկեղծ խոստովանում և, թե ամբողջ քրիստոնյա աշխարհին կատարելապես հայտնի անցքերի մասին իր պատմությունները նա վոչ թե Քրիստոսի խոսքերից և վերցրել, այլ «հենց են գլխից ականատես» մարդկանց հաղորդածների հիման վրա յե գրել (Լ. 1-ի. 1—2):

Ուրեմն, հենց ինքը Ղուկասը Քրիստոսի լերեսը չի տեսել: Այլապես, տեղեկանքների համար նա ինչ՞ու պիտի գիմեր «ականատեսներին»: Ինչ վերաբերում և Հովհաննեսից վերցրած ավետարանին, դժվար և, նույնիսկ, ասել, թե ո՞վ և գրել այդ ավետարանը: Պարզ և միայն, վոր մի մարդու դրած չի, այլ մի շարք հեղինակներ են գրել, վորոնց անունները հայտնի չեն: Այդ պարզ յերևում և հետևյալից. Հովհաննեսից վերցված

ազեաարանի վերջին գլխում նկարագրվում է Պետրոսի և Հիսուսի միջև տեղի ունեցած զրուցը. ցանկանալով հասկացնել, թե ինչպիսի մահով Պետրոսը կհռչակի աստծուն» Քրիստոսն ասաց նրան՝ Յեկ իմ հետևից»։ Իսկ Պետրոսը, հետ դառնալով ու նկատելով «այն աշակերտին, վորին Հիսուս սիրում էր», հարցնում է նրան, «Տեր, իսկ նա»։ Այդ հարցը նշանակում էր, իսկ նրանն ինչ է սպասում։ Նա չե՛լ ինձ պես պիտի վոչնչանա»։ Հիսուս Պետրոսի այդ հարցի դեմ այս հարցն է տալիս. «քո ի՞նչ բանն է,—ասաց նա.—Դու յեկ իմ հետևից, ուրիշներից ի՞նչ բան ունիս» (Հով. 21,—2)։ Մտածիր այն մասին, ինչ քեզ է վերաբերում։ Հիշատակելով այս, չորրորդ՝ «Հովհաննու անունով կոչվող» —ազեաարանը հորինողները հաղորդում են. «Այս աշակերտը հենց ինքն է վկայում այս մասին, ինքն էլ գրել է և գիտենք, վոր նրա վկայությունը ճշմարիտ է» (Հով. 21, 24)։ Բաց թվ եր Քրիստոսի այդ սիրեցյալ աշակերտը։ Ավանդությունը հաստատում է, վոր նա սոռաքյալ Հովհան աստվածաբանն է չեղել։ Կարող է պատահել։ Ուրեմն, այդ նրա մասին է ասված, թե՛ «նրա վկայությունը ճշմարիտ է» (Հով. XXII—24)։ Պարզ է, վոր նրա մասին է։

Ուրեմն գրողը նա չի չեղել, այլ նրա մասին են գրել. Բաց եղ ով է, վոր Հովհանու մասին ասում է՝ «մենք գիտենք, վոր նրա վկայությունը ճշմարիտ է»։ Այդ թվ է գրել։ Պարզ է, վոր Հովհաննիսն ինքը չի գրել, այլ ինչ վոր մեզ անհայտ մարդիկ։ Մենք «գիտենք», --ասում են նրանք, վոր այն ամենը, ինչ վոր «վկայում է» Հովհաննեսը, ճշմարիտ է։ Նա վկայում է, իսկ մենք նրան չերաշխավորում ենք։ Յերաշխա-

վորում ենք, վոր այդ ճշմարիտ է: Յեւ, կամենալով  
 պաշտպանել Հովհաննեսին, նրա այդ անհալտ բարե-  
 կամները, իրենք այդ շնկատելով, Հովհաննես ավետա-  
 րանչին վտարից-գլուխ մատնում են, — ախր, իսկապես,  
 ի՞նչպես կարող էր Հովհաննեսի մասին նրանց լերաշխա-  
 գիրը հենց Հովհաննեսի՝ իրեն ավետարանի ուղղակի  
 ընագրի մեջն ընկնել: Հովհաննեսի համար մենք լե-  
 րաշխավորում ենք, — գրում են նրանք: Շատ լավ, չե-  
 թե դուք եք յերաշխավորում, ուրեմն դուք էլ գրում  
 եք: Ուրեմն, Հովհաննու ավետարանը դուք եք գրել, և  
 վոչ թե ինքը: Բա հիմար չե՞ն եղ մարդիկ, համ գրել  
 են, համ էլ չեն ծածկում, դեռ կարդացողներին էլ ա-  
 ռաջարկում են հավատալ, վոր, իբր թե, «այս» բոլորը  
 Հովհաննու գործն է: Բայց ամենից առաջ քս ասեք՝  
 թվ եք դուք: Ընթերցողն ինչ պարտական է ձեզ հա-  
 վատալու, քանի վոր նա ձեզ չի ճանաչում: Յեզրա-  
 կացութլունը պարզ է՝ IV ավետարանը Հովհաննու  
 գրածը չի: Թե թվ ե գրել՝ վոչոք չգիտի:

Որինակներով բանը պարզվում է: Վերցնենք առ-  
 որյա մի պարզ դեպք: Հենց ես պես ասենք՝ մի դժ-  
 քախտ ամուսին, վոր վրդովված հետամտում է իր «տա-  
 նու բարեկամներից» մեկի հաջողութլունները, մի գե-  
 ղեցիկ որ փոստով իր կնոջից այսպիսի մի նամակ է  
 ստանում՝ «սիրելի՛ Համբո, մեր արանքը կտրվածվ, չես  
 քեզ էլ չեմ սիրում: Յես Տեր Իծուկին եմ սիրում»: Այս  
 տողերը կարդալուն պես, պարզ է, վոր այդ կնոջ մարդու  
 տրամադրութլունն իսկույն կվատանար: Բայց ի՞նչ կը  
 լիներ, արդոք, յեթե նա այդ չարաբաստիկ նամակի  
 վերջը հետևյալ տողերը կարդար. «այստեղ ստածները  
 բոլորն էլ ճշմարիտ են»: Յես գիտեմ, վոր ճշմարիտ է

այս վկայութիւնն: Համբո՛ւ, դրուստ վոր Մազթաղը քեզ չի սիրում, այլ ինձ ե սիրում: Այս բոլորը Մազթաղն իրեն ձեռքով ե գրել: Դուլդուլի Համբոն սրանից ինչ պիտի չեզրակացնէր: Թեկուզ հենց 10 տեղ ել նրա կնոջ ստորագրութիւնը դրած լինէր, մեկ ե, նա չէր հավատա, թե նամակը կլինն ե գրել: «Հը՛մ, նոր հասկացա», — պիտի ասեր Դուլդուլի Համբոն, ձեռքով ճակատին շպպացնելով, — դե՛ ասա՛ եդ բոլորը քոփակ տեր իծուկի բաներն են, ելի: Դե լնվ, դու հլա մի ըսպասիր, թե մի ժամիցը դուրս կգաս, տես քո եդ փալախ միրուքդ վոնց եմ սամեթելի պես փաթաթում ձեռքս ու դրի-դրի խաղացնում: Բիթ ու մուտթդ ընենց դղեմ, վոր քեֆդ դա. ալոեքդ քաշեմ, եդ ձեթած ճակտիդ շարեմ. թո՛ղ մի Մազթաղն ել ժամից տուն գա հլա...: Չարսավ-մարսաջն իրար խառնեմ...: Բերնին ընենց տամ, վոր՝ են շինովի ատամներն ել հետը փորը լցվեն:

Հովհաննեսից վերցրած ավետարանի հեղինակի հարցի պատմութիւնը շատ ենման Տեր իծուկի կեղծ նամակի պատմութեանը: Միշտ ել կարելի չե շոկել՝ այնինչ վոր մարդ ինքն ե իրեն մասին ասում և այն, ինչ վոր ուրիշներն են նրա մասին ասում: Ուրեմն, յեթե Վ ավետարանը, իրոք, Հովհաննեսը գրած լինէր, նա մտտավորապես այսպիսի մի վերնագիր կդնէր՝ «Հովհաննու գրվածք», կամ ուղղակի «Հովհաննու ավետարան», այնպես՝ ինչպես այն ժամանակ ուրիշ հեղինակներ ելին անում: Որինակ՝ «Թուղթ Պողոսի առաքելուն»: Վոչ թե «Պողոս առաքելից», այլ ուղակի՝ «Պողոսի»: Բայց այս խոսքերի իմաստն ինչ ե՛ «Հովհաննեսից վերցրած» «Մատթեվոսից վերցրած» և այլն: Այդ նը-

շանակում է, վոր այդ ավետարանները Հովհաննու կամ Մատթիվոսի իսկական գրածները չեն, այլ միայն «նրանցից» փոխ են առնված:

Հովհաննեսից վերցրած—նշանակում է Հովհաննեսից փոխ առած: Ավետարաններին այս վերնագրերը սլավոն թարգմանիչներն են դրել: Ինչ վերաբերում է հունական բնագրին, այնտեղ այսպես է ասված՝ «ավետարան ըստ Հովհաննու\*» կամ ավետարան՝ համաձայն Հովհաննու: Սակայն, անհասկանալի յե, թե ավետարանի բնագրերն ինչո՞ւ հունարեն են գրված: Ախր առաքյալները չեբրայեցերն (հրչական լեզվով) գրել իսկի ել ենքան չգիտեցին: «Գործք առաքելոցի» մեջ համենայն դեպս, մի տեղ ասված է, վոր նրանցից շատերը նույն իսկ անգրագետ ելին, — դրանք «գիր չը ճանաչող ու հասարակ» մարդիկ ելին (գործք առաքելոց IV, 13): «Տեսեք, յեղբայրներ, — ասում է Պողոս առաքյալը, — մեր մեջ իմաստունները քիչ են (I Կորնթ. թալոց թուղթ, I, 26): Սակայն, հունական «բնագրերն» ել բառի բուն իմաստով բնագիր չեն, վորովհետեւ Դրրանք ել յեբրայական (Արամեյական) լեզվից լոկ թարգմանութլուներ էլին՝ հունարեն լեզվով: Յեբրայեբեն գրված իսկական բնագրերը վոչ մի տեղ չեն պահպանվել: Յեբրայեցերեն սկզբնական բնագիրը նախ հունարեն լեզվով է թարգմանվել, հունարենից ել՝ սլավոներեն, — մենք ել ավետարանը յերրորդ՝ ձեռքից ենք ստացել: Ինչ վերաբերում է՝ Մարկոս ավետարանչին,

\*) Ավետարանների հայկական թարգմանութլուների վերնագրերը համապատասխանում են հունարենին (Ավետարան ըստ Մատթիոսի, Մարկոսի, Դուկասու և Հովհաննու:

ապա՝ չերկրորդ դարի սկզբում ապրող ներապոլցի Պա  
 պիոսը նրա մասին հետևյալն է ասում. «Մարկոսը...  
 չլսեց Թիոդոսը և չհետևեց նրան. նա հետո միայն հե-  
 տևեց Պետրոսին» և «մանրամասնորեն գրի առավ ինչ  
 վոր հիշում եր (Յեվսեբիոս, լեկեղեցական պատմ. III  
 39, 15): Այդպիսով, վերոհիշյալ բոլոր յերեք ավետա-  
 րանիչներին՝ Ղուկասին, Հովհաննու և Մարկոսի ցուց-  
 մունքներն այնքան էլ արժանահավատ չեն: Բայց մե-  
 կը, Մատթևոսը, դեռ մնում է, սակայն նրա ցուցմունք-  
 ներն էլ գործին այնքան չեն ոգնում,—Մատթևոս ա-  
 վետարանիչը, մեջ բերելով Քրիստոսի մարգարելու-  
 թյունը Յերուսաղեմի գալիքի մասին, բերանն այս  
 խոսքերն է դնում. «Յերուսաղեմ, Յերուսաղեմ, դժւ,  
 վոր կոտորում ելիր իմ մարգարեներին... և քեզ մոտ  
 ուղարկվածներին: Բանի՛, քանի անգամ կամեցա հա-  
 վաքել քու զավակներին, ինչպես թռչունն իր ձագուկ-  
 ներն է հավաքում թևերի տակ, ու դուք չուղեցիք:  
 Ուստի և ձեր տունը դատարկ պիտի մնա (Մտթ. XXIV,  
 37—38, Ղուկաս XIII, 34—35): Մատթևոսը շփոթել  
 է—այն ժամանակ վոչոք մարգարեներին չեր կոտոր-  
 ւում, և աստծու տունը դեռ դատարկ չեր: Յերուսաղե-  
 մի կործանումը... տեղի չե ունեցել 70 թվին: Վորչափ  
 վոր այս ակնարկն այդ դեպքին է վերաբերում, պետք  
 է չեղրակացնել, վոր առաջին ավետարանը 76 թվից  
 առաջ գրված չի չեղել, իսկ այդ նշանակում է՝ առնը-  
 վազն 50 տարի հետո այն անցքերից, վոր այդ դրքում  
 նկարագրվում են: Այդ ահազին ժամանակի ընթաց-  
 քում ի՞նչ կարող եր մնալ մարդու հիշողության մեջ:  
 Սակայն, արժե՞, նույնիսկ, խոսել այն մասին, թե  
 ինչպիսի հիշողություն կարող եր ունենալ Մատթե-

վոս ավետարանիչը, քանի վոր, Քրիստոսի աշակերտներին թվելիս, նա իր անունը չի հիշատակում: Ճիշտ է, տասներկու առաքյալների ցանկում նա հիշում է մի վոմն Մատթևոսի, բայց վոչ իրեն, այլ ինչ վոր «մաքսավորի» (Մատթևվոս 9,9), վորի մասին Ղուկաս ավետարանիչ (5—25) և Մարկոսը (2—14) ասում են, թե այդ մաքսավորին վոչ թե Մատթևոս էյին անվանում, այլ Ղևի: Դժվար չի հասկանալ, թե վոհրտեղից է առաջացել այս խառնաշփոթութունը, — այդ ժամանակներում մարդիկ դեռ գրքեր տպագրել չէին իմանում: Գրքերը գրվում ու արտագրվում էյին հաճախ խամ և կիսագրագետ գրչակների ձեռքով: Ահագին թվով սըխալները, յերբեմն էլ գիտակցաբար կատարած աղավաղումներն այդ ժամանակներում գրական յերկերը տարածելու այդ ձևը բոլորովին անհուսալի էյին դարձնում: Հենց այդ պատճառով, ինչպես տեսնում ենք, շատերն այդ գրքերին չէյին դիմում: «Յես կարծում էյի, — ասում է Պապիան յեպիսկոպոսը, — վոր ենքան գրքերից ոգուտ չեմ ստանա, վորքան կարող եմ հիշողությանս մեջ կենդանի ու միշտ մնացող խոսքից ըստանալ: Հիշողությունն ավելի վստահելի չե, քան գիրքը: Նույնն էլ Պողոս առաքյալն է ասում. «ինչ վոր ուրիշներից առել եմ, — ասում է նա, այն էլ ձեզ հաղորդել եմ» (1 Կորնթացոց թուղթ III, 23—25, IV, 3—8):

**ՏԵՐՏԵՐԱԿԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏՄՈՒ ԽՈՍՔԻ ՎՐԱ**

Ավետարանի իսկական բնագրերը պարզելու առաջին փորձը քրիստոնեյական յեկեղեցու ներկայա-

ցուցիչներն են արել՝ 4-րդ և նույնիսկ 5-րդ դարուց վոչ առաջ: Ճիշտ է, մինչ այդ, չերբ սկսեցին առաջին ավիտարանները հորինվել, մտքերի գրավոր շարադրության սովորութիւնն արդեն լայն տարածված էր: Գրելն հարգի ընկած զբաղմունք էր դարձել:

«Բազումք հոժարեցան վերստին կարգել զպատմութիւնն», (շատերն են հանձն առել նորից պատմութիւններ գրել). — ասում էր Ղուկասը(1,1): Բայց դժբախտութիւնն այն էր, վոր մարդիկ այնպիսի անցքերի մասին եյին գրում, վորոնք 200—300 տարի առաջ եյին տեղի ունեցել: Այդ անցքերի մասին մարդկանց գլուխն թնչ կարող էր պահել հիշողութիւն մեջ, չեթե նույնիսկ մեր որերում, չերբ գրագիտութիւնն արդեն բավականին լայն տարածված է, և գրքի տըպագրութիւնն գործը վարգացման բարձր մակարդակի չե հասել, մեղնում քչերը կգտնվեն, վորոնք գիտենան իրենց պապի պապի և հաճախ նույնիսկ պապի անունը: Յեւ վերբ յեկեղեցու հայրերը հավաքեցին Քրիստոսի վերաբերյալ բոլոր այն «ավետարանները», վորոնք այն ժամանակ եյին գրված չեղել, սկսեցին մեկը մյուսի հետ համեմատել, դրանք այդ ավետարանների միջև ահագին հակասութիւններ բաց արին: Առաքյալներէց մեկը մյուսին հերքում, մերկացնում, սուտը բռնում էր: Տերտերներին պարզ էր, վոր գործն աչգպես թողնել անհնարին էր: Անհնարին էր թույլ տալ, վոր բոլոր այդ գրականութիւնը, վորը քրիստոնեյական հավատի իսկական հիմքն էր փորում, ընթերցող մասսայի սեփականութիւնը դառնար: Պետք էր վոչնչացնել այն: 80-ից ավելի ավետարաններ այն ժամանակ այրվեցին:

ՀԱՍՈՒ ԳԻՏ : Ի Թ Վ Ն Ն  
ԿԵՆՏՐՈՆՍԿԱՆ  
ՅՐԱԳՐԱՐԱՆ № 2  
116

Այս վիճակին տիրացավ «Պետրոս առաքյալի ավետարանը», վորի մասին գիտեր նաև քրիստոնեական հին պատմաբան Յեվսեբիոսը (յեկեղ. պատմ. IV, 12), «12 առաքյալների ավետարանը», «Հակոբ Առաքյալի ավետարանը», «Փիլիպոսից վերցրած ավետարանը», «Թոմայի ավետարանը» և ուրիշ շատ-շատերը: Թողին միայն այն չորսը, վոր մեր որերում գոյություն ունեն: Ինչ՞և: Ինչն էր պատճառը: Ահա թե ինչը. «չորս լեղանակ, չորս քամի և աշխարհի չորս ծայր կա, ուստի բոլոր ավետարաններից չորսն են իսկականը»: Այսպիսի բացատրություն էր տվել Լիոնի յեպիսկոպոս Իրինիոսը:

Քիչ հետաքրքրական չեն նաև ավետարաններ վոչնչացնելու դրդապատճառները. այսպես, որինակ, Թոմայի ավետարաններից մեկի վոչնչացնելու պատճառն այն է լեղել, վոր Քրիստոսի մանուկ հասակում կատարած հրաշքի մասին այնտեղ հետևյալ տեղեկությունն է բերված լեղել.

«Հիսուսը հինգ տարեկան ժամանակ գետի ափին խաղում ու, փափուկ կավ տրորելով, նրանցից 12 ճնճղուկ է շինում: Որը շաբաթ եր: Հովսեփը, գալով այնտեղ, բղավում է նրա վրա ասելով՝ «Ինչ՞և լես շաբաթ որն անում այն, ինչ չի կարելի: «Իսկ Հիսուսը ծափ տալով ձայն է տալիս ճնճղուկներին՝ «Թռեք»: Ու ճնճղուկները ծվծվալով թռչում են» (տես Ժեբելը՝ «Կանոնական և պարականոն ավետարաններ», հջ 91): Տերտերներն այդ բոլորը կարդում են ու մտածում. ինչ անեն այդպիսի ավետարանը: Քրիստոսն ասածու պես հրաշքներ է գործում, իսկ լերիխայի պես՝ չարություննե՞ր անում: Վոչ են և՛ նրան այդ հիմարություն-

ների համար ճիպտանս, վոչ են ե՛լ յերկրպագես վորպես աստծու: Յերեխաներին դաստիարակելը դժվար է, իսկ աստծու ճտերին՝ ել ավելի Վճվար: «Վոչ—վճոտմ են նրանք, —այդ բանը չպիտի լինի: Վոր հինգ տարեկան խընքոտը հրաշքներ գործի — պետք չի: Այրեկ Թոմայի ավետարանը, սատանի բաժին դարձնել:

Այս մտքին սուրբ Հովհան Վոսկեբերանը համաձայնում է. յեթե փոքրիկ Քրիստոսը կարողանար հըրաշքներ գործել, ապա ուրեմն նա կարող էր իրեն պաշտպանել Հերովդեսի հալածանքներից: Մակայն, չգիտես ինչու, ստիպված է լինու Յեգիպտոս փախչել: «Ինչո՞ւ — Հարցնում է Վոսկեբերանը և ինքն իրեն պատասխանում: — Վորովհետև յեթե աստված «իր մանկուլթյունից հրաշքներ գործեր, ապա նրան չեյին ճանաչի իբրև մարդ» (զրույց Մաթ. ավետարանի 7-րդ գլխ. մասին):

— Մի խոսքով, — ասում էյին տերտերները, — սուտ է, թե ըզորթ, թքած դրա վրա: Բայց մեր ասածը պիտի լինի: Այրեկ Թոմայի ավետարանը, ու պըրծավ-գնաց:

**ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽԱՌՆԱՇՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մակայն, այդ «իսկական» ավետարաններն ամեն տեսակի ստի ու հակասուլթյունների բուն են. Տվ էր Քրիստոսը: Իսկապես գոյուլթյուն ունեցել է, արդյոք: Վոչ վոք այդ մասին պարզ վոչինչ չգիտի: Վճրտեղ և յմբը է նա ծնվել: Ո՞վքեր էյին նրա ծնողները: Մարկոս առաքյալն այդ մասին վոչ մի խոսք չի ասում:

Քրիստոսի կենսագրությունը նա մկրտության սկզբից ե տալիս, այսինքն՝ այն ժամանակից, չերբ Քրիստոսը, ըստ Ղուկասի վկայության, արդեն 30 ասրեկան եր (Ղուկաս III 29): Մտթեվոսն ասում ե, վոր Քրիստոսը սուրբ հոգու վորդին եր: Ի միջի այլոց, նա բացատրում ե, իսկապես այդպես ե յեղել, արդյոք, նա ճիշտը չգիտի, բայց փաստ ե, վոր այդ ամենը Հովսեփը յերազում եր տեսել (Մաթ. I, 20): Ղուկասն ասում ե, վոր Քրիստոսն Հովսեփից ե ծնվել: Նա Մարիամին նրա օկինն» ե անվանում: (Ղ. II 5): Մարիամն ինքը Հովսեփին «քրիստոսի հայր» ե անվանում: (Ղ. II, 48): Ի՞նչ ե նշանակում այս կասկածելի պատմությունը: Աստվածաբաններն այդ պատմությունն այսպես են բացատրում, «Հիսուս Քրիստոսի ծննդյան գաղտնիքը մինչև մի վորոշ ժամանակ բոլորից թազուն ողիտի մնար. այդ գաղտնիքը չիմանալով, Նազարեթի բնակիչները Քրիստոսի հոր՝ Հովսեփին եյին համարում իրրև նրա մոր «մարդ», չկամենալով բաց անել այդ գաղտնիքը, Աստվածածիներն ինքը Հովսեփին Հիսուսի հայր եր անվանում: (Բ. Գլադկով «մեկնություն ավետարանի): Բանից դուրս ե գալիս, վոր Աստվածածինն ուղղափառներին «պար եր ածում»: «Յերկնային թազունիին» սուտ եր խոսում, խարում եր, իսկ հիմարները նրան հավատում եյին: Աամա թե խափել գիտի մեր աստվածամայրը հա: Այ քեզ խորամանկ:

Սրան զուգընթաց, չգիտենք թե ինչու, չեկեղեցին Քրիստոսին համարում ե վոչ թե վորդի հոգվուն աստծո, այլ վորդի հորն աստծո: Յեվ այսպես, թե ովքեր են Հիսուսի ծնողները, այդ մասին ավետարա-

նում ճիշտ պատասխան չկա: Միանգամից յերեք հոր  
անուն են տալիս: Թե վորին այս դեպքում պիտի հավա-  
տանք; դժվար է ասել: Մատթևոսն ինչ վոր մի Հակոբի յե  
համարում Քրիստոսի պապ (I, 15), իսկ Ղուկասը՝ Յեզի-  
ային (III, 23): Քրիստոսին սուրբ հոգու վորդի  
անվանելով Մատթևոսը հայտարարում է ընդ սմին, վոր  
Քրիստոսը միաժամանակ Դավթի «ցեղիցն է» (Մա-  
տթ. I, 1): Դավիդը սուրբ հոգուց է ծնվել, արդյոք,  
կամ ընդհակառակը, նա ինքը յերբևիցե սուրբ հոգի  
յե ծնել, կամ, գուցե, Դավթի կինն աղափսյամկ է բերել  
— պարզ չի: Ընդ սմին, Մատթևոսը Քրիստոսից մինչև  
Աբրահամ 42 սերունդ է հաշվում (I, 7), իսկ Ղու-  
կասի հաշվով դրանք 56 են (III, 23—24): Կույս  
Մայրամբ, ինչպես պատմում են, ամուսնացած յերբեք  
չի լեղել, իսկ Քրիստոսը 4 յեղբայրներ ուներ (XIII,  
55—56): Քրիստոսի ծնվելուց հետո Հովսեփը, ըստ  
Մատթևոսի վկայության, «յերեխային ու մորը գիշերով  
վերցնում գնում է Յեզիպոսս և այնտեղ մնում մինչև  
Հերովդեսի մահը (37—4 թ. մինչև Ք. ծ.), իսկ Հերով-  
դեսը, ինչպես պատմաբաններն են հաստատում, դրա-  
նից 4 տարի առաջ եր մեռել: Այն ժամանակ, ասում  
է Մատթևոսը, «զայրացած» Հերովդեսը «մարդիկ ու-  
ղարկեց Բեթխեհեմի բոլոր մանուկներին կոտորելու»  
(Մատթ. II, 16): Ղուկասն այս բոլորը ժխտում է.  
ըստ իր ավետարանի, վոչ վոք մանուկներին չի կո-  
տորել, Քրիստոսի ծնողներից վոչվոք Յեզիպոսս չի  
գնացել: Ծննդաբերութունից հետո Մարիամը 6 շա-  
բաթ տանից դուրս չեր գալիս (Հով. 22), և այդամիս  
ու կիսվա ընթացքում ամբողջ Բեթխեհեմում վոչոք

վոչ մի մանկան մատ չդիպցրեց: Յերբ վոր, ըստ Մովսեսի որենքի, «քառուունքը» լրացավ, Քրիստոսին տաճար բերին՝ աստժուն ընծայելու» (Ղ. 11, 22): Ամեն բան աստժու որենքով կատարելուց հետո, Հովսեփն ու Մարիամը մանկան հետ «վերադարձան Գալիլիա, իրենց Նազարեթ քաղաքը» (Ղ. 2-րդ, 39), իսկ Յեզիպտոսի մասին նույնիսկ խոսք չի լեղել: «Իսկ մանուկը մեծանում և հոգով եր զորանում» (Ղ. 11, 40): Բայց թե ինչ է յեղել նրանից հետո, վոչոքի հայտնի չէ: Թե վորտեղ եր ապրում Քրիստոսը, մինչև 30 տարեկան դառնալը, այդ վոչոք չգիտի: 30 տարեկան հասակում նա մկրտվեց Հորդանան գետում, և այն ժամանակ, ի միջի այլոց, յերբ Քրիստոսը ջրից դուրս եր գալիս, իսկույն Հովհաննեսը տեսավ... Հոգին աղավնակերպ իջունում եր նրա վրա (Մաթ. 1, 10): Այքեզ զարմանալի բան ժողովրդի ահագին բազմություն կար այնտեղ ու, վոչ այդ ահագին բազմությունը, վոչ ել հենց Քրիստոսն ինքն աղավնի բան չտեսան. աղավնին միայն Հովհաննեսն է տեսել, յեթե միայն հավատանք ավետարանի ասածին: Հետո Մարկոս ավետարանիչը հայտնում է, վոր «դրանից անմիջապես հետո հոգին նրան անապատ է տանում»: Այնտեղ 40 որ... սատանան Քրիստոսին փորձության է լինթարկում (Մարկոսի I, 12, 13): Իսկ Մաթեվոսը ժխտում է այդ:

Սուրբ հոգին չէ, վոր Քրիստոսին անապատ է տանում, այլ սատանան». «նրան սատանան է բռնում» և տանում, ասում է Մատթևոսը: Թե սատանան Քրիստոսի վորտեղիցն եր բռնել, Մաթեվոսը չի ասում թևից, թե ուղղակի՝ զրկած, բայց տանում է, ըստ

յերևույթին, պինդ բռնած, այնպես վոր Քրիստոսը նույնիսկ դիմադրելու փորձ չի անում, «գնանք՝ գնանք»: Այս բոլորը, ըստ Մարկոս ավետարանչի վկայութեան, մկրտութիւնից «անմիջապես» հետո յե լեզել: Իսկ Հովհաննես ավետարանիչը հաստատում է, վոր մկրտութեան «չերբորդ որը» (II, 1) Գալիլիայի կանաչ քաղաքում Քրիստոս հարսանիքում քեֆ հր անում: Հետագայի վերաբերմամբ հայտնի յե, վոր Քրիստոսը Գալիլելիում իր գաղափարները քարոզելով հր պարսպում ու դանազան հրաշքներ գործում, բայց թե վորքան տևեց նրա այդ գործունեությունը, հայտնի չէ. մի տարի, յերկու, յերեք, թե մի քանի ամիս, վոչոք վոչինչ չգիտի: Վոչ թվին են նրան տարի, և յերբ են իրան մահապատժի յենթարկել, այդ մասին վոչոք վոչ մի տեղեկութիւն չունի:

Ի միջի այլոց հետաքրքրական է Մատթևոս ավետարանչի նկարագրած հետևյալ դեպքերը. «Մի անգամ Քրիստոսը Բեթսայիդ է գալիս, նրա մոտ մի կույր են ըբրում ու խնդրում են, վոր Քրիստոսը ձեռքը նրա վրա դնի»: Քրիստոսը, բռնելով կույրի ձեռքից, «թքում է» նրա աչքերի մեջ ու «ձեռքերը» վրան դնելով, հարցնում է, թե բան տեսնում է, արդոք: Կույրը անտղելով ասում է՝ ծառաբի նման անցնող մարգիկ եմ երեվում աչքիս: Քրիստոսը նորից ձեռքը նրա աչքերին է դնում ու հրամայում, վոր անտղի: Կույրը բժշկվում ու սկսում է ամեն բան տեսնել:

Սկզբում կույրը բան չէր տեսնում: Հենց խելքի չել մոտ է. յեթե տեսողություն ունեցող մարդու աչքի մեջ ել թքենք, նա չիլ չի կարողանա միանգու-

մից տեսնել: Բայց կույրն ելի հենց քիչ-միչ բան եր  
 ջոկում, «մարդկանց տեսնում եմ,—ասում եր, ամա  
 անջախ եմ նրանց ծառերից ջոկում»: Ախր ըտենց  
 վճնց կլի, ե: Եդ վճնց մորուց բոս եր, վոր համ տե-  
 սել եր, համ ել գիտեր, թե ծառն ինչ բան ե: Խոսք  
 չկա, վոր բոսք ձեռ եր առնում—իրեն սութ բոսու-  
 քյունն եր դնում: Դե պարզ ե, վոր ըտենց բան չի յե-  
 դել, ամա Մատթևոսի ասելով ըտենց ա դուրս գալիս,  
 ինչ անենք:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐՈՎ ՎԻ ԲԱՆ Ե

Պերջապես Քրիստոսի հարության լեզենդ (ա-  
 ռասպել) ել ծայրե ի ծայր խառնաշփոթությունն ե:  
 Ինչձե Քրիստոսը թագուն, գողի գող հարությունն ա-  
 ռավ: Ինչձե եդ հրաշքը նա մարդկանց ցույց չավեց:  
 Յեզ ինչձե մարդիկ, այնուամենայնիվ, հավատում են  
 այդ բոլորին: Քրիստոսի հարության վկան ով ե: Ով ե  
 տեսել այդ Չէ վոր յերբ յուղաբեր կանայք գերեզ-  
 մանի մոտ յեկան, այն դատարկ եր արդեն: «Փրկչի  
 հարությունն առնելուն շատ վկաներ կան,—բացազան-  
 չում ե Կյուրեղ յերուսաղեմացին.—այսպիսի վկաներ  
 են դրանք. ամենից առաջ հենց ինքը՝ գիշերն ու  
 լուսնի լուսը... և Քրիստոսին ծածկող գերեզմանա-  
 քարը: Այս քարը տեսել ե տիրոջն ու վկայում ե նրա  
 հարությունը», հետո՝ «աստծու հրեշտակները», վորոնք  
 մարդկանց անտեսանելի յեն, «և դագաղի խանձա-  
 րուրները», «և Հեղիոն լեռը», վորը «մինչև որս կանգ-  
 նած ե» իր տեղում ու չի գնում արտասահման, վեր-  
 ջապես, «և հենց են տեղը, ուր այդ բոլորը տեղի յե

ունեցել և, վորը ըտլորն ել տեսնում են» (Կյուրեղ Յերուսաղեմացի. «բան հրապարակական»):

Ահա թե վորքան վկաներ կան: Յեվ անա թե ինչպիսի հիմարներն են սրբերի շարքն ընկնում: Բայց մեկն ու մեկը տեսել և, արլոյք, Քրիստոսի հարութւոյն հրաշքը: Յավոք սրտի, վնչ. Մարրամ Մագթաղենացին, վորն ամենից շուտ եր չեկել Քրիստոսի գերեզմանի վրա, վկայում և, վոր քարն արդեն հետ եր տարած գերեզմանից» (Հովհան. XX, 1), իսկ տիրոջը «գերեզմանից տօրել էլին»: Թե ի՞նչ են արել նրան, ճւր են տարել, «չգիտենք» (Հովհան X, 2): Առաքյալները գնում, մտիկ են տալիս գերեզմանն ու քարը, և տարակուսանքով «վերադառնում իրենց տեղը» (Հովհան XX, 10):

Ես ի՞նչ Բյալակ ե, Յո՛ւ.—մտածում են նրանք, ծոծրակները քորելով.—ես Քրիստոսը հարութւոյն և առել, թե՛ ժուլիկները նրան գերեզմանից թոցրել հն: Բան չես հասկանում...:

Ե՛հ, չելավ, ես քարը վոր հետ և տարած ու կնիքը պոկած արդեն շատ ու շատ կասկածելի չե: Ախր ես ի՞նչ հրաշք ե, ե: Եդ վո՞նց բան ե՛ հարութւոյն կարողացել և առնել, իսկ առանց քարին ձեռ տալու չի կարողացել գերեզմանից դուրս գալ: Ջրերի վրայով ման եր գալի՛ս, իսկ այստեղ չկարողացմով առանց ուրիշի ոգնութւան յուր գնալ:

Ա՛յ, չեթե համ քարն իր տեղը լիներ, համ կընիքը վողջ, իսկ ինքը—Քրիստոսը գերեզմանի մեջ չըլիներ,—կասեյինք՝ հա՛մ:—Եդ կլիներ հրաշք: Թե չե, եդ վոնց բան և, վոր հրաշքով հարութւոյն առավ, իսկ

քարը մարդիկ ստիպված յեղան ձեռքերով դեն գցել։  
Ինչ խայտառակ պատմությունն է, տո՛ւ։

Բայց թե յի՞րբ է պատահել այդ բոլորը։ «Արե-  
վածագին», — ստում է Մարկոսը (XVI, 1-2)։ Վո՛չ  
եւ առաջ լուսարացին, արշալույսին, «մինչև արեա-  
ծագ», առարկում է Մատթեվոսը (XXVIII, 1)։ Յեվ վո՛չ էլ  
լուսարացին, — բողոքարկում է Հովհաննեսը, — այլ գի-  
գիշերը, «չերբ դեռ մութն էր» (XX, 1)։ Շատ ուշ  
միայն Մարիամը պատմում է, վոր նա գերեզմանի  
մեջ յերկու հրեշտակ է տեսել, բայց նրանք ել իր  
այն հարցին, թե «ձեր են գրել տիրոջը», իրեն վո-  
չինչ չեն պատասխանել։ Դրանից հետո ամբողջ ժա-  
մանակ Մարիամը «լաց եր լինում», առանց աչքերը  
ցամաքեցնելու (Հովհաննես XX, 11) ու բանն այն  
տեղ հասավ, վոր սկսեց թվալ իրեն, իբր թե, Քրիս-  
տոսն սկսում է նրա աչքին չերևալ։ (Հովհաննես  
XX, 14)։ Նման զառանցանքներ առաքյալների հետ  
եւ են պատահել (Հովհաննես XX, 19)։ Ահա այն բո-  
լորը, ինչ հայտնի չե Քրիստոսի հարության մասին։  
Փոքր ի շատ ճիշտ վո՛չ մի տեղեկությունն վո՛չ վոք  
չունի, իսկ յերբ ավետարանիչներն սկսում են Քրիս-  
տոսի հարությանը վերաբերող ավելի մանրամասն  
զանազան հանգամանքներ նկարագրել, ապա այստեղ  
տակից — գլուխ շփոթ է սկսվում։ Մատթեվոսն այս-  
պես է ասում, վոր գերեզմանում մի հրեշտակ է մի-  
այն չեղել (Մատթեվոս XXVIII,) և վո՛չ թե չերկու,  
ինչպես Հովհաննեսն է հաղորդում։ Առկասն ասում է,  
վոր Մարիամը վո՛չ թե հրեշտակ է տեսել, այլ սովո-  
րական «յերկու» մարդկանց (Առկաս XXIV, 4)։ Մար-  
կոսն այս ել է ժխտում. վո՛չ թե չերկուսը այլ մեկը,

վոչ թե հրեշտակ, այլ մարդ, են ել վոչ թե մեծ, այլ պատանի: Չորսովել տարբեր բաներ են ասում: Այդ պատճառով ել չի կարելի վոչոքի հավատալ: Սըս հետ մեկտեղ, ավետարանիչները չերբեմն իրենք իրենց ել են հակասում. այսպես, Մատթեվոսը հայտարարում է, վոր Քրիստոսը «չերկրի արգանդում» յերեք ցերիկ և յերեք գիշեր» պառկեց, ինչպես Հովհաննեսը կետի փորում (Մատթեվոս XII, 40), և հենց այստեղ ել հայտնում է, վոր նա հարուժյուն է առել «շաքաթվա առաջին որվա լուսարացին», այսինքն՝ կիրակի լուսարացին: Ուրբաթ յերեկոյից մինչև կիրակի առավոտ վոչ թե յերեք որ և յերեք գիշեր է անցնում, այլ մեկուկեսից պակաս: Բա թնչ է նշանակում այս խառնաշփոթությունը:

**ՔՐԻՍՏՈՍ ԻՐՈՔ ՉԻ ՅԵՂԵԼ. ՆՐԱ ՄԱՍԻՆ ՏԵՐՏԵ-  
ՐԱԿԱՆ ԲՈՂՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈՉԱՎՈՐ  
ՍՏԵՐ ԵՆ.**

Հետաքրքրական է նշել այն, վոր Քրիստոսի բոլոր կենսագրությունները միայն այն զրոզներն ունեն, վորոնք նրա գոյությանը հավատում ելին, վորոնք հավատի համար ընդունում ելին այն բոլորը, ինչ վոր լսում ելին նրա մասին, վորովհետև հնարավորություն չունեցին ստուգելու բոլոր այդ լուրերն ու գիտականորեն հաստատելու Քրիստոսի գոյության պատմական փաստը: Բայց պատմությունն ու հավատը չերկու բոլորովին տարբեր բաներ են, պատմաբանին փաստեր գիտենալ է պետք, հավատի համար լուրեր ընդունելու իրավունք չունի: Կամ թե հավատը նրա ինչին է: Ինչ կարիք կա հավատալու մի վորևե

պատմական մարդու գոյութիւն, յերբ նրա գոյութիւն փաստը բոլորն ել ընդունում են: Կարիք կա, արդյոք, որինակ, հավատալու ամբողջ աշխարհին հայտնի մի վորեւ սպիտակ գվարդիական վարձկանի, բանդիտի, խավարամոլի, հնազանդեցրած ավերիչի և «սրբազնագույն» մուկերոն պատիարք Տիխոնին: Կարելի յե ասել, վոր վոչ մի ազնիվ մարդ այնպիսի գծուծ մարդու, այնպիսի ստոր կեղծավորի ու կեղտոտ ավազակի, ինչպիսին Տիխոնն է, մի մազաչափ անգամ նրա վոչ մի խոսքին չի հավատա, բայց վոր նա աշխարհում գոյութիւն ունի, կարելի չե, արդյոք ժխտել այդ: Պատմաբանը չի կարող հարցն այդպես ղենել, պատրիարք Տիխոնի գոյութիւնը յես ընդունում եմ, վորովհետև նա լավ մարդ է: Վոչ, պատմաբանը հարցն այլ կերպ է ղնում: Ով ել ուզում է՝ նա լինի, ազնիվ մարդ, թե պիղծ, բայց չեթե իրոք գոյութիւն ունի, ապա յես նրա գոյութիւն փաստը հաստատում եմ:

Մեզ համար կարևոր չի այն, թե ավետարանիչները Քրիստոսին ինչի տեղ եյին ընդունում, մեզ համար կարևոր չի գիտենալ այն, թե վորքան նրանց սերը ղեպի Քրիստոս մեծ է չեղել: Մեզ կարևոր է այն իմանալ, թե, իսկապես, Քրիստոս չեղել է, թե՞ հավատի համար ընդունած՝ մարդկային Փանտաղիայի ստեղծած մի լեզենդ է այդ:

Ենվ չեթե պատմաբանների աշխատութիւններին ղիմելու լինենք, ստիպված պիտի լինենք ասելու, վոր նրանցից վոչ մեկը Քրիստոսի գոյութիւնը փաստ չի ընդունում: Իսկ այդ նշանակում է, վոր տվյալ ղեպքում, մենք գործ ունենք մի հնարովի բանի հետ: Պատմութիւնը գործոնների (Փակտոր) մի բնապատ

և, և այն բոլորը, ինչ այդ բնագավառից դուրս և, լե-  
 գենդ և, հեքլաթ և, Ֆանտադիա չե, հնարովի բան  
 և Պատմությունը Գրիստոս չի ճանաչում: Նա վոչ թե  
 կյանքից և վերցրված, այլ մարդկային գլխից: 74 թը-  
 վականին Հովսեփ Ֆլավիոսը, վոր ինքը հրյա չեր ու  
 Յերուսաղեմի բնակիչ, 37 թվի ծնված, գրում և հոռ-  
 մայեցիները հետ տեղի ունեցած «հրեյական պատե-  
 րազմի պատմությունը», վորը մեր թվականի 7-րդ տա-  
 րին վերջացավ՝ Հրեաստանի պարտությամբ ու հոռ-  
 մեյական կայսրի իշխանության հնազանդեցնելով այն:  
 Հովսեփ Ֆլավիոսն իր այդ աշխատության մեջ ժա-  
 մանակի հենց այն շրջանն և շոշափում, վորին լեգեն-  
 դը վերագրում և Հիսուսի կյանքը: Չափազանց ման-  
 րամասնություններով և նկարագրում նա բոլոր այն  
 անցքերը, վորոնք այն ժամանակ Հրեյաստանում են  
 տեղի ունեցել: Նա հիշատակում և բոլոր գործող գըլ-  
 խավոր անձանց, հոռմեյական թագավորներին, գո-  
 րավարներին ու փոխարքաներին, վորոնք Հրեյաստա-  
 նի քաղաքական անկախությունը կորցրած որից՝ հոռ-  
 մեյացոց արքունիքի կողմից նշանակված եյին չեղել  
 այնտեղ: Նա ի միջի այլոց, Պիղատոսին ել և հիշա-  
 տակում, բաց Գրիստոսի մասին վոչ մի խոսք չի ա-  
 սում: 94 թվին Ֆլավիոսը ավարտում և իր մյուս,  
 «Հրեական հնություններ» վերնագրով, բազմահատոր  
 պատմական աշխատությունը: Այստեղ ել Գրիստոսի  
 մասին վոչ մի խոսք: Այս հանգամանքի վրա ուշադը-  
 րություն և դարձնում քրիստոնյա պատմաբան Որի-  
 գինեսը, վորը Գրիստոսի վերաբերյալ վորևե տեղեկու-  
 թյուններ չլինելու փաստից իսկ այն գալթացնող յեզ-  
 րակացությունն և անում, թե Ֆլավիոսը, ըստ յերի-

վույթին, Քրիստոսին Մեսիա չի համարում: Որիզինեսը մեռել է 254 թվին: Այստեղից պարզ է, վոր նրա կենդանի ժամանակ, իսկ այս նշանակում է՝ մինչև III դարու կեսը, Ֆլավիոսի աշխատությունների մեջ Քրիստոսի մասին վոչ մի հիշատակություն չի չեղել: Այդ բանը խիստ զայրացնում էր քրիստոնյաներին: Յեվ ահա III դարու կեսից սկսում են յերևան գալ Ֆլավիոսի աշխատությունների որինակները, ուր ճիշտ է, շատ քիչ խոսքերով, բայց արդեն տեղեկություններ կային Քրիստոսի, նրա հրաշքների և հարության մասին: Ակներև է, վոր յեթե նման որինակներ ել գրտնված են չեղել Ֆլավիոսի մահից 200 տարի հետո, ապա Ֆլավիոսն ինքն այստեղ գործ չունի: Ակներև է, վոր բոլորը քրիստոնյա գրիչների (արտագրող) գործն է այդ: Քո ձեռը քո իշխանն է, ի՞նչ ծանր բան էր բարեպաշտ քրիստոնիայի համար, վոր աստծու անունը հռչակելու համար իրեն կողմից մի հնգից-տաս տող ավելացներ: Բայց ամբողջ դժբախտությունն այն է, վոր կռապաշտական գրքերում քրիստոնեյական՝ այդ թքով կպցրածները այդ գրքերի մեջ ցցված են այնպես, ինչպես «հատն» աչքի վրա, և ինչպես ասում են սև վարտիկի վրա սպիտակ կարկատանը հասկանում են: Ֆլավիոսը դեյիստ (աստծու գոյություն ընդունող) էր: Դեյիզմն աստվածաբանական այն ուղղությունն է, վորի կողմնակիցները ժխտում են մարդն աստված դառնալու հնարավորությունը: Այդպես կարճ էր, արդյոք, նման համոզմունքների տեր Ֆլավիոսը Քրիստոսին աստծու հատկություններ վերագրելու հավատալ մեռելներից նրա հարություն աննելու հնարավորությանը: Այդ այնքան է հնարավոր, վոր-

քան վոր պատրիարք Տրխոնը կոմսունիդմը տարածե-  
լու գաղափարի անհրաժեշտութիան տեսակետի վրա  
կանգնեք:

Նկարագրելով Քրիստոսի խաչելութիան չարչա-  
րանքները, Մատթեվոսն ասում է՝ «խավար յեղավ  
ամբողջ չերկրի վրա ժամը վեցից մինչև ժամը 9-ը»:  
(Մատթեվոս 26-րդ, 45), իսկ հետո, յերբ Հիսուս շոունչը  
փչեց... «յերկիրը ցնցվեց ու քարերը պատռվեցին»  
(Մատթեվոս 27-րդ, 51): Բայց թե ինչու ժամանակա-  
կից մարդկանցից և վոչ մեկը վոչ միայն չի հաստա-  
տում այդ, այլ ինչպես անգլիացի պատմաբան Հիբ-  
բունն է ընդգծում այդ, «ժամանակակից մարդիկ...  
ըստ յերևույթին, բոլորովին չեն նկատել այդ փոփո-  
խութիւնները... ֆիզիկական աշխարհակարգում:  
(«Հոռոմեական կայսրութիան կործանման ու անկ-  
ման պատմութիւն»): Այս բոլորը հոռոմեացի գիտնա-  
կան Պլինիոս ավագի կենդանի ժամանակ է տեղի ու-  
նեցել, վորի «բնապատմութիան» մեջ խավարումների  
մասին ամբողջ գլուխներ կան, սակայն, այն խավա-  
րումի մասին, վորն «ամբողջ չերկրի վրա» յե  
յեղել, Պլինիոսը «մի խոսք ելա չի ասում» (Հիբբոն,  
նուէն տեղը): Վոչ միայն ամբողջ չերկրի վրա, այլև  
Պաղեստինում ել վոչ մի խավարում չի յեղել: Ավե-  
տարանիչների յերևակայութիան մեջ է միայն յեղել  
այն: Ավետարանիչները խավարումին պինդ հավա-  
տում եյին, բայց ել ավելի պինդ է պարզվել այն  
փաստը, վոր վոչ մեկը և վոչ մի խավարում չի տե-  
սել, հենց այդ ել նշանակում է, վոր, իրոք, խավա-  
րում չի յեղել: Յեթե այդ այդպես է, ուրեմն Քրիս-

տոսի ամբողջ աչդ պատմութիւնը մեկն ու մեկը հը-  
նարիւ եւ Արդար թվ ե աչդ: Յեզ ինչ՞ու համար:

ՌԻՄ ՅեՎ ԻՆՉՈՒ Է ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ՅԵՂԵՆ, ՔՐԻՍ-  
ՏՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶՐՈՒՅՏԸ

Քրիստոնեական գաղափարները մարդկանց գը-  
խում ծագել են ճորատիրական կուլտուրայի խա-  
վար շրջանում: Բայց ինչ՞ով պետք ե բացատրել այն,  
վոր կապիտալիստական յերկիրների ժամանակակից  
կառավարիչները, այն դասակարգերի ներկայացուցիչ-  
ները, վստօնք իշխում են բուրժուական կարգերում,  
մեր որերում վոչ պակաս ուժերով են կպչում իր ո-  
րերն ապրած այդ գաղափարի փշրանքներին: Ի՞նչ  
ընդհանուր նման բան կա, մեկ կողմից, ճորտութիւն,  
մարդու կողմից մարդու վրա բացարձակ դաժան այդ  
բռնութիւն, ու մյուս կողմից, կապիտալիստական հա-  
սարակարգի մեջ, ուր, բացի իր սեպհական Ֆիդիքա-  
կան ուժից, վոչինչ չունեցող ամենավերջին չքավորը,  
պրոլետարիատը պետութիւն ազատ քաղաքացին ե  
հանդիսանում, ուր նույնիսկ շահագործումը հենց զո-  
հի իրեն համաձայնութիւնք ե կատարվում: Մակայն,  
ինչքան ել, մեծ լինի տարբերութիւնը մեկ ե մյուս  
ռեժիմի միջև, այնուամենայնիւ, տիրող դասակարգե-  
րի կացութիւն մեջ, թե մեկ ե թե մյուս դեպքում,  
ելի մի ընդհանուր բան կար: Յերկու ռեժիմն ել սը-  
վինների վրա ելին նստած: Ճորտերի ապստամբու-  
թիւնն ել ճիշտ այնպես, ինչպես ե մեր որերի ազատ  
պրոլետարների սպստամբութիւնը, հիմքից ցնցեցին  
պետական վողջ սիստեմը: Վոչ թե դաժանութիւն հե-  
տևանքով; վոչ թե բռնութիւն ծարավից են ժամանա-

կազմից պրոֆեսորները ապստամբութիւններ անում, այլ սեպհականատերերի կատաղի դիմադրութիւնը միայն, դեպի աշխատավորութիւնն ունեցած կննդանարանական կուչր. ատելութիւնը միայն, իրենց մտտալուտ անկումն զգացող պարազիտական դասակարգերի կատաղի գազազութիւնն են ստիպում մարտնչող բանվորներին դիմելու անողոք արշան տերրորին: Ժամանակակից հեղափոխութիւնների նպատակը ամենին վրիժառութիւնն է, այլ այն գիտակցութիւնն է, վոր ամբողջ մարդկութիւնն անկումից, բուրժուական պայմաններում քայքայվիլուց ու այլասեղանից փրկողը միմիայն բանվոր դասակարգն է: Պըրտլետարիտաը գիտակցում է կապիտալի իշխանութիւն խորթակման անխուսափելիութիւնը, գիտակցում է, վոր իր ձեռքում է միայն գտնվում մարդկութեան ամբողջ բախար, վոր մենակ ինքը միայն կարող է հին սեպհականատիրական կարգերը տապալելու գնք դառնալ, ուստի անհրաժեշտ է համարում ամենավրժառական պայքար մղելը—պայքար մինչև հաղթութիւն, ինչ գնով էլ լինի:

Հռոմի կայսրութեան որերի հին ստրուկը բոլորովին այլ վիճակում էր: Նա կարող էր կամ միմիայն հանդուրժել (տանել) իր մեջքի ծանրութիւնը, կամ վայր գցել իւր, բայց հասարակական զարգացման այն շրջանում իր սեպհական բախար վոչ իրենից էր կախված, վոչ էլ իր տիրոջից: Ում իշխանութիւնն էլ ուղում է լինել, տեխնիկայի իւր ցածր մակարդակի ժամանակ վոչ մեկը նրա համար կուշտ գոյութիւն ապահովել չէր կարող: Հազարավոր ստրուկների բաժիններից մեն-մենակ մի պատրիկը կարող էր, իհարկե

իրեն բավականաչափ յուղալի բաժին պոկել: Պարազիտների բանակի առանձին միավորների ապրելու իրավունքը ձեռք ե բերվում մարդկանց սովից ուժասպաս անելու, անմարդավայել ծանր աշխատանքի տանջանքով ու նրանց կյանքերը հազարներով կարճելու գնով: Ճորտի առաջ յերկու հնարավորութուն ելին միայն ծառայած. կամ վոչնչանալ, հին ուժիմը տանելով, կամ վոչնչանալ՝ թոթափելով այն: Միևնույն չէր, արդյոք, նրա համար, թե ինչ հանգամանքներում պիտի սովամահ սատկի—ճորտի լուծն իր վզին, արդյոք, թե՛ իրեն ազատ յերկրի ազատ քաղաքացի դալով: Նրա դասակարգային ատելութունը, նրա թշնամութունը, դեպի իր ճշողները լելք չուներ: Այնքան ավելի սաստիկ եր նրա մեջ գրգռվում՝ դատաստան անելու ծարավը, վրիժառության դպացմունքին լելք գտնելու դաժանության կուշր տարերքը սանձահարելու ձգտումը:

Միևնույն եր նաև պատրիկի համար, թե այսորվա սարուկն ինչ տրամադրությամբ նրա ձեռքերը հետևել կկապի, դեմքի ինչ արտահայտությամբ նա արխատկրատի ազնիվ վզին ձիգ կտա թոկի հանգույցը կամ մազոտ ձեռքերով դեն կշարտի նրա սրբազան գլուխն ուսերից: Հին Հոռմի հնացած ուժիմն էլ, ինչպես և մեր որերի բուրժուական ուժիմը, կատարվող փաստի առաջ եր զգում իրեն՝ սասանումը մոտ և: Մահն արդեն կանգնած եր հին կարգերի թիկունքում և իր սառը ձեռքերը նրա ուսերին եր դրել: «Ո՞վ գիտի, գուցե մենք եգուց ել սաղ չըլինենք», անցնում են նրա գլխով զարհուրելի մտքերը: Թե ինչ կլինի նրանից հետո, այդ կարևոր չի: Կապատագրի՞, արդյոք,

պրոլետարիատը մարդկությունը, կիրկի՞, արդյոք, կուլտուրան, կխեղդվի՞, արդյոք, ստրուկների ապրատամբությունն իրենց սեփական արյան մեջ ու կոչընչանամ հին ռեփմի փլատակների տակ, այսոր իրենց մոտավուտ անկումն զգացող՝ իշխող դասակարգերի ինչքանն ե: Բախտավոր կլինի՞ն, արդյոք, նրանցից հետո ապրող մարդիկ, թե՞ արյուն-արտասուք կթափեն, թե մեկ և թե մյուս դեպքում. «մենք վոչնչանալու լինք» «ճար չունինք»: «Ո՛ր, ինչ կըլլեր, մի փրկիչը գար»: Այսպես հլին մտածում մարդիկ այն ժամանակ: Հենց այդպես ել այժմ բուրժուազիան ե մտածում: Ել ինչի՞ վրա հույս դնենք: Մեր փրկությունն ել վճրտեղ փրնտունք: Ինչպես կանխենք անխուսափելի անկումը: Վճնց դուրս հանենք զլուխներից հեղափոխությունը: Վճնց մեզնից հեռացնենք կատաղի ալիքները: Ինչպես անենք, վոր սպառնացող ամպն ուրիշ կողմով անցնի: Վճնց շեղենք ճանապարհից հեղափոխությունը, նրան ուրիշ ճանապարհով ուղարկենք: Ի՞նչով նստացնենք դրա փողին: Սովը, կարիքն ու անիրավությունն են հեղափոխությունը ծառայել: Ե՛, ի՞նչ անենք, կերակրենք բոլոր քաղցածներին, դադարե՞նք նրանց Ֆաբրիկաներում աշխատանքներով ծանրաբեռնելուց, մենք, բուրժուականերս կանգնենք նրանց տեղը, թե՞ մեր իրավունքները նրանց հետ կիսենք, իրավունք տանք նրանց տնորինելու ունեվորների բախտն այնպես, ինչպես ունեւորներն են տնորինում աղքատների բախտը: Ի հարկե, նրանցից վոչ մեկը չի համաձայնի դրան: Իսկ չի՞ կարելի, արդյոք, քաղցածներին առանց հացի հանգստացնել: Ձի՞ կարելի, արդյոք նվազեցնել դեպի զրկանքներն ունեցած նրանց զգայնությունը:

Ձի կարելի, արդյոք, հաշտեցնել նրանց անարդարութեան հետ, առանց իշխանութիւնը բաժանելուն: Ղի մեկու: Իսկ կարող եւ պատահել, վոր հայտնվի ելի մի այնպիսի փրկիչ, վորը կարողանա անհրաժեշտ հրաշք գործել:

ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ԳՈՐԾԻՔ Ե ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՁԵՌՔԻՆ, ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԹԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Միրելի ժողովուրդ — փսփըսում են տերտերները բուրժուաներին, — այն, ինչ վոր փնտրում եք, վաղուց արդեն գտնված է: Մենակ հավատն է, վոր հրաշքներ ե գործում, իսկ հավատը մարդկային ուղեղների մեջ մտցնելու մենաշնորհը մեզ ե պատկանում: Կրօնական ինչ պաղափար, ում գլուխն ասես՝ մենք ճիտում ենք: Կորած որի հետեից մի ընկնեք. մեր քրիստոնեցու-թիւնը պրոլետարների համար հրաշալի ծրագիր ե (ի հարկե, վնչ նրանց տեսակետից): Ախր մեր ինչի՞ն ե նրանց կարծիքը, ե, յիբբ մեր ու ձեր ձեռքերում ամեն տեսակի միջոցներ կան, վորպեսզի գորով նրանց վզին փաթաթենք մեր բարոյագիտութիւնն ու մեր համոզմունքը. ընտանիքը, դպրոցը, յեկեղեցին, ինքը պետութիւնը, բուրժուական գիտութիւնը, արվեստը, մամուլը, վոստիկանութիւնը, զորքը... Ել ի՞նչ եք ուզում: Թող յերեխաները մոր կաթի հետ միասին ծծեն կրօնը, թող մեր դպրոցը յերեխայի մտքերի առաջին շողերի հետ միատիկական մամուլի մեջ սեղմի նրա ուղեղը, ահաբեկելով մանկական խելքը կրօնական կեղեի մղձավանջներով. թող համառը սարկացնի իրեն՝ կյանքը չճաշակած՝ զորացող սերնդի մատաղ ուղեղներն ու գե-

րի տանի նրանց կրօնական ֆանատիզմին, թող չեկեղեցիին իր ազոթքներով որհնի ու դաստիարակի վոստիկանակա՛ն սուլիչն ու մտրակը, թող մեր բանդերի դահիճներն իրենք «Վեցթեւյան սերովբեներ պատկերացնեն իրենց, իսկ քաղաքամասերի խուզարկուները՝ սրատես քերովբեներ, թող գիտությունն «անհողդողդ» հաշտարարի գոյությունն ունեցող կարգերը, իսկ ամեն տեսակի սոցիալիզմներ՝ քրեյականությունն ու շառլատանությունն, թող մեր գրականագետներն ու բանաստեղծներն այնպիսի մարդասեր արյունարբուների ձեռքերում զոհվել յերգին, ինչպիսին մենք ենք, իսկ մեր թատրոնները ձրիակերների հրեշտակային առաքինությունն պատկերացնեն: Մի՛թե դուք չգիտեք, վոր բանվորի համար չկա այնպիսի մի կացություն, վորի հետ նրան չկարողանար հաշտեցնել քրիստոնեյությունը: Մի՛թե դուք չգիտեք, վոր չկա այնպիսի մի գարշելի բան, վորի առջ կրօնը չստիպե պրոլետարին գորով զգայու: Դուք ուզում եք, վոր քաղցածը ձեզնից հաց չպահանջի: Կարելի չե, խնդրեմ: Ահավասիկ մեր ծրագրի | կետը. «վոչ միայն հացիվ կեցցե մարդ». դուք ուզում եք, վոր նա չապստամբի՞ ձեր ճնշումների դեմ, հրես, ահավասիկ, տեսեք. № 2 «ով համբերեսցե իսպառ՝ նա կեցցե»: Կատակի ու միանգամից հոգու հանգստություն կզգա: Ել ի՞նչ եք ուզում: Հա՛: Վորպեսզի նա չձգտի իշխանության:

Կուզե՞ք, հռչակավոր № 3-ն ասեմ. «ժողովուրդների իշխաններն իշխում են նրանց վրա և թագավորները՝ թագավորում են նրանց վրա. բայց ձեր մեջ այդպես չլինի» (Մատթեվաս XX 25), թող ձեր մեջ այդ չլինի: Ամեն մեկինն իրեն տվեք. կայսրինը, կայ-

որին, աստծունն՝ աստծուն, իսկ պրոլետարին... Ասենք դրա համար խոսելն ենքան ել չարժի:

Հաշտությո՞ւն: Չե վոր աշխարհում, բացի մերից, քրիստոնյակա՞նից, չկա այնպիսի մի ծրագիր, վորն այնպես լրիվ ու աջնպես կատարչալ կերպով համաձայնություններ ու հաշտություններ կիրառեր: Հիմա կասե՞ք՝ բա մենչեթիկները... Տո՛ դե նրանց ի՞նչ կա ե: Կարող ե՛ հարցնեք, թե ի՞նչ տարբերություն կա մեր ու մենչեթիկների մեջ: Ի՞նչ կա, ենքան ե, վոր նրանք ջրշունի պես են խուզվում, իսկ մենք՝ այդրի: Նրանք իրանցից ի՞նչ ունեն, եև, — սակից գլուխ բանագողներ են: Ի՞նչ կա-չկա՝ մեզնից են վերցրել: Հլա մի եկեք ավետարանը բաց անենք՝ տեսեք թե ի՞նչ կա մեջը — ել հավասարություն, ել չեղրայրություն, ել կոմմունիզմ: Դուք հենց ինչ կա-չկա՝ «գործք առաքելոցից» եք վերցնում: Պրոլետարիատի դիկտատուրան ել... «Յեվ չեղիցին հետինք՝ առաջինք»... Հլա մի կողմից ել՝ զինված ապրստամբությունը .. «Վոչ թե խաղաղություն եմ բերել, այլ՝ սուր»... Եդ ի՞նչ միտք եք անում, ե: Չլլի թե՛ մաքներիցդ անցնում ե գնաք ու բանվորների գըլուխը թուցնեք: Մլխինքն թե՛ ասեք դուք ինչ ունեք, գնացեք սոված սատկեցիք, թե չե՛ հենց փորձել եք բունտ անելու, շան ու գիլի բաժին կանենք ձեզ: Ախր բա եդ մեր որով ըսկի ըլլելո՞ւ բան ա: Կամ թե չե՛ մաքներիդ դրել եք տեղի-անտեղի նրանց գիջում անեք: Կանե՞ք, կանե՞ք, անպեր — հլա մի փորձեք եդ արջի ախորժակը բանալ: Մեր ժամանակը փչացել ա: Թե սուտ ես խոսում — բերնիդ են գալիս, թե ուղիղ ես խոսում — վաչն եկավ՝ քեզ տարավ: Հիմա պիտի սովորեք սուտն ըզորդին մերան անել, սուտն ել, ըզորդն

ել չափով ասել, ալ հենց եղել կըլլի ես «այամբն» (ժամանակի) քրիստոնէյութուն, վորն ամենից շատ ազգատուղբուտին ե պետք գալիս, ճիշտն ասած՝ նրանց աչքերին թող փչելու համար: Պրոլետարի իրեն կապը հենց իր վիզն ենք զցում: Ես աշխարհում պրոլետարիատին մենք բախտավորութուն չենք կարող խոստանալ: Ինչ՞ու: Վարովհետե ես աշխարհի բախտը նրան քիչ ես նա պըտի ասի, թե պապեց-պապ չես եմ տանջվել, չես ել պըտի բախտավորվեմ: Թե քիֆ ա քեֆ ա... Թե հեղափոխութուն ա — թող լավ ըլլի: Ա.ս քս տված սեվ փողները: Բաց պուք նրան ես պըտի ասեք, թե քանի կենդանի չես, ես աշխարհում քեզ համար ազատ ապրի: Են ժամանակ են ել կասի թե հիսուն տարին ի՞նչ ա, վոր նրա համար ի՞նչ հեղափոխութուն անեմ: Չարժի, զուր տեղը մեկ ել ինչ ձեռքներս կեղտոտացնենք: Ա՛յ, թե նրան վորտեղ պտի բռնել, հա՛: Տակը բուրժուալին, գլուխը՝ քեզ, դե՛ թո՛ր յերկինք, հնտեղ քեֆդ ինչ կուղի՛ արա՛, են ժամանակ նոր բուրժուալներն ել կկարեն: Նրանք մենակ ես աշխարհում որ կտանեն: Պրոլետարը լուծն իր վզին կզնի ու կասի «ամա թե խաբեցի ել կապիտալիստներին, հա՛: Բան չկա, մի քիչ կհամբերեմ — հո՛ ջանս գուրս չի գտ, համա են աշխարքում նրանք նախանձութունից պտի յեղունգները կըծեն ու տրտքեն: Լազնիթ»:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋ ՅԵԿԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԼԵԳԵՆԴԸ

«Յեթե աստված գոյութուն չունենար, անհրաժեշտ կլիներ հնարել նրան», — ասում ե վոլտերը:  
Բուրժուազիային չվիճակվեց հնարել աստծուն —

իշխանութիւն գլուխ անցնելով, պատրաստի ստացավ նրան

Բուրժուազիային վիճակված եր միայն աստծու համար նոր տարազ հնարել, — փոխել նրա արտաքինը — ծերունու փոխարեն կտալե շապիկ հագցնել ու զուղու վարտիք, իսկ թագի փոխարեն՝ փշե պսակ, գայլստնի (արքայական գավազան) փոխարեն՝ գոտիկը խրած կացին. Ահա և քեզ Քրիստոսը՝ ինչպես խառատ Մարտիրոսը: Դե՛ Բուրժուան սիրում ե իրեն դիմոկրատիկ ցույց տալ ու նա ստիպված յեղավ աստծու նոր կերպարանք ստեղծել, վոր իրեն գրավչությամբ կարողանար հուզել հասարակ ժողովրդի սրտերը, ստիպեր նրան ցնցվել զգացմունքի բռնկումով ու նրան դեպի իրեն քաշեր: Աստծու այդ նոր պատկեր՝ աստվածորդու, պանդխտութիւն գնացող հույսնորդի հյուան աստծու պատկերը յեղավ:

Յեթե մինչ այդ, Քրիստոսի մասին հազարավոր բերանների հեքյաթներ չհորինելին, Բուրժուազիան ինքն ստիպված պիտի լինիր հնարել: Պատմութունը Քրիստոս-մրիստոս չգիտի, բայց պահանջն առաջարկ ե ծնում, ու բերնի-բերան, յերկրի-յերկիր, սերնդեսիրունդ նոր աստծու լեզնդն աշխարհը բռնում ե: Ամեն անգամ, յերբ մարդիկ կյանքի անտանելի ծանր պայմանների մեջ են ընկնում ու ստեղծված կացությունից դուրս գալու հնար չեն գտնում, կյանքի ծարավը նրանց մեջ իրենց ծանր վիճակը հրաշքով բարելավելու հույս ե արթնացնում — սկսում են ինչ վոր խորհրդավոր Մեսիայի մասին յերազել, սկսում են՝ նոր աստծու, տառապյալների, վաստակյալների և ծանորաբեռնվածների պաշտպանին ու փրկչին ակնկալել:

Այդ դադափարը, «փրկչի» դադափարը, պատմութեան ընթացքում մի անգամ չի, վոր մթագնել ե մարդկանց գիտակցութեանը, մի անգամ չի, վոր նրանց սրտերը հուսերով ե թեւովորվել ու նրանց դեպի մեծ հերոսութեաններ մղել: Հեծելով ստրկութեան ճիրաններում ու վոչ մի յելք չգտնելով, իր իդեալներն իրագործելու հասար տանջված մարդկութեանը կյանքից դուրս պայմաններ ե փնտռում, — յերբեմն մարդկանց այնպես ե թվում, թե պատմութեան որեքները, մարդկանց հարարբերութեաններն ու նրանց մղած պաշարը, այդ բոլորն իրական չեն, դեռևս իսկական, լրիվ կյանք չի, վոր իսկական կյանքը հետո յե գալու, վոր այնպիսի յիկն ե գալու վոր վոչ են ե՝ կախարդ ասիս, վոչ են ե՝ մարգարե, վոչ ել ուղղակի՝ հերոս, վոր կյանքը կվերաշինի, ինչպես պետքն ե, կիրականացնի այն ամենն, ինչ վոր ճշմարիտ ե ե, հաստակելով ղարին, նա կփոխի պատմութեան բոլոր հին որեքները, կփոխի կյանքի ընթացքը, կտապալի ու վոտնակոխ կանի չարը. նա հիվանդներին վոտքի կկանգնեցնի, լացողների արցունքները կսրբի, ալքիներին կսփոփի, վորբերին իր մոտ կքերի ու կը գուրգուրի, իր դաշտութով կոչնչացնի բոլոր ապորինութեան գործողներին, ու մարդկանց փրկութեան ճանապարհի վրա կը դնի:

«Պճնվիր, ցնծա ե ուրախ յեղիր Յերուսաղեմ»:  
«Ի սեր Սիոնի չեմ լսի, — բացազանչում ե մարգարեն,  
— ե ի սեր Յերուսաղեմի չեմ հանգստանա, մինչև վոր լուսի պես չծաղի նրա ճշմարտութեանը» (Յեսայի XII, 1)... «Անցեք, անցե՛ք դարպասներով, ժողովրդի համար ճանապարհ պատրաստեցե՛ք: Ուղի հարթեցեք, քարերը մաքրեցեք, ժողովրդի համար դրոշակ բարձրաց-

րեք... Ասացեք դասերք Միոյնի՛ ահա զա փրկիչն քո» (Յեսայի LXII 10—11): Այդ որերոււմ բոլոր «նախկին վշտերը կմոռացվեն», վորովհետև տերն այդպես է ասում. այժմ «չես նոր յերկինք և նոր աշխարհ հմ ստեղծում... Յես կստեղծեմ Յերուսաղեմը ցնծությամբ և նրա ժողովուրդը՝ բերկրանքով... Իսկ դուք հավիտյան կցնծաք և կուրախանաք»: Այսորվանից «այնտեղ ալլես շին լինի» վոչ «ծեր», վոչ՝ «մանուկ» և... մարդիկ ալլես շին «չարչարվի» ու ցավի համար յերեսաներ շին ծնի, գալն ու գառը միասին կարածան և առյուծը... խոտ կուտի, խիկ մոխիրը ոճի կերակուր կլինի» (Յեսայի LXV, 18—25):

Այն ժամանակ կբացվեն կուրերի աչքերը և խուլերը կլսեն, կաղերը չեղջերվի պես վեր կթռչեն ու համբերը լեզու կառնեն (Յեսայի XXXV, 5—6): Յեվ իրենց սրերը խոփեր կձուլին և նիզակները՝ մանգաղներ» (Յեսայի II № 34): Չարը կխափանվի, կռիվը կվերջանա, «պատերազմ» բառը մարդիկ կմոռանան:

Յերջանկությունը, բավականությունը, ցնծությունն ու խաղաղությունը կբռնի ամբողջ աշխարհը: Վոմանք բանն այսպես հչին պատկերացնում, խիկ ուրիշները՝ ալլ բան հչին ասում,—«դուք փրկչի՞ն եք սպասում»: Դուք նրա գալձեն եք սպասում: Չե՞ վոր նա արդեն չեկել է: Ով է ժխտում այդ, նա հենց իրեն Մեծիային է ժխտում:

Համեստ ու կամայուկ, կողմնակի ճանապարհով, աշխատելով աննկատելի մնալ, նա չեկել, ներկայացել էր ընտրյալներին ու կոչածներին ու խոցված սրտով յես դարձել: Նա, ճիշտ և խոստացել է՝ մեծ համբավով, թողության հրե սրով գալ, «դատել կենդանի մնացածներին

ու մեռածներին», և վալ նրան, ով փրկչի տաղին գալուն նրա մեջ իր աստծուն չի ճանաչել: Յեզ ալսպես, մեկն ասում էր, թե աստծու թագավորութունը չերկրի վրա չէ, և վոր փրկիչն այնտեղից, ամպերի շտեղծից իր ընտրյալների գրկում պիտի իջնի չերկրի վրա, վոմանք էլ ասում էյին, թե Մեսիայի թագավորութունը չերկնքում է, և վոր բոլոր մեռելներն ու կենդանի մնացածները դատաստանի որը, Գաբրիելի փողը փչելիս, այնտեղ պիտի գնան: Վերջապես, կային նաև այնպիսիները, վորոնք ասում էյին թե աստծու թագավորութունը վոչ չերկնքումն է, վոչ էլ չերկրի վրա, վոր նա «մեր մեջ է» խորը և խորը, միզապարկից քիչ-քիչ վերև: Ամեն մեկն իր գիտացածի պես էր գործը հասկանում: Հովհան ավետարանիչն իր «հայտնության» մեջ գուշակել է, վոր մեռելներից հարություն պիտի առնեն բոլոր այն արդարները, վորոնք դուրս կգան չերկրի ընդեքներից, «կկենդանանան» ու Քրիստոսի հետ հազար տարի կթագավորեն» (Հայտնություն XX, 4) իսկ մեղավորների համար, — ասել է նա, — կգա չերկրորդ հարությունը, սակայն, «մինչև հազար տարին չլրանա», անորեմները չեն կենդանանա (Հայտնություն XX, 5):

Այսպիսի հայտնություններ էլ Յիզրասն ունի (զիրք 4) ու մեկ էլ ինչ վոր հրեյական մարգարե Բարուքը: Ամեն մեկը գործն իր խելքը կտրածին պես էր պատկերացնում, բայց բոլորն էլ միանման էյին հավատում Մեսիայի գալուն ու լարված սպասում նրան: Ամբողջ մթնոլորտը «փրկչի» գաղափարներով էր հագեցված: Անաքելական ավետարաններն սշխարհ գալուց մի քանի հարյուր տարի առաջ «փրկիչ» բառը

«մարդկանց բերանից դուրս չեր գալիս»: «Փրկչին» վոչ միայն սպասում եյին, այլ ամեմ մեկին, ով լավ բաժնի համար քաջալերվում էր կովելու, քրիստոս եյին հայտարարում, յերբացերին՝ Մեսիա, վար նշանակում էր՝ քաջ, ավելի ճիշտ՝ ոճյալ, այսինքն այնպիսի մի մարդ, վոր կարծես թե կենդանի-կենդանի՝ հանգուցյալի պես իրեն ոճել է,— անուշահոտ յուղերով, վորովհետև իրեն համարում է զոհվելու դատապարտված ու իր հոգին դնում է մերձավորների փրկութեան համար:

Հովսեփ Ֆլավիոսի որով այդպիսի մեսիաներ շատ կային: Նրանց կողմից կազմակերպված ապստամբութունները տեղի յեն ունենում անդադար, անխտիր մինչև նոր թվականի || հարյուրամյակի վերջը: Գալիլիացի ու փախստական ստրուկների մեջ առաջին ապստամբութունը բարձրացնում է Գալիլիացի Համամի «Հավլոնիտ» քաղաքի ծնունդ, Հուդա անունով քրիստոսը, վոր մահապատժի յենթարկված (հին թվականի 47-րդ տարում) ավազակ Յեզեկիայի վորդին իր «զելոտների» (նախանձախնդիրների) կուսակցութեան պարագլխի, վորոնց ղեկավար շրջաններում արհամարանքով «ավազակներ» եյին ասում: Այդ ապստամբութունը տեղի յե ունեցել Քրիստոսի ծննդից 4 տարի առաջ, Հերովդես թագավորի վերջին հիվանդութեան ժամանակ: Հուդայի հետ միասին ապստամբութեանը մասնակցում է փարիսեցի Սադոկը: Ապստամբութունը հաջողութուն չի ունենում, արյան մեջ է խեղդվում, ու 2000 հրեյա խաչ են հանվում: Ասում եյին, վոր մահապատժի յենթարկվածների մեջ ինչ վոր մի մարդարե չե յեղել, և ժողովրդի խոսք ու զրույցը

եննց Հուլային իրեն ել մարգարե լեր հայտարարել ու նրա հիշատակն ինչ վոր սրբի հիշատակի պես հարգում եր:

Նոր թվականի 6-րդ տարում (ալսինքն՝ 10 տարուց հետո) առաջին «հարկային» վիճակագրութեան ժամանակ, վոր հոռոմեական իշխանութունն եր նախաձեռնել Հրեյաստանում, ապստամբութուն կրկնվեց, բռնկվելով նոր թափով: Այդ անցքերի արձագանքները «գործք առաքելոց» գրքի հետևյալ տողերն են հանդիսանում. «Հուլա Գալիլիացին իր յեակից բավականին շատ ժողովուրդ տարավ. բայց նա խորտակվեց և բոլոր նրանք, վոր լսել էին նրան, թոթափվեցին» (Գործք Առաքելոց V, 37): Միևնույն ժամանակ իրեն կողմնակից մեծ բանակով մի Գրիստոս ել Պարսկաստանում լերևաց: Այդ մարդը Սիմոնն եր, ալսինքն՝ «աստղի վորդի», Հերովդեսի նախկին ստրուկը, «վորը դրանից առաջ կախարդութուն եր անում ու ապշեցնում եր Սամարայի ժողովրդին, իրեն ինչ վոր մեծ ձևացնելով (Գործք առաքելոց VIII, 5):

Թադի դատախազութեան որով, 44-րդ տարում, ապրստամբութուն ե տեղի ունենում Թեվդաս «քրիստոսի» (Թեդայի) առաջնորդութեամբ, վորին հոռոմեյացիները իշխանութունը բռնում և գլխատում ե: «Գործք առաքելոցի մեջ նրա մասին հետևյալ տեղեկութունները կան.—սրանից քիչ առաջ Թեդասը լերևան յեկավ, իրեն ինչ վոր մեծ մարդ ձևացնելով ու մոտ 400 մարդ նրան կողմնակից դարձան, բայց նա սպանվեցավ ու բոլոր նրանք, ովքեր լսել էին նրան, ցիր ու ցան լեղան ու կորան-զնացին» (Գործք առաքելոց V, 36):

Նրանից հետո, Ֆելիկսի դատախազութեան որով

Յեզիպտոսոււմ մի նոր քրիստոս զուրս լեկավ, վորը 30000 կողմնակից եր հավաքելւ Հովսեփ Ֆլավիոսը նրան «մոգ» և «մարգարե» լե անվանում, բայց նա լի «Գործք առաքելոցի» (զլուխ XXI, 30) պես նրա անունը չի ասում: Վերջապես մի քրիստոս էլ կար, վոմն «Մամարացի», վորի անունն անհայտ մնաց:

Յեղել են նաև ուրիշ Քրիստոսներ: «Գործք Առաքելոցը» նրանց մեծ մասամբ «մարգարեներ» կամ «գուշակողներ» և անվանում: Դրանք են՝ Անտիոքցի Ագաբը (Գործք Առաքելոց XI, 26). «Բար-Հիսուս» հրեաստանցին (Գործք Առաքելոց XIII, 6), վորին ասում են նաև «Յեղիմա» (Գործք Առաքելոց XIII, 8) և Փիլիպոս «ապետարանչի» չորս աղջիկները (Գործք Առաքելոց XXI, 9):

Դրանք բոլորն էլ, ըստ լերևույթին, հեղափոխականորեն կյանքն առողջ հասկացող մարդիկ են լեղել, վորովհետև նրանք իրենք հրաշքների ոգնութչան չեյին դիմում և իրենց մղած պալքարի գործում զենքին էյին ապավինում, բայց, այնուամենայնիվ, նրանք վոչ բոլորն էյին իրենց աստծո առաքյալ, հերոս, մեսսիա քրիստոս համարում: Հրաշքներին հավատալն ու հենց առհասարակ, դուրահավատութլունն այդ դաբաշըջանի մարդկային խելքի հատկանշական գիծն էր: Այսպես Վեսպասիանոս կայսրի մասին հռոմայեցի պատմաբան Տացիտը պատմում է, վոր նա կույրերին թքով էր բժշկում: Յեվ ամեն տեսակի հիւք էլ կա կարծելու, վոր Մարկոս (VII, 33) և Հովհաննես (IX, 9) ավետարանիչները՝ Քրիստոսի կողմից այդ ձևով կուրութլունը բժշկելու իրենց յերևակայութլունները Տացիտից են փոխ առել: Ապոլլոն Տիանացու, ներոնի ժամանակակցի

մասին ասում ելին, վոր նա հանգուցյալներին մեռած տեղից հարուխլուն եր տալիս: Այդ բանը քրիստոնյաներն ել չեյին ժխտում:

Յեվ լեթե նրանք վիճում ել եյին, նրանց բոլոր առարկութլունները նրանով եր վերջանում, վոր Ապոլլոնն իր հրաշքները սատանայի զորութլունով ե կատարում: Ըստ յերևույթին, նրանք չեյին հասկանում այդ առարկութլունների ամբողջ կուրյոզը (քաժա խաբարը), ախր, լեթե սատանան աստծուց լավ ե հրաշք գործում, ել ինչ՞ու պիտի աստծուն հավատալ: Պատմաբանների վկայելով, հրաշք գործելու զորութլուն ունեյին նաև կալսրների մեծ մասը, վորոնց թվում, առաջին հերթին Մարկոս Ավրելիոսը, Ոգոստոսը և ուրիշները: Հրաշքները դադարեցին մի ինչ վոր առանձին բան լինելուց ու սովորական բան, սովորական ըզբաղմունք դարձան բոլոր նրանց համար, ովքեր փոքր ի շատե հավակնութլուն ունեյին «մեծ մարդու» դերի:

Գուրզն իր թանին թթու չի ասի: Այն, ինչ վոր առաքյալները Քրիստոսի մասին պատմում եյին, ժամանակակից մարդիկ նրա մեջ զարմանալու վոչինչ չեյին գտնում, նրանց համար այդ բանը հնի կրկնութլուն, շտկում եր, իսկ վոմանց համար ել նուզն իսկ կռապաշտական կախարդների ու մոգերի, հրեշների կեղծիք եր: Բայց ինչ՞ու ժողովրդական հերոս, լուրերին հայտնի պատմական խոշորագուշն դործիչներ թահագին մասսայի հետեից, վորոնց ժամանակակից մարդիկ հրաշագործներ եյին համարում, պատմութլունը առաջին տեղը համբերատար, խաղաղասեր, նահատակ Քրիստոսի մասլլ: անորոշ ու հակասութլուններ:

րով լի վարդապետութեան պատկերն և քաշել: Այննց  
 ան բանի համար, վոր Քրիստոսը միմիայն պատկեր  
 և, վոչ թե պատմական դեմք և, այլ տիրող դասակար-  
 դերի տեսակետից, վորոնք, ինչպես Մարքսն և նշում,  
 մեծ ընդունակութիւնն ունեն իրենց դադափարները  
 հենց իրենց կողմից ճնշվող դասակարգերի վզին փա-  
 թաթելու, փնտրած փրկչի տիպարը ցանկալի մի պատ-  
 կեր և:

**ՔՐԻՍՏՈՍԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՄՔ ԶԻ, ԱՅԼ ԸՆՇՈՂ ԴԱ-  
 ՍԱԿԱՐԳԵՐԻ ՓԱՅՓԱՅԱԾ ՊԱՏԿԵՐՆ ՈՒ ՅԵՐԵՎԱ-  
 ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Ե ՄԻԱՅՆ**

Ճնշված դասակարգերի ու կապիտալիստների հա-  
 րաբերութիւններու միջև խաղաղութիւնն տիրելը  
 կապիտալիստների ձեռքին դասակարգային իշխանու-  
 թեան համար մի միջոց, մի պայման և: Ահա թե ին-  
 չու չեր Քրիստոսի վարդապետութիւնը թանգ բուր-  
 ժուական հասարակարգի ցավասիրտ գիշատիչների հա-  
 մար: Յե՛վ յեթե, իրոք, յերբև և Քրիստոս կյանք ունե-  
 ցած լիներ, յեթե նա գոյութիւնն ունենար իբրև պատ-  
 մական վորոշ դեմք, նա յերբեք չեր կարող առանձին  
 դասակարգերի բաժանված՝ միմիանց թշնամի մի ամ-  
 բողջ հասարակութեան հարգանքը զրավող խորհրդա-  
 նշանը (սիմվոլ) դառնալ: Ունևորները պրոլետարներին  
 կժխտելին, ստրուկները՝ պատրիկներին, իսկ նա, ով  
 այդ դասակարգերի մեջտեղը կանգնել ցանկանար, նը-  
 րանց վոտքերի մեջ կխճճվեր ու պատմութիւնից դուրս  
 կշարտվեր: Բուրժուազիան թույլ և տալիս այնպիսի  
 «դասակարգային» ու «ապադասակարգային» դադա-  
 փարներ միայն քարոզել, վորոնք ձևականորեն միայն

զաղափարներ լինելով, ըստ գործի էլության, նրանց դասակարգային իշխանության հաղթանակին կնպաստեն:

Յեթև Քրիստոս պատմական ըեալ (իրական) մարդ լինելը, նա յերբեք միանդամից ըզլոր դասակարգերին չէր կարող հաճոյանալ, նա, անշուշտ, մեկն ու մեկի դուրը չէր վա, ինչպես սովորաբար այդ լինում եւ: Յեւ պատմության մեջ դրա համար շատ որինակներ կալին: «Փարիսեցիների» մանր-ըուրժուական կուսակցութլունը 6-րդ տարում կապը կտրեց «զելոտների» հետ, 6 թվին, ալսինքն՝ ընդամենը 10 տարի հետո այն ապստամբութլունից, վոր նա արել էր զելոտների հետ: «Փարիսեցիների» կուսակցութլունը չափազանց հեղափոխականներ թվացին իր ձախ դաշնակիցները. կուսակցութլունը խաղաղ վերանորոգման ճանապարհ էր փնտռում: Յեւ յեթև, իրոք, յերբևե աշխարհում քրիստոս ապրած լինելը, նա անշուշտ մի վորևե դասակարգի պատկանած կլինելը ու այդ դասակարգի տրամադրութլունը, հենց իր համար, անխուսափելիորեն կարտահայտելը վորևե ծրագրի մեջ: Կուսակցութլուններից մեկը նրան իր առաջնորդը կհամարելը, մյուսն իր դասակարգային հակառակորդը կհայտարարելը, կամ թե ուղղակի ալլամիտ կհամարելը: Դասակարգերից մեկը նրան կընդունելը, մյուսներն անխուսափելիորեն կհրաժարվիին նրանից: Յեւ այն հանգամանքը, վոր Քրիստոսը համարվում էր «ամբողջ բուրժուական աշխարհի» փրկիչը խտրութլուն չլնելով հելլենի ու հըրեալի, սկլութացու և ալլաղզու, ստրուկի և ազատի, պատրիկի ու պլեբեի, հարուստի ու աղքատի, շահագործվողի ու շահագործողի միջև, պերճախոս կերպով

այն և ասում միայն, վոր նման քրիստոս վոչ միայն չի յեղել, այլև յերբեք լինել ել չեր կարող, թեև իշխող դասակարգերը նրան նույն իսկ լավ գին կտային: Դասակարգերից դուրս գտնվող և միաժամանակ, բոլոր դասակարգերին հակառակը խոստացող Քրիստոսի այդ պատկերը իշխող դասակարգի պարանի վրա խաղացող, ինչպես միշտ լինում և այդ բուրժուական հասարակության մեջ, քայքայված չերևակայության և սաստկացած դուրահավատության տեր մարդկանց ըստեղծագործ չերևակայությունը միայն, փողոցային ասեկոսները միայն, ժողովրդական ասեկոսն կարող եր ստեղծել: Այդ տիպարը — փրկչի տիպարը լեգենդն և «փշուր-փշուր» հավաքել գողանալով ամեն մի պատմական գործչից մի մի սիրած խաղ, մեղչանական ամեն մի գծիկ, վորոնք սիրելի յեն շինականի սրահն: Լեգենդը հավաքել և այն, ինչ վոր իրեն պետք և չեղել ու Քրիստոսի պատկերից բուրժուական գործիչների ինչ վոր նախիր և շինել:

Իր հետագա հաղթանակողի պսակի համար ամբողջ նյութը լեգենդը տերև առ տերև պոկելով, բոլոր իրեն ծանոթ մեծ մարդկանց դափնիներից և հավաքել: Լեգենդը Քրիստոսի համար յեսալուց վերցրել և գալի ու գառի միջև չեղած հաշտության գաղափարը, գալիլիացի ավազակ Հուդայից՝ ճնշվածների պաշտպանության գաղափարը, ըստ վորում աշխատավորներին ու ծանրսրբեռնվածներին կես դաշուչնով (ЕКРН) գինելու գաղափարը, վոր փոխ եր առնված այսպես ասած «սուղարացիներից» դեն գցեց: Լեգենդը ժողովրդական հերոսների բերանները խենթերի ու փողոցային մուրացիկների համար ցանցառություններ և դրել, հե-

դափոխական ատուծների ուսերից նրանց ամենի դը-  
լուխներն և կտրել ու նրանց տեղը «անբարբառ գառ-  
ների» — համաձայնականների բուժ լերախներ և դրել:  
«Ղարաղիճ պոչ կպցրեք» առածի պես գործելով,  
պատմական ճշմարտությունը ճարպիկորեն կպցրել և  
իր կաշվից զողացող սեփականատիրոջ հիստերիկական  
ստին, ճշմարտությունը հնարովի բաների ու խարե-  
րայության հետ և շփոթել, հեղափոխական կիրքը ըս-  
տրկության փայնքոտ զողզողոցի հետ և հյուսել, սե-  
փական ճաշակով, հակաբնական ալգ շփոթին ավելաց-  
րել և, վորքան պիտք էր՝ հեղուկուն, խոնարհու-  
թյուն, իրականում լերքեք գոչություն չունեցած Մես-  
սիայի պատկերն այդպիսով պատրաստ էր: Մնում էր  
միայն տերտերներին ժողովի կանչել ու այդ պատկե-  
րի նման «փրկչի» լեզենդային կերպարանք շինել՝ մաս-  
սանների յերկրպագության համար, հետին թվով նշա-  
նակելով նրա ծննդյան որն ու տարեթիվը, մեկ էլ՝  
նրա կենսագրությունը պատվիրել յեկեղեցական գրա-  
կանագետներին: IV. դարում տերտերները ժողովի  
լին հավաքվում ու այնտեղ վորոշում Քրիստոս «փրկ-  
չի» վերաբերյալ բոլոր հարցերը: Հարկավոր և արդ-  
լոք նա: Յեթն հարկավոր է, ապա ինչպի՞ս ստիպել  
հասարակ ժողովրդին՝ հավատալ նրա գոչությանը: Յիվ  
վոր գլխավորն է՝ ի՞նչպիսի կերպարանքով հանդես բե-  
րել նրան: Պարզ առած՝ ի՞նչպիսի Քրիստոս և մեզ հար-  
կավոր: Ի՞նչ պիտի լինի նրա ուսմունքը, ի՞նչ պիտի  
լինեն նրա համոզմունքները, մտածելու ձևը: Այն ժա-  
մանակ դանազան Քրիստոսների ու մարգարեների մա-  
սին ամեն տեսակ լուրեր շատ ելին պատվում, վորոնք  
գյուրահավատ ամբոխի կողմից ելին տարածվում: Բո-

լոր այդ լուրերը պետք եր մի հայտարարի բերել: Տիր-  
տերները չնոանդուն կերպով սկսում են հավաքել բո-  
լոր լեզենդները, բոլոր ավետարանները, բոլոր փրչ-  
րանքներն ու ժողովրդական ֆանտաստիկ ավանդու-  
թյունների ու ասացվածքների ցիր ու ցան յեղած տե-  
ղեկությունները և սկսում են նրանցով «կանոն» հո-  
րինել, այսինքն՝ այն գրքերի ցուցակը, վորոնք նը-  
րանք սուրբ են համարում: Մնացած բոլորը վառա-  
րան ուղարկեցին: Առաքյալների ու առաջին ավետա-  
րանիչների քրիստոնեյական գաղափարների առաջին  
պատգամաբերների բազմաթիվ աշխատանքներ բոլորը  
կրակի բաժին դարձրին. «Հերձված ե այս» (հերետի-  
կոսություն ե), վորոշում եյին տերտերները,—վորով-  
հետև մենք չենք ուղում այդ աշխատությունը: Իսկ  
եռ ել Քրիստոսի ճշմարտությունն ե, վորովհետև ճըշ-  
մարտությունն այն ե, ինչ վոր մեզ հաճելի յե» ու  
վերցնելով այն բոլորը, ինչ պետք եր տերտերական  
պահանջներին, նրանք հետևյալ բանաձևը հանեցին.  
«Մենք եսպես Քրիստոս ենք ցանկանում ունենալ, ու-  
րեմն նա եղպես պետք ե լինի: Ցանկալին ու սպասե-  
լին այսբովանից թող ճանաչված լինի, կատարված  
փաստով, վորովհետև «հաճելի յեղև այս հոգոյն սրբո  
և մեզ» (Գործք Առաքելոց XV, 28): Թող կատարվի  
տիրոջ խոսքը, վոր ասել ե մարգարեյի բերանով:

Բուրժուազիան հազարավոր անգամ թերթում ե  
Յեսայու մարգարեյության եջերն ու այդ գերիմաստ  
գրքից աչք չի կարողանում կտրել, «Գալլն ու գառը  
միասին պիտի արածեն» (15, 25):

Յերբ բուրժուազիան կարդում ե այդ տողերը,  
բավականությունից աչքերը կկոցում ե: Մի ուրիշ

բան ել, «սուր վերցնողը սրով կընկնի»: Պետք է տեր-  
տերների ոռճիկն ավիւացնել ու ստիպել, վոր ամեն  
կիրակի այդ թեմայի շուրջը բանվորներին քարոզ կար-  
դան, — «Քրիստոսի լեզենդը» հիմար բան չի ու, հա-  
մենայն դեպս, վոչ ել մեր դրպանին՝ վնաս: Թե՛ն ճշմա-  
րիտ աստծուն ե համապատասխան ե թե՛ն նպատակա-  
հարմար ե հեղափոխությունների ու գործադուլների  
դեմ պայքարելու համար: «Յեւ իսկապես, այդ լրբերը  
համարյա թե ամբողջ, որիով գործարանատերերի լու-  
ծամուտների տակ կոկորդ են պատուում, թե սեփա-  
կան ձեռքով» մի բանի պիտի հասնեն: Ի՞նչն ե նրանց  
այդպես անել տալիս: Եդ բոլորը նրանից ե, վոր չեն  
հավատում: Հարկավոր ե միայն նրանց քրիստոնյա  
դարձնել, այնուհետե ել ձգտելու բան չեն ունենա:  
Են ա, նազդ կհամբարեն, բուռդ կդնեն: Մեր տեր-  
տերները քեզ են որը գցեն, վոր կոշիկի տեղ իսկի  
տրեխ ել ձեռք չընկնի... Բա ել ի՞նչն ե հաճելի: Հըս-  
կեմ, թե ինչպես նրանք, արյունակալած աչքերից բաց  
չթողնելով, հետամուտ են իմ ամեն մի քայլը, — ու-  
սում են բուրժուականը, — թե՛ն հենց այդ աչքերը վըշ-  
տով վերամբարձ ու հեղութւամբ լի տեսնեմ: «Գայն  
ու գառը միասին: Եդ հենց ուղղակի մեզ համար ե  
ասված. մենք, բուրժուական հեզ գառնուկներս ու ու-  
լիկներս թանգ կգնահատելինք այն, վոր պրոլետարա-  
կան սուրատամ գայլը իր բերանը մեզ վրա չբանա:  
Ու՛հ, նուզնիսկ գող ե անցնում մարմնովդ... Ել, չարչա-  
րանք, հա»:

Յերկրագունդը լցնող կենդանիների մեջ ամենա-  
արյունարբուն, ամենագիշատիչը լերկու վոտնանի  
մարդակերի ցեղն ե համարվում: Այդ կենդանիները

միմիայն մարդկային արշուճով են կերակրում և այդ  
 պատճառով ել իրենց քրիստոնյաներ են անվանում։  
 Ամեն ոք գործարաններում ու ֆաբրիկներում, քաղին-  
 քից թրջված բանվորի մեջքին կուցած՝ իրենց ազան  
 բերաններով լսելում են նրա պրոլետարական տաք ա-  
 րյունը, չկործանելով նրա ուժասպառ մարմինը պա-  
 տող կաշվի ծածկոցները։ Այս գաղտնիքը մի մեծ գաղտ-  
 նիք է— խորհուրդ մեծ և սքանչելի։ Ամեն մարդու  
 բան չի՝ խելքով հասնել դրան։ Յերբեմն մարդն ստիպ-  
 ված պիտի լինի չերկար ժամանակ գլուխ ջարդել դրա  
 վրա։ Յերբեմն չերկար տարիներ պիտի պրոլետարը  
 դրա համար իր դասակարգային սուր զիտակցութուն-  
 ները սրի։ Պրոլետարն իր մարմնի վրա վերքեր չի  
 տեսնում. նրա դատարկ կաշին վոսկորներից է կպել,  
 քայց նրա վրա գիշատիչի կծածի հետք չկա, իսկ նրա  
 արյունն իսպառ ցամաքում է։ Ինչ՞համ է մարդու կող-  
 մից մարդուն շահագործելու քրիստոնեյական գաղտ-  
 նիքը։ Կոպիտակի քաղցած ստրուկն այդ բանը չգիտի։  
 Կարծես թե նրան վոչոք չի յել խարել, վոչոք նրան  
 հաշվի մեջ պակաս չի տվել, վոչոք չի ստիպել աշխա-  
 տելու։— Նա մի քաղաքացի չէ, ազատ այն ամենից,  
 ինչ վոր կյանքի մեջ կապում է մարդուն, ինքնուրույն  
 է ու վոչոքի ստորագրչալ չի, յեթե միայն չարագործն  
 ու սովը չհաշվենք. իր ցանկությամբ և գործարան չե-  
 կել ու ինքն իր ծառայությունն առաջարկել գործա-  
 րանատիրոջը՝ ազատ առանց նրա կողմից ստիպելու,  
 առանց սպառնալիքի ու աղմուկի՝ նրա հետ կամովին  
 համաձայնություն կնքել։ Բայց զարմանալի բան. հենց  
 այն բնույթից, չերբ նա վոտը ֆաբրիկի շեմքից ներս  
 դրեց, ասեա իրեն ինչ վոր մի թակարդի մեջ գլխաց՝

իր ձեռքերը կապված, աղատությունից, լեզվից զերկված, անողորք շահագործման դատապարտված մի գոհ: Նրան միանգամից պարզ յեղավ, վոր իր կյանքն իր գործատիրոջ ձեռքին է: Ի՞նչպես թե, Ինչո՞ւ: Ախր եղ վճից պատահեց: Բա վճրտեղից են այդ ճնշումը, այդ ստրկական վիճակը, առանց զրա վրա ուղղակի ճնշում դնելու, ազատ յերկրում. ուր մարդու անձի անձեռնամխելիությունը հաստատող որենքի առաջ բոլորը հավասար են: Քրիստոնեական կուլտուրական միջավայրում, ուր հասարակության բոլոր անդամներն սատծու մութ յեղբայրներ են համարվում, ուր չերկնավոր հոր առաջ բոլորը հավասար են, տեղի չին ունենում աստվածային ու մարդկային բոլոր որենքների անպատկառ ու դաժան վտանահարում: Ու մարդը, վոր աստըծու խելացի՞արարածն է, — ստեղծագործության թագն ու սրակը, բանական անձնավորություն, ազատ քաղաքացին, — զրաստ (բեռնակիր կենդանի) չե դառնում: Կյանքը մարդուն ցանցերով խճճող անհասկանալի, անթափանցելի գաղտնիքների մի զարհուրելի հեքլաթ է դառնում: Շատերն են գլուխ ջարդել, կամենալով հասկանալ ժամանակակից մարդու տառապանքների իսկական պատճառները, պատգամախոսների յեն հարցրել, նախանշաններ են վորոնել, աստծուն են աղոթել՝ բանալ մարդկաց իրենց բախտը: Մակաչն, վոսկե սփինքսը հանդիստ պառկած է, գլուխը չերկարացրած իր արջունտո դիշատիչ թաթերի վրա, իսկ մարդկանց աղի արցունքները գետերի նման հոսում ու հողի մեջ են ձծվում: Յեվ մարդը չերկար փնտռում եր իր զրկանքների ու տխրության պատճառին: Նրան մեկ թրվում էր, թե իր բոլոր դժբախտությունների պատճա-

որ մեքենան է, և նա, ի գալրույթով ու չարուխիամբ վրա յեր պրծնում ջարդելու իր համր թշնամու պողպատե կողքերն ու ժանիքները,—մեկ ել՝ նրա ատեւ լուծուենը թափվում եր կնոջ վրա, վորը հանդգնել է տղամարդուն հավասար բաժնի ձգտելու: Բայց վոչինչ չոգնեց:

Չարուխուենն ել ավելի յեր սեղմում մարդկանց սրտերը, գալրույթի կրակն ել ավելի յեր բորոքվում ճնշվածների սրտերում... Այդ պայմաններում վոչ մի կյանք հնարավոր չեր կարող լինել: Կարող ելին արդո՞ք, կապիտալի ստրուկներն ալդպիսի զգացմունքներով հաջողությամբ աշխատել: Պետք եր այսպես թե ալնպես նրանց հաշտեցնել իրենց վիճակի հետ, պետք եր, ի սեր իրերի դրոււթյան փրկության, ի սեր արդեն կառուցված հասարակական ռեժիմի՝ մարդկանց համար մի սփոփանք գտնել: Ախր չի կարելի փշի վրա նստել: Չի կարելի վշտով միայն ապրել: Կամակոր մարդիկ: Նրանք դիտմամբ չեն նկատել իրենց բախտը, նրանք ուղղակի չեն կամեցել տեսնել այդ բախտը:

Բայց թող տերտերներից շնորհակալ լինեն: Նրանք կարողացել են քաջալերել ընկճվածներին: Ինչո՞ւ տառապենք: Ինչո՞ւ մեր գոլուծյունն անիծենք: Չե՞ վոր մեր բախտը հենց մեզնից է կախված,—բավական է միայն ցանկանանք այդ: Աշխարհը փոքր է, նեղ ինչպես վանդակ, մարդկանց կյանքը կարճատև հավիտենականության հետ համեմատած՝ մի ակնթարթի նմանող բան,—բա արժի՞, վոր մարդ դրան աչք դնի: Բա, աստծու մասին անվերջ բավականություններ, բա անսահման բախտավորություններ, սնասելի հիացմունքը ժամանակով՝ անսահման և խորությամբ՝ ա-

հրատարակելու հրահանգը... Վերջում անդոր ե պատմելուս :  
 Միթե կարելի չի մարդկային հսգու վե՛ր թուղջն ու սը-  
 աքքը պիղծ ու կուրորեն համեմատել ստոր ու ըն-  
 ղուննալն լերկրալին արցունքի հովախ մասին ապար-  
 ղուն խնամքներով լի մարդու հոգսերի հետ : Միթե  
 կարելի չի թույլ տալ, վոր այս աշխարհի ազատ պատ-  
 կերը մարդկանց հայացքներից իր տակ ծածկի դրախ-  
 տի լերանության վե՛ր պատկերը : Թո՛ղ կորչի այս աշ-  
 խարհն իր արցունքներով, աղքատությունով ու սո-  
 վով : Թո՛ղ կորչեն մեր բոլոր մտածմունքները—մեր  
 բոլոր հոգսերը նրա մասին. «բոլոր առորյա հոգսերը  
 դեն դնենք հիմա : Դեն դնենք կողիկներս, շապիկ-  
 ներս, գլխարկներս ու որվա բաժին հացը,—հոգու  
 վերկության տեսակիտից այդ բոլորն ել ավելորդ բա-  
 ներ են :

Թո՛ղ բուրժույներն ուտեն, խմեն, հագնվեն, իսկ  
 մենք քաղցած կմնանք, ցուրտ ու զրկանքներ կքա-  
 ղենք, վերովհետև լերկնքում մեզ համար լավ բաժին  
 կա պատրաստված :

Աշխատավորների վզին անդրլերկրային հավատ  
 գոյություն չունեցող աշխարհ փաթաթելով, կրոնն  
 ստիպում է նրանց հրաժարվել իսկապես աշխարհում  
 գոյություն ունեցող իրենց բաժնից : Կրոնի նպատակն  
 այն է, վոր աշխատավորներին լերկնքի բախտի ցնոր-  
 քով հրապուրի ու լերկրի իսկական բախտից զրկի  
 նրան :

Աստծու հավատը՝ կապիտալի կողմից շահագործ-  
 վող գոհի վիճակի ամբողջ սարսափը տանելու համար՝  
 աշխատավորների համաձայնությունը ձեռք բերելու  
 ղեկնքն է, շահագործողի ձեռքին :

Քրիստոնեյական կրօնը՝ աշխատավորների ու նրանց՝ դասակարգային թշնամիների միջև համաձայնություն ստեղծելու մի ղենք և պարագլխաների ձեռքին:

ԶԱՏԻԿԸ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵ-  
ԼՈՒ ՈՐ Ե

Աշխարհիս չերեսին քանի պարագլխաների իշխանություն և գոյություն ունեցել, Քրիստոսի հարության սրբ լույս կիրակի» չե համարվել: Ամբողջ տարվա մեջ միայն այդ մեկ օրն և լույս»: «Այդ օրն և միայն աստված ստեղծել»: Տարվա բոլոր փնացած օրերը, խոսք չկա, սատանաներն են ստեղծել: Զատիկը ատոնների տոնն և և հանդեսների՝ հանդեսը», ընտրյալ և սրբազան օր»:

«Ցնծացեք և ուրախ լերուք ի նա»: «Գրկեցեք միմյանց»,— կոչ և անում չեկեղեցին... Զատիկն ընդհանուր հրճվանքի, ցնծալին զգացումների զեղման օր ե: Այդ օրը ամենքն էլ պարտավոր եյին ուրախանալ ու համբուրվել, առանց աստիճանի ու դասի խրտրության՝ հարուստն աղքատի հետ, ազնիվն՝ աստորի, ռամկի» հետ, տերը՝ զեղջուկի հետ, կոմսուհին՝ ամանչաման լվացողի հետ, ավագ քահանան՝ նշխարք չեփող կույսի հետ, կուսանոցի մայրապետն՝ ոջախի մուր սրբողի հետ, չեր լինում և վոչ մի բացառություն: Թվում եր, ինչից և այդպես: Բայց այդ հասկանալու համար պետք և համակվել կատարված հրաշքի մեծությամբ . «Վորովհետև գերեզմանից, ինչպես լուսեղեն խորանից, ֆաճանչից Քրիստոս» . . Հարչավ Քրիստոս, հարչավ փրկիչն...: Բայց թե ում փրկիչը: Եդ ումն և

փրկել, և: Տճ եղ ձևն, և: Խոսք չկա վոր նրան, ով  
 ձեռաց գնում էր: Անկար էր դարձել հին աշխարհը—  
 ձրիակերի բկից բռնել—հուպ էյին տվել: Ա՛լ, հենց  
 նրանց էլ, ահանջից բռնած, փրկիչը ցեխից քաշում  
 էր: Բա էլ պրոլետարն այստեղ ուրախանալու ի՞նչ ու-  
 նի: Ի՞նչպես թե ինչ, կամպանի խաթեր (за компанию):  
 Ախր կարգապահությունը նրան էլ են դաս տվել...  
 Յերբ վոր նրա տերն որերը կեր ու խումով և անց-  
 կացնում, բա նա քանի՞ գլխանի յե, վոր անտարբեր  
 մնա: Թե նա արդին աստծուն հավատալու թարկը  
 տվել և: Կամ թե չե, փրկչի հրաշքների վեհությամբ  
 համակվելու ընդունակությունը կորցրե՞լ է: Չե վոր  
 միայն պետք և հասկանալ «հարյավ փրկիչն»: Ահա քեզ  
 մարդկանց սրտերն անբացատրելի բերկրանքով լցնող  
 հրաշքը: Ամբողջ աշխարհը խանդաղտանքով փայլում  
 է: Ինչի յե պետք կյանքը: Մարդկանց մեջ հիմա ի՞նչ  
 հաշիվներ կարող են լինել: Ի՞նչ դարդ հս անում: Տճ,  
 ի՞նչ դասակարգ, ի՞նչ դասակարգային թշնամություն,  
 ի՞նչ բան: Տճ զե՞ թճո՞ղ կորչեն եղ դատարկ բաներն, և:  
 Թճո՞ղ պապանձվի նրա լեզուն, ով ունայն բաների մա-  
 սին և խոսում: Թճո՞ղ քարանա այն սիրտը, վոր վոճ-  
 բագործ կերպով չարությունն և պահում իր մեջ: Թճո՞ղ  
 տիեզերքի բոլոր ելակները ցնծան՝ Քրիստոս հարյավ:  
 Առաջ վոր կենդանի մարդը մեռելին հարություն էր  
 տալիս, հրաշք էր համարվում, բայց Քրիստոսը մեռել  
 և ու իր մեռել տեղովն իրեն հարություն և տվել: Բա  
 վոր ես էլ հրաշք չի, ձեզ էլ ի՞նչ մախաթ խոթենք,  
 վոր դուք հավատաք: Այդքան հրաշքներից հետո լել  
 մի չի հավատա այդպիսի աստծուն: Ուխտը կատար-  
 ված է... մահը պարտված է ու մենք կենդանի յենք:

Հին ռեժիմը կյանք առավ—այժմ ամեն ինչ հնի պես կլինի: Սրանից հետո մեր բանը լավ կըլլի:

Քրիստոսը հին աշխարհը կորստից փրկեց «մահվամբ զմահ կոխելով», սրանից հետո վերացված և սատանայի իշխանությունը, մահը պարտված և ու բոլոր դժոխք գնացածների վրայից մեղքի անեցքը վերցված է: «Մտավ Քրիստոսը յերկրի անդուռնդն ու խորտակեց...»:

Հավատում ենք հավիտենականին: Ջախջախված և հինգ ոճի գլուխը:

Համայն մարդկությունը մեղքից ազատված է... «Հրեշտակների պես» մաքուր, յերեխաների պես անարատ, այժմ մարդիկ կհամախմբվեն տիեզերական տոնին մի յեղբայրական համբույրով կձուլվեն: Մտլու թյունը, վախը, թշնամությունը, նախանձն այսորովանից ընդ միշտ կորած են: Այդ զգացմունքի հետքն անգամ չի մնա: Ապա թող մի Ֆարրիկստեր փորձի պրոլետարի գլուխն իր ծնկների արանքը ճխտել, ապա թող փորձի նրա մեջքից զոլ կաշի հանելու: Նա բողոք չի լսի: Քրիստոս պրոլետարական սրտից գլխի և դասակարգային թշնամության զգացումը: Քրիստոս արմատախիլ և արել յեղբայրասպան ատելության խայթոցը. քերթող յեղբայրն ու քաղցած յեղբայրը համբուրվում են. պլոկիր կաշիս՝ ինչքան սիրտդ ուզի, միայն, տե՛ս, սիրով ապրենք: Քրիստոս համբերում էր ու նույնն էլ մեզ և հրամայել, ուստի՝ չարչարվիր ու վոչ մի դարդ մի անի, բոլոր մնացածն ինքըն իրեն կարգի կընկնի:

Աստված հենց ինքն իրեն մատնեց տանջանքի,

րա դրանից հետո ել արժի մարդկանց մասին խոսել:

Քրիստոս հարչավ, նրա հետ ել հարութջուն առավ այն ճշմարտությունը, վորի համար նա չարչարվել եր,— մարդկալին սիրո ճշմարտությունը, վորի համար վոչ մի բացառություն չկա, ընդհանուր սիրո, վոր հավասարաչափ պարտադիր ե բոլոր ժամանակների և ժողովուրդների համար, ամենագլխավորն ել հենց այս ե: Այդ պատճառով տերտերներն ամեն տարի, իրենց արխիվների խորքից դուրս քաշելով, բննեն հրում Քրիստոսի մանվան և հարության լեզենդը: Նրանք հարություն առած Քրիստոսին հանդիսավոր դիմումներ են կազմակերպում՝ զանգակների զողանջի տակ, վառ մոմերով ու գովասանական որհներգներով: Յեկեղեցական պատմության են գլխից նրանք բարձրացնում են ամենաանհեթեթ, ամենահակասական, անմիտ ու հնարովի հերուրանքների տիղմը, վոր, ի փառս տյառն, թոթափվել ե նրանց վոռքերից: Նրանք մորիլիզացիայի յեն յեն թարկում մարդկալին գիտակցությունը մթաւնող անդրջրհեղեղյան բոլոր գենքերի արսհնալը, վորպեսզի աշխատավորների գլուխն այս միտքը պինդ ճխտեն՝ «Քրիստոս հարչավ»: Նա մեզ հետ ե: Այսուհետե հավիտյանս հավիտենից խորտակված ու խայտառակված ե սատանան, վորը մարդկանց մեջ չերկպառակության, չարության ու ատելության սերմեր եր ցանում: Մենք վերածնվում ենք մի նոր, ազատ, խաղաղ չերանավիտ կյանքի համար:

Կգոն չերջանիկ որերը,— խաղաղությունն աշխարհում հաստատվում ե, դասակարգերի ներդաշնա-

կությունը չի մթազնվում մարդկային թշնամաքով, պրոլետարներ, դրեք ձեր գլուխը գործարանի մամուլի տակ ու յերբ աչքներդ ընդց դուրս գա, լերպեցեք՝ «Քրիստոս հարչավ»:

Յերգեցեք նրա փառքը, վորովհետև այժմ թշնամությունն ու չարը տեղ չունեն:

Հին ռեժիմը զանգերի զողանջով ազգարարում է համայն աշխարհին իր «փրկչի» հարությունը: Սպիտակագգեստ քրմերը վառ մոմերով, ժամասացություն են անում ու տաճարների արքայական դռները վողջ շաբաթը կրնկի վրա բաց են: Այդ նշանակում է, վոր «սրբազան շաբաթվա ընթացքում դրախտի դռները բոլորի առաջ բաց կըլին»:

Ո՞վ եդ ժամանակ մեռնի, ուղիղ գծով յերկինքի արքայությունը կրնկնի առանց պեռեսասակայի ու առանց անդունդը մտնելու և առանց սատանի գիրկն ընկնելու:

Այ ինչ լավ կըլինի՝ մարդ եդ լույս որերին մեռնի,—ամեն վոք մտածում է հիմա:—Միայն թե վորքան կարելի յի մարդ են աշխարհում շատ տեղ բռնի:

**ԶԱՏԻԿԸ ԴՐԱԽՏԻ ԴՈՒՌ Ե ԲՈՂՈՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ,  
ՈՎՔԵՐ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՐՀԻՑ**

Քրիստոնեական ամբողջ ելությունն այն է, վոր սիրին ասածուն ու դիպի նա ձգտեն. հեռու յերկրային արցունքի հովտից: Յեվ իսկապես ել, ե. «ամբողջ աշխարհը չարիքի մեջ է ընկած» (Վ Հովհաննու V, 15): Ինչ՞եւ հոգս տանենք նրա համար, եւ «Մի սիրեք այս աշխարհը,—ասված է գրվածքում,—այն բոլորը, ինչ

վոր աշխարհում ե... չերկնավոր հորիցը չի» (I Հովհաննու II, 15—16), Յեւ մարդիկ այնքան պիտի տառապեն, մինչև վոր չհասկանան, թե իրենց սրտերը թեթեացնելու համար, անհրաժեշտ է ել ավելի ուժեղացնել կյանքը ճնշելու ծանրութունը. «թեթե է իմ բերք» (Մատթևոս XI, 30) ասում է Քրիստոս:

Առեք այն ձեր ուսերին, վտարեք շղթայեցէք կապանքներով «Առեք զլուծն իմ ի ձեզ», տարեք այն ձեր վզին, ու հենց վոր տերը ձեր չերասանակները (վոժերը) իր ձեռքն առնի ու խարազանով շարկացնի, հենց են բոպելին ել «ձեր հոգիների հանգիստը կզրանեք» (Մատթևոս XI, 29): Ինչպես ել ուզում է, մարդիկ վերաբերվեն ձեզ, ո՛վ ինչպես ուզում է, թո՛ղ ձեզ ծաղրի ու ծանակի առարկա դարձնի, դուք ուշադրութուն մի դարձնեք. չերկրայինի մասին մտածել կնշանակի հրաժարվել ասածուց: Ով ուզում է՝ ասածու արքայութունը ժառանգի, նա պիտի կատարյալ արհամարհանքով վերաբերվի այն ամենին, ինչ յերկրային է: Այսպես եր սովորեցնում է փրկիչը. վորով ուզում է իմ ճանապարհով գնալ, թո՛ղ ձեռք քաշի իրենից, իր խաչը վերցնի ու իմ հետևից գա» (Մատթևովոսի XVI, 24): Տանջանք դարձրեք ամբողջովին ձեր կյանքը, փայտե կոճղի վրա խաչված զգացեք ձեզ, ձեր մարմինը յերկաթե բևեռներով փաշտին մեխված պատկերացրեք ձեզ: Մարմնական տանջանքներից հոգով բարձրացե՛ք և այն ժամանակ ձեր սրտերում մեծ բավականութուն ու հանգիստ կզանեք:

Վորովհետև այսպես է ասված. «ով համբերեաց է իսպառ՝ նա կեցցե» (Մատթևոս X, 22): Մարդկանց

սրտերը դեպի քաջագործությունը մղվելու սրբազան բոցերով են այրվում:

Մեծ և ավետարանի խոսքի սփռփիչ զորությունը: «Հեղ լույսով», Քրիստոսի ուսմունքի խաղաղարար լույսով լեթե մարդը լուսավորված չլիներ, բռունցքները սեղմած՝ գոռալով պիտի հարձակվեր իր ճնշողների վրա: «չեմ ուզում համբերել»: «Իրեն—խաչեցյալ Քրիստոսին տեսնող» պրոլետարը կարևոցությունից ձեռքից դնում է: Յեթե աստվածն ինքը մեզ համար այդքան չարչարվում է, բա միթե չենք կարող սեփական փրկության համար միքիչ էլ մենք չարվենք:

Կրոնի մեջ պարզ ասված է՝ «Մի յերկնչեք ի նոցանե, վորոնք սպանանեն զմարմին» (Մատթևոս X, 28): Ել ի՞նչ վախենալու բան կա: Մեկ է, սատկողին չեն ստիպի նորից մեռնելու: Թող իրենց համար սպանեն իմ մարմինը,—մտածում է հավատացյալը,—հոգիս հո կենդանի չի, զլիսավորն ել հենց եղ է: Քրիստոսյան զգում է, վոր կապիտալիստը ծծում է իր արյունը, զգում է, թե նա ինչպես է ծծում իր ուժը, բայց չի ընկճվում, աստված իր հետ: Հոգիս կհանի՞, բա չի՞ հանի: Սո՛ւտ ես ասում, եդ նոսերդ չի անցնի: Ինչքան ուզում ես՝ արյունս ծծիր, իսկ հոգուս մասին վայթե փայզ քիչ ըլլի: Այդպիսի մարդն, ի հարկե, գործարանում չի սպասամբիլ. քրիստոնեական բռուն զգացմունքներով, լի հարգանքներով նա նույնիսկ ուշադրություն չի չել դարձնի, թե իրեն աֆնտեղ շահագործում ու տանջում են: «Գեհհենի կրակի» հետ համեմատած, ուր ընկնում են նրանք, ովքեր ուզուկ

են մարմինները փրկել ու հոգին կորցնել, այդ տան-  
ջանքներն ինչ են փոքր:

ՄԱՐՄՆԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒ  
ԿՈՐՈՒՍՏՆ Ե

Իսկական քրիստոնյան պիտի թքի ամբողջ աշ-  
խարհի վրա. նա պետք է ժխտի և արհամարհի այն  
բոլորը, ինչ վոր յերկրային է, և այդ արհամարհան-  
քով, մարդկային այդ բոլոր պահանջներից ու կարիք-  
ներից հրաժարվելով՝ վեհ բավականութունը գտնի.  
Քաղցած մարդը ճաշարան պիտի գնա, բայց վհչ, թող  
ճաշարաններ գնան այն «կուսպաշտները», վորոնք  
չերկրայինի մասին են մտածում, իսկ քրիստոնյան  
այդ բանը չպիտի անի. քաղցածութունն ամենայն-  
ջանիկ, ամենասուրբ դրութունն է, վորովհետև «չե-  
րանի այնոցիկ, վոր սովյալ և ծարավի յեն», կամ,  
ուրիշ խոսքով ասած, վորոնց փորը զրզռում է: Մեր  
ապականված մարմինը տանջում է հոգին ու ճնշում  
մտախոհ խելքը» (իմաստ. Սողոմոնի IX, 15):

Մարմինը մարդկանց խանգարում է աստծուն  
հավատալ: Փորը դատարկ, լզար մարդը միշտ բարե-  
պաշտ է լինում, ուստի այն ամենը, ինչ վնաս է մար-  
մնին, հոգու ոգտին է գնում: Մարդու աչքը հող կամ  
մի ուրիշ բան է ընկնում, արտասունքն աչքից մի  
գլուխ գալիս է. անորենը բժշկի մոտ կգնա, իսկ  
քարոզիչը կուրախանա, թե արցունքն ինքն իրեն է  
թափվում աչքերից, վորովհետև «չերանի սպավորաց»,  
«չերանի այնոցիկ, վորք լան և կականեն»: Մարդը  
կացնով բան եր կտրում, ու նրա գործիքն աշխատե-  
լուց բթացել եր: Տնր՝ սրեմ, — ասում և նրան հարե-

վանը, — ախար դու իզուր տեղն ես չարչարվում, եղ  
քո կացնով որական հինգ մանեթ կարելի չե աշխա-  
տել: Յես գնա, — հայտարարում ե քրիստոնյան, —  
աստված կսիրի ինձ մինչև այն ժամանակ, քանի  
դեռ վարտիքս պատսռոտված ե. քրիստոնյան վոր-  
քան քիչ ստանա, այնքան լավ, վորովհետև «չերանի  
աղքատաց»:

Ախր «ինչ վոր մարդկանց համար բարձր ե, աս-  
տըծու մոտ պղծութունն ե» (Ղուկասու XVI, 15), ուստի  
ենքան ել վերև մի գնա. վորքան կարող ես, ցած ի-  
ջիր, թե բոլորի մոտ պատիվ կունենաս, թե նուչնիսկ  
Ֆարրիկանաը դեմ վոչինչ չի ունենա: Ինքը քրիս-  
տոնյա յե, բարձր դրուչքներով նա քեզ չի գայթակ-  
ղեցնի, նա քեզ այնպիսի հոնորարներ կնշանակի,  
վորոնց ժամանակ քո մարմինը հոգու բարձր թուչք-  
ների համար բեռ չի հանդիսանա, միայն թե փոխանդ  
վոտքերդ չընկնի: Յեվ չեթե այդ փորձության ել դի-  
մանաս, նա քո աշխատավարձն ել ավելի կքչացնի,  
մինչև քաղցից պատի վրայով չսողաս... դեպի վեր,  
ուրեմն, այդ կլինի բարձրացում՝ ցածրացնելու միջո-  
ցով, ըստ աստծու խոսքի. «վոր խոնարհեցուցանե  
զանձն չուր՝ բարձրացի» (Ղուկաս XI V, 11):

Իսկ ի՞նչ կլինի, յիթե պրոլետարի գլխում ել  
պիղծ միտք փայլի. «այ, տես, յես աշխատում եմ,  
այստեղ Ֆարրիկում եմ աշխատում, — այ հրեն, իմ աշ-  
խատանքով Ֆարրիկատերը վոնց ե հարստացել,  
իսկ յես իմ ամբողջ կյանքում պատուած-ճղված եմ  
ման գալիս: Այն ժամանակ պահապան հրեշտակն իս-  
կուչն կհայտնվի ընկճվող մարդուն ու կսկսի ներշնչել  
նրան. «Յերանի հեղոց» (յերանի խոնարհներին) —

վորդյակ իմ, չարը սրտիցդ հանիր: Դու տրտնջում ես, թե մարդկանց համար ես աշխատում. ախր փրկիչն հենց այդ բանին էլ կանչում և մեզ, վորովհետև «չկա ավելի մեծ բան, քան այն սերը, յեթե մեկն իր հոգին ընկերոջ համար և դնում» (Հովհաննու XV, 13):

«Քրիստոսն» աշխարհի փրկիչն և հանդիսանում, բայց, ի հարկե, հին աշխարհի ու այն հարաբերությունների, վորոնք այնտեղ գոյություն ունեն: Կապիտալի համար Քրիստոսը փրկում և թուրթուական իրավակարգը—աշխատանքի համար՝ ամեն դեպքում, ամեն վիճակում փոխվելու իրավունքը: Աշխատավարձի հարցը վճռելու գործում, այդ բանը բուրժուալի ձեռքում ամենաձեռնտու միջոցն է: Կուտակումը՝ կապիտալին, հրաժարվելու քաջությունը՝ աշխատավորներին:

«Մարդու կյանքը կախված չի» շատ ինչք ու ստացվածք ունենալուց» (Ղուկասու XII, 15):

Հավատարիմ տղամարդը,—ասում և սուրբ Կյուրեղ Յերուսաղեմցին բոլոր հագուստներից հարուստ է: Հարուստները վորքան շատ են հավաքում, այնքան շատ են տանջվում իրենց պակասության համար: Իսկ հավատարիմ մարդն աղքատությունով և հարուստ, վորովհետև, իմանալով վոր միայն կերակուր և հագուստի պետք ունեն (ըստ բնակարան հարկավոր չի)... ու սրանով բավականանալով, վտանակոխ և անուժ, հարստությունը» (Ճառք հրապարակականք Ծ): Ախր հարստությունն ի՞նչ բան է, ե՞րբ ես ու ծանրություն. ուղտն ասեղի ծակով ավելի հեշտ կանց կենա, քան հարուստը յերկնքի արքայությունը կմըտնի», մի կարծեք, թե հարուստների բանն այնքան էլ

լավ է, —ասում է Թեոդորիտ յերանելին,—մի կարծեք, թե գործատիրոջ ապրուստն անքան էլ քաղցըր է:

«Գործատեբը տանը շատ հոգսերով է ճնշվում, մտածելով... Խնչպես վճարեմ թագավորների հարկը, ստացածի ավելորդն ինչպես ծախեմ ու առնեմ՝ Խնչի կարիքը կա: Յեթե հողը վատ բերք տա — սով կը լինի, ուրեմն նշանակում է, վոր ստիպված պիտի լինի պարտք տալ ու նա անհանգստանում է, մտքումը պարտատեբեր ջոկջկում, պարտագրեր է գրում, ու իր վրա կամավոր ստրկություն է դնում»: Իսկ յերբ հողը լավ է բերում — հացն ռւր պահի: «Ե՛լի դարտի մեջ ե ընկնում. մտքումը գնորդներ է ջոկջկում, ամբողջ գիշերներով չի քնում», իսկ ծառայի խիղճն ազատ է: Նա հատակին է քնում, բայց վոչ մի հոգս նրա քունը չի փախցնում. քաղցր քունը, նրա կողերը ծանրացնելով, չի թողնում վոր դաժան սուտն զգա, թեփի հաց է ուտում... բայց ավելի հաճույքով, քան իր տեբը»: Վորովհետև «նա... կշտության սահմանն անցնելուց, հետ է մղում իրենից ուտելը, իսկ ծառան, ճաշակելը պահանջի համեմատ չափելով, կերակուրը փափագով, ախորժակով է ուտում»: Իսկ «տեբերից շատերը ծառաններից պակաս չեն չարչարվում». բայց դեռ ավելի շատ, յեթե հոգսերն էլ ավելացնենք գործերի վրա (Բան վասն նախախնամության 7-րդ): Հարստությունը շատ հոգսեր է բերում:

«Ճոխության մեջ ապրողները նույնիսկ մուրացիկներից էլ դժբախտ են»... հարուստները հարստության պատճառով, ավելի կարիք ունենալով, ամեն բանի մեջ պակասություն են քաշում: Ի՛նչ ասես, վոր

նրանք ստիպված չեն լինում գնել հաց, պաշար... վրտանաման... պատվավոր հագուստներ, գորգեր... ծածկոցներ... պտուղներ... ու այլ բարիք... իսկ աղքատի համար սև ճաթն էլ բավական է, ուտելու մի բան լինի՝ այդ էլ բավական է»:

«Հարուստներից շատերը, ինչպես կարելի չե տեսնել նրանց մարմնի քայքայվածությունից, վորը նրանց մեջ ճոխ ապրելուց է առաջ գալիս, մեծ մասամբ չեն կարողանում ջուր խմել, իսկ աղքատն իր բամբուջ կյանքում այդ ջրով է գոհանում. ջրերի աղբյուրներին դիմելով ինչպես մեղրի աղբյուրների, ու աչնտեղից իսկական ու մաքուր բավականութուն ըստանալով»: Մի խոսքով, հարստութունն. ամենից վատ է ամենից ծանր է. աղքատն առանց կոշիկի յե ման գալիս, այդ պատճառով էլ նրա վտուքերը հանդիստ են: Նրա վարտիքը յերկու կիսագնդի վրայից ծածկված է, — ողը չի խանգարում, ուրեմն ողափոխության կարիք չկա, քարերի վրա այնպես է քնում, ինչպես բմբուլի վրա, ու ցամաք բոքոնը յուղոտ գաթից բարձր է համարում: Փորը դատարկ է, ուրեմն, սիրտ վերածելու բան չունի... բա դրանից էլ մեծ բախտավորութուն կարձղ է լինել: Այսպես գրավիչ է պատկարացնում կրոնը պրոլետարիատի նեխվող խոցերը, հարստութունը մի ահուելի լուծ է, մի ծանր բեռ է, մի անասելի ծանրութուն է այն մարդու մեջքին, վորին պերն ուղարկում է այդ, իսկ աղքատութունը՝ յերանութուն ու բախտավորութուն է: Աշխարհում աղքատութունից ձեռնտու բան չկա: Ուտտի է գրված է կրոնի մեջ. «աշխարհիս վրա ձեզ գանձ մի հավաքեք» (Մատթեվոս VI, 19): Յեթե աշ-

խարհի վրա հարստութիւնն հավաքեք, դրախտի դռները կփակվեն ձեր առջև: Ավելի լավ է՝ մազոլներ, կուզ, թոքախտ, ստամոքսի խանգարում ձեռք բերեք— այն թե վորն է ձեզ ավելի հարմար:

Կապիտալիստի գլխավոր խնդիրն այն է, վոր, յերկաթե ձեռքով պաշտպանելով սրբազան մասնավոր սեպհականութիւնը չքավորների աչք դնելուց, անողոք կերպով պատժելով ու բնում, սաղմում խեղդելով իրեն համար մի բան, ինչպես կապիտալիստներն են ասում, ուրիշինը ձեռք բերելու ամեն մի փորձ— ու միաժամանակ, հետ մղի աստծու կողմից պարագիտին տրված՝ աղքատ աշխատավորութեանը մասսայական մասշտաբով բացարձակ ու գլխովին թալանանելու իրավունքը: Կապիտալիստը մասսայական չափով թանկագին բաներ պիտի չուրացնի, վորոնք պրոլետարների ձեռքերով են ստեղծված, իրենց սեպհական աշխատանքի արդյունքից բաժին հանելով նրանց վոչ ավելի, քան այն, վոր մարդու առորչա պահանջները քավարարելու համար կիսաբազմ մարդուց է հարկավոր: Ի՞նչպես անի այդ: Հուշը միմիայն Քրիստոսի վրա յե: Նմանվելու համար թո՛ղ հավատացյալները նրա որինակը վերցնեն, թո՛ղ արհամարհանքով նայեն հարստութեանը, թո՛ղ գարշանքով խորշեն դրանից,— այնքան հարուստների համար դիզելը կհեշտանա:

Քրիստոնչան վոչ մի բանի ավելորդ չպիտի ունենա, նրա մոտ վոչ մի ավելորդ բան չպիտի լինի. «ով յերկու շապիկ ունի, մեկն աղքատին թող տա» (Ղուկասու 11, 11):

Այդ շապիկները քո ձեռքովդ են գործված, մի որում դու նրանցից մի քանի տասնյակ ես գործել:

Միևնուշնն է. քո աշխատանքիդ ամբողջ արդյունքը կապիտալիստին և պատկանում, իսկ դու պիտի ստանաս այնքան, վորքան հարկավոր ե, վոր քաղցած չը ստակես. քրիստոնեյութունը հավելլալ արժեքի կրոն է. քրիստոնեյութունը կուտակման կրոն է:

«Վերարկուդ խլողին շապիկդ ել տուր» (Մատթեվոս V, 29): Վճնց թե: Չե՞ վոր դիզել չի կարելի:—Սուտ բան՞ է, ավետարանը պարզ ասում է. կուտակել չի կարելի նրան, ով վոչինչ չունի, «իսկ ով ունի, նըբան կարվի ու կբազմանա» (Մատթեվոս VI, 12) «ունեվորին կտրվի, իսկ չունեվորից՝ կառնվի» (Դուկաս Վ, 26):

### ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՎԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՀՆՈՂ ԿՐՈՆ Ե

Ամեն մի դասակարգի իրեն հարմար բան է սոված. աղքատին՝ «համբերիր», հարստին՝ «դիզիր», պըրուխտարին՝ «խաչ կրիր» բուրժուզին՝ «պի՛նդ ծըծիր», վորովհետև «հարստությունն ել աստծու պարզե է»: «Հարուստն ու աղքատն իրար պատահում են— թե մեկին և թե մյուսին աստված է ստեղծել» (Առակաց, XXII, 2): «Բա նա ինչ՞ու յե այդպես արել»:— Հուզվում է պրուխտարիատը:

«Այդ մասին «մի խոսիր»,—խորհուրդ է տալիս Հովհան Վասիլեբերանը, թարկը տուր... քննել, թե ինչու չե այսինչը հարուստ, իսկ այնինչը՝ աղքատ», վորովհետև այնքան ել հետաքրքիր չպիտի լինել, պետք է լսել և վոչ թե փնտռել, թե ինչու չե այդ այդպես: Չե վոր աղքատությունից արդար մարդը փնաս չի քաշում. «նա աղքատ է, բայց բուրրովին ել փնաս

չունի» (զրույց 29-րդ՝ Կորնթացոց \ թղթի ամթիւ)։  
Յեթե աստված աղքատներին ստեղծած չլիներ, — ասում ե թեդորիտ յերանելին, — այն ժամանակ վոչ մի մարդ չեր ուզենա աշխատել։ Այն ժամանակ, — կարծում ե թեդորիտը, — բոլոր սրբերն ել սովից կկոտորվելին»։ Ախր «չեթե հարստութունը կարողանար բոլորի սեպհականութունը լինել, այն ժամանակ ի՞նչ կուզենար խոհարարութուն «անել», ոջախի առաջ կանգնել... կերակուր պատրաստել .. խմոր հունցել, թոնրի կողը տալ, այրող կրակին դիմանալ»։ Յեթե այդ այդպես լինի, վայ թե հրաշագործն ինքն ել ազիզ որին առանց հացի կտորի մնա։ «Ել ի՞նչ կուզի վար ու ցանք անել»։ Սրբերը վարիլ չգիտեն։ Թողնես լավ բուրվառ գցեն։ «Ո՞վ պիտի քար տաշի»... տունը շինի։ Չէ՞ վոր միայն սո՞քն ե ստիպում աղքատին բանել (Ճառ վասն նախախնամության, 6-րդ)։

Ուրեմն, ձրիակեր սևագլուխները, աստվածահաճոներն ու խցերի ճգնավորներն առանց աշխատանքի անհնարին ե, վոր չուա գնան։ Թո՞ղ քաղցած գեղջուկըն հա իր կուզը դեզերի տակ ու կալերի մոտ կուացնի, — տեր վանահայրը կույս մայրապետին իր ծնկանը պիտի նստեցնի ու յերկուսը միասին լուսամուտի առաջ լուսնին նայելով, դուետ ալելույա պիտի յերգեն՝ — քնքստալով ու զուզա տալով։ Կրի, կրի գեղջուկ, աշխատանքը հիմարներին ե սիրում, իսկ մենք քեզ, մեղավորիդ համար աստծուն կաղոթենք։ Թեևերդ քըլտի, ու շուռ տուր։

Թեխդ չճոռես ու դես դեն նայես, ուրիշի ունեցածին մտիկ անես։ Այս քանը 10-րդ պատվիրանով խստիվ արգելվում ե։ Ավելի լավ ե դու քո աչքդ հա-

նես, կացինով ձեռքերդ «կտրես»,—սիրալիր կերպով խորհուրդ ե տալիս Մատթեվոս ավետարանիչը,—միայն թե չհրապուրվես բուրժույի բաժնով, վորը նրան աստված և տվել, «լավ ե քեզ՝ անդամոց միում կորնչիլ, քան չեթե ամենայն մարմին քո անկանիցի ի դեհեն. (լավ ե քեզ համար վոր քո անդամներից մեկը կորչի, քան թե քո ամբողջ մարմինը պեհենն ընկնի), (Մատթեվոսի V, 30): Յեթե ճոխության մեջ հրճվողի կողքին աղքատները ճնշումներից ու հոգեվարքի ճիչերից թուլանում են, դու չիլ մի հարցնի. ինչո՞ւ համար ե ինչո՞ւ և այլն: Տիրոջ ճանապարհն անհասանելի չե: Մի ջանալ հասնել նրան քո խելքովդ:

Նայիր չերկնքին, այնտեղ ել վոչ մի հավասարութուն չկա: «Այլ ե փառք արեգակն, այլ ե փառք լուսնո և այլ ե փառք աստղաց» (Թուղթ առ կորնթացիս, XV, 41):

Այսպիսի կարգ ե տերը հաստատել, այդպես ել հավիտյանս հավիտենից կմնա այն, և քանի դեռ արեգակն աշխարհի վրա փայլում ե, հարուստն ու աղքատ միշտ կողք-կողքի, իրար հետ պիտի ապրեն «հավիտյան» ձեզ հետ աղքատներ կլինեն «(Մատթեվոս XXVI, 11): Վոչ մի կոմմունիզմով մարդիկ աղքատությունը չեն կարող վերացնել:

Աղքատությունը հավիտյան կմնա, և ստացվածքային խտրությունն ու դասակարգերը հավիտյան պիտի լինեն: Զի յաստուծո յի այս (աստծու գիրքն հայս):

ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ  
ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿՐՈՆ Ե

Քրիստոնեկությունը՝ աստծու անունից դասակարգային հակասությունների մղձվանջը քողարկող կրոն է: Քրիստոսը ձրիակերների դասակարգային իշխանության զինքն է: Նրա անունից քրիստոնեությունն օրհնում է բուլժուակաճ օհնագործման յեզ ճեհավասարության այլասեռված ուսմունքը. քրիստոնեությունը բուրժուակաճի դասակարգային կըրոնն է, կապիտալիստական հասարակարգի կրոնն է՝ նրա քաղցի, աղքատության ու անառակության հետ միասին:

Յեկեցիցին կուշտ մարդկանց ճնշումը քաղցածների վրա վոսկե խաչով է որհնում, աղքատներին դեպի կապիտալի դահիճների ճիրանները վոսկե խաչով է քշում: Խաչն ու մտրակը, տերտերական բուրվանն ու վոստիկանական բուռնցքը, յեկեղեցու բեմն ու զելարանը (տանջիլ և գործիք) — ահավասիկ քրիստոնեյական-կապիտալիստական ռեժիմի դադափարական ուժի զենքը: Առաջին հայացքից ստրկությունը ծանր է թվում ստորադաս յեղիր տերերի իշխանությանը, — ասում է Թեդորիտ յերանելին, — սակայն «յեթե ամեն բանի մեջ թափանցես...» ինչպես պետքն է, ապա կտեսնես, վոր դրա մեջ շատ և մեծ ոգուտ կա:

Տերերի իշխանությունը ստրուկի զլիսին աստծու որհնությունն է թափում: Հլա մի մտրակին նայիլի. նրա կոթի ծայրից աստծու վոգորմությունն է կաթում, վորը նույն իսկ մարդն աչքով է տեսնում իսկ ողի մեջ նրա շառաչը՝ սուրբ հողու թուխքն է հի

շեցնում: Ծճունկ չոքիր և հանուն տյառն համբուրիր մտրակը:

**ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՈՒՆՆ ՍՏՐԿՈՒԹԱՆ ԿՐՈՆ Ե**

Ստրկությունը հավատացյալի համար կարող է յերանուծյան ու բավականութեան աղբյուր լինել, վորովհետև «տիրոջ կոչած ստրուկը տիրոջ ազատն է» (1 կորնթացոց Vll, 22): Ուստի—դուք ծառաներ, ամենայն յերկյուզածութեամբ հնազանդ չեղեք վոչ միայն բարի ու հզոր տերերին, այլև դաժաններին» (1 Պետրոսի, 2. 19): Դուք խոհարարուհիներ և աղախիներ ծնկաչոք գնացեք տիրուհիների (խանութների) առաջ, վորովհետև ամեն մի տնտեսուհի ձեր մեծն է, ու նրա իշխանությունը ծառայի վրա «աստծուց է» (Հռոմայեցոց 8, 1): Իր տիրոջը հակառակողն աստծուն է հակառակում (Հռոմայեցոց, 8, 2): Յեվ չեթե տիրուհին բարկանա Վացարարուհու վրա, վար սպիտակեղենը լավ չի Վանում ու սկսի նրա աչք ու յերեսին սրբիչով խփել, թո՛ղ Վացարարուհին չհանդգնի հակառակվելու տիրուհու «վճռին»: Հնազանդ չեղեք, դճւք, ըստրուկներ, ձեր տերերին այնպես, ինչպես Քրիստոսին» (Յերբրայեցոց, Vll, 5): «Ի՞նչ է նշանակում»,—մտածում է ստրուկը: Հլա եղ ազնվական քաչալ գարձվորին վոնց ա իր տանը, դարավանդի վրա նստած՝ գործած բազկաթոռին չուվել ու բղավում. «Հէ՛յ դճւք, իշագլուխ, ծուռվոտանի գեղջուկներ ծառայեցե՛ք ինձ այնպես, ինչպես Քրիստոսին, գորոցե՛ք իմ առաջ այնպես, ինչպես աստծու առաջ»:

Ա՛խ, յես քեզ վոնց կդողացնե՛յի՝ պատեպատ տալով:—մտածում է գեղջուկը, բայց չի կարելի մինչև անգամ քթի պզուկն ել մեղքի համար է գեղջուկի

քթին աստված կպցրել: Գեղջուկը լոռւմ է, աստիճաններ  
 իրար սեղմելով, վորովհետև գիտի վոր աստծու դեմ  
 մեղանշում է, գիտի, վոր խոստովանեցնելու ժամանակ  
 տերտերը հարցնելու չի իրեն՝ «մտքումդ հո՞ չես տըր-  
 տնջացել մեծիդ դեմ»: Բրիստոնհյուսթյունը՝ ճնշողնե-  
 րի ու ճորտատերերի կրոն է, ճորտության, ծառայու-  
 թյան, ստրկության ու նվաստացման կրոն է: Հավա-  
 տացալը պետք է խմանա, վոր բոլոր «սլաւոփոստու-  
 թյունները» նրան աստվածանից են գալիս», և վոր  
 «նրա զարմանալի վողորմածությունը դրանից է յերե-  
 վում», վորովհետև «աստված վոչ թէ մեզ վոչնչացնե-  
 լու համար է անում այդ, այլ ուղղելու»: Այդպես էլ  
 բարեպաշտ մեծամեծերն ու իշխաններն են վարվում,  
 վորոնք իրենց հպատակներին հրամայում են, «թո՛ղ  
 բարին լինեն», հրամայում են ու մեջքին ճիպոտելով,  
 հրամայում տանջում, ու գլխին դազանագելով խելք են  
 սովորեցնում, ու, թեև ծեծում են, բայց մահը չեն  
 բերում: «Դապիր այս ու չարիքով պաշարված որհնիր  
 աստծու վողորմության մեծությունը» (Տիխոն Զադոն-  
 ւածկի՝ «Ոցի նամականի»—49-րդ):

«Ել թո՛ւ զովասանք, յերբ հանցանքի համար ձեզ  
 ծեծելիս դուք՝ համբերում եք: Աստված դրա վրա խակի  
 յել ուշադրություն չի դարձնում: Վո՛չ, չեթե բարու-  
 թյուն անելով... համբերում եք», շնորհակալության  
 փոխարեն բերաններիդ են գալիս,—այ՛ զաստծուն եղ է  
 հաճելի» (1 Պետրոս, 11, 20): Վորովհետև աստված  
 այսպես է ասում «յերանի յե՛ ձեզ, հորժամ անգոսնեն  
 զձեզ»—յերանի՛ ձեզ, յերբ կանարգվեք դուք»—վողո-  
 ցալին խոսքերով ծաղր ու ծանակի առարկա կդարձ-  
 նեն և յերբ ձեր ռեխը կջարգեն: Յերանի բոլոր նը-

րանց, ում վղակոթին տվել են, «չերանի՛ վոր հալած-  
յալ իցեն» (Մատթևոս, V, 10) պաշտոնից, թե ինչի  
համար, այդ միևնույնն է, գողության համար՝ լինի,  
թե կաշառի. յերանելի կլինեք դուք, յերբ պոչատակ-  
ներիդ ծնկով տալով՝ «հալածեսցեն» ձեզ. յերանի բոլոր  
նրանց, ում ուխին են տալիս, վորովհետև ամեն մի  
կապտած տեղ, ամեն մի ապտակ, վոսկրի ամեն մի  
ջարդվածք փառքի ճանապարհն է (Ղուկաս VI, 35), յեր-  
կընքում սպասում նրան, ով մեկ յերեսին խփելուց՝  
մյուսն է դեմ անում:

Իսկ յերբ, բարեպաշտ քրիստոսասերներ, ձեռք-  
ներդ հետևներդ դարձնեն կամ աչք ու յերեսներդ ամ-  
բողջովին արնվիկ շինեն... այն որը ցնծացեք և ուրա-  
խացեք (Ղուկաս, VI, 23), զայս բարբառելով—և վճի-  
տեղից զառավ ինձ այս բախտավորությունը, դուզ քը-  
թատակիս տվին: «Որհնյալ յեղեցի անուն բարձրե-  
լույն»:

Յերանի այն մարդուն, վոր ցերեկը «լապտերնե-  
րով» է ման գալիս, վորովհետև տերն այսպես է ասում.  
մոտենում է ժամանակը, յերբ ձեզ սպանող ամեն մե-  
կը պիտի մտածի վոր դրանով նա աստծուն է ծառա-  
յում» (1 Հովհաննու. XVI, 2), և «չեթե աշխարհ ձեզ ա-  
տի դիտցեք, վոր ինձ ամենից առաջ է ասել (1 Հով-  
հաննյու, XV, 18). աշխատեցեք և նմանվեցեք»: Վոր-  
քան վատ, այնքան՝ լավ: Վորչափ նողկանք՝ այնչափ  
խրախճանք:

Ուստի, «որհնեցեք զհալածիչս ձեր» որհնեցեք ձեզ  
հալածողներին (Հռոմայեցող XII, 14), «չարության,  
հայրոյանքի փոխարեն որհնեցեք» (1 Պետրոսի III, 4):  
«սիրեցեք զթշնամիս ձեր» (Մատթեվոսի V, 44), իսկ

ձեր մերձավորներին ատեցեք, վորովհետև «մարդու թշնամիներն իր տանեցիք են» (Մատթևոսի, X, 36), «Յեվ ո՛վ չատի թե իր հորն ու մորը, թե կնոջը, թե չերեխաներին, թե յեղբայրներին, թե քույրերին, նա չի կարող իմ աշակերտը լինել» (Ղուկասու XIV, 26): Կրոնն ասում է. «պատվիր քո հորն ու մորը»: Ա՛յ, դու նրանց պատվիր, հա՛, միայն թե՛ թևերդ քշախր, — դմսկով հորդ կողքին, մորդ ել՝ հեզ աչքերին, այն ժամանակ ճհայրը վորդու դեմ կլինի, իսկ վորդին՝ հոր, մայրն՝ աղջկա դեմ, իսկ աղջիկը՝ մոր դեմ»... (Ղուկաս, XII, 59) ու կսկսեն գրել... «Ըստ գրոց» ե: Արդ թշնամուդ սիրիք, իսկ հորն ու մորդ աշխատիր ամենայն սրտով ատել: Բկից բռնիր, տակդ դիր: «Վորովհետև աստծուն հաճելի չեր — խենթությամբ... փրկել հավատացյալներին» (Վ Կորնթացոց I, 28):

«Աստված աշխարհի իմաստուն բանը չի ընտրել». վորքան հիմար՝ այնքան ել սուրբ, ընտրել է աստված...: Աշխարհի թե տկարներին, թե աննշաններին, թե կորած-մոլորվածներին ու վոչինչ չիմացողներին, բոլոր ապուշներին, բոլոր բթամիտներին, բոլոր այլանդակներին տերն իր մոտ է հավաքել (Վ Կորնթացոց I, 27—28), «վորովհետև աստծուն հաճելի չեր — խենթությունով... փրկել հավատացյալներին» (Վ Կորնթացոց I, 23), «վորովհետև այն բոլորն, ինչ մարդկանց մոտ բարձր է, աստծու մոտ պղծություն է» (Ղուկասու XVI, 15), և ընդհակառակն, մարդկանց համար ամեն մի պիղծ բան աստծուն խիստ հաճելի չէ:

ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐ-  
ԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՌՑՆՈՂ ԿՐՈՆ Ե

Խենթությունն աստծու փառքի ճանապարհն է։ Ուստի, յեղբարք իմ, յեթե կամենում եք տիրոջ դրախտն ընկնել, — խենթություն, ալլանդակություն — արեք, հիմար ձեացեք, ձեզ ապուշների տեղ դրեք, խրտվիլակների խեղկասակություններ արեք, խելքը թոցրած ձեացեք, փոքր ու անխելք չերեխանների նրմանվեցեք։ Այսպես է ասում աստված. «Ճամարխտն եմ ասում ձեզ, յեթե չդասնաք... հիմարներ...» ու չընմանվեք չերեխաներին, յերկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթևոսի, XVlll, 3)։ Իսկ աստծու արքայության մեջ ամենամեծը նա կլինի, ով «չերեխայի պես կաղոթի» (Մատթևոսի XVlll, 4)։ Արդ, «չեղեք այնպես, ինչպես չերեխաներն են», — գեղջուկի միրուքը պորտն է հասել, իսկ ինքը հլա վոր ձգտում է աղոթել. «Ինձ ձեռքներիդ վրան առեք, ուղղափառներ, թե չե՛ աստված ինձ մեծ մարդու տեղ կդնի»։ «Ով... մըտածում է այս կյանքում իմաստուն լինել, նա անխելք պիտի լինի, վոր խելացի լինի» (Վ Կորնթացոց lll, 18)։ Վորքան դատարկ է մարդու վերնատուն, այնքան աստծու մոտ նա չե իմաստուն։

Այդպես էլ գրված է՝ «այս աշխարհի իմաստությունն աստծու առջև անխելքություն է»... (Վ կորնթացոց lll: 19)։ Բայց «աստված աշխարհի իմաստուն բանը չի ընտրել»... վորքան հիմար, այնքան սուրբ... «աստված աշխարհի տկարներին է ընտրել»... քուր ալլանդակներին տերն իր մոտ է հավաքել (Վ Կորնթացոց l, 27—28)։ Այդպես էլ կտակեց առաջին մար-

դուն դրախտում, «չուտես գիտութեան ծառից»։ Այն քեզ բան, ես ի՞նչ նորութիւն, տո՞ւ... գիտութիւն բարձր և չարի՞... (Ծննդոց, 11, 17)։ Մարդու ինչի՞ն է պետք իմանալ։ Ավելի լավ է՝ վոչինչ չգիտենալ։ Չե՛ վոր թուլամիտներն աշխարհի ամենաբախտավոր մարդիկն են, բնածին ապշութիւնը չերանելի վիճակ է»։ Յես այդ բանի վրա թքել եմ,—ասում ե բուրժուշը—  
—հիմարները կգնան դրախտ, թե խելոքները,—միևնույնն է, դրախտն ինձ հարկավոր չի։ Թող Քրիստոս բոլոր հավատացյալներին սպուշ դարձնի, բայց մենք թույլ չենք տա՛ մեզ հիմարների տեղ դնելու։ Եղ ի՞նչ հիմարութիւններ է դուրս տալիս, ե։ Մեզ ինչ, վոր ուղտերի հե՞տ է հավասարեցնում։ Ինչո՞ւ յե բանվորներին ներշնչում այն միտքը, իբր թե հարուստները չերկնքի արքայութիւնը չեն կարող ընկնել։ Այսինքն ի՞նչ,—հուզվում ե բուրժուշը։—Այստեղ Քրիստոսի կողմից մեր դեմ վորեք դավաճանութիւն չկա՞, արդոք։ «Յեղբարք իմ,—պատասխանում ե նրանց Քրիստոսը» «Թող ձեր սիրտը չհուզվի»։ Աստուծո ձեռքին ամեն բան հնարավոր է, դուք ել չերկնքի արքայութիւնը կընկնեք, բա հարկավոր չի՞ պրոլետարին ել մի բանով մխիթարենք։ Իսկ մենք ձեզ հետ կզոզվենք։ Դուք ինչո՞ւ չեք հուզվել, հիմարներ։ Յես «չո՞ւ» ասեմ—Դուք «Չան» հասկացեք։ Այն տեղը, ուր ավետարանի մեջ ասված է՝ «վա՛յ ձեզ, հարուստներ», ուղղակի մի ողանցք է. այդ նրա համար ե շինված, վոր նրա միջով մեքենայորեն ու իր ժամանակին կարողանա դուրս գալ պրոլետարների բոլոր այն հեղափոխական փողին, վորը նրանք մեր դեմ են կուտակում։ Իսկ դո՞ւք, աղքատընկերներ, բուրժուշներին մտիկ մի անեք, արհամար-

հանքով յերևս դարձրեք նրանցից, վորպեսզի ձեր բարեպաշտ սիրտը չտխրի աստվածուրացների մեղքերի համար:

**ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԵՂ-  
ԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՀՆՈՂ ԿՐՈՆ Ե**

Յեվ, վորպեսզի արդարների բարեպաշտ հայացքները պաշտպանած լինի հաստազրպանների հագեցած ու ամեն տեսակ հղփացումներով լի կյանքի պատկերից, սուրբ յեկեղեցին իր սև քղամիդի լացն փեշով քողարկել ե իր սիրելի պարագիտներին: Յեվ, պոռնիկ կնոջ պես իր արմաստյա ու մարգարտաշար թագը կընացրած բանվոր դասակարգի դահիճների ուսերին՝ կըքոտ շնջուկով դռացնում ե նրա ականջին. «Ուրախ կեր քո հացը և ցնծությամբ, խմիր քո գինին... ու վաչելիր կյանքն այն կնոջ հետ, վորին դու սիրում ես»: Միայն թե «մի հղփանա... վորովհետև հղփացումը խոլերի չե հասցնում»: (Յեսայի Սիր. XXXV||, 32), սակայն, մի ամաչիր, զաստված ինքն ե մարդուն հարստություն ու ստացվածք տվել, նրան իրավունք տրվել ոգտվելու դրանից... և վաչելիու: Հարստությունն աստծու տված պարգևն է:

«Աստծուն՝ աստծուց ե, բայց պիճկածս կաշուց ե», — շնջում ե ըուրժույն ի պատասխան՝ գլուխը տերտերական դելրի տակից դուրս հանելով: «Մճւս կաց—սիրալիր գրում ե նրան յեկեղեցին:—Ազնիվ դողին, ամեն բան՝ ժամանակին», դու չես զողացել, բայց մարդ չի տեսել, իսկ աստված թեև տեսավ, բայց բան ել չասավ: Հրես պասը կզա,—կապաշխարիս, իսկ տերտերը շուրջառով քաշալդ կծածկի ու մեղքերդ մտաբերող չի

լինի: Ամեն տեսակ դրուժյունից չեւք կգտնեք. չեթե կողոպտել ես շատ, վողորմություն տուր առատ, աղքատները քո մեղքերի համար կաղոթեն, վորովհետև տերն աշապես ե ասում, «անաղար հարսաությունով ձեզ բարեկամներ ճարեք» (Ղուկասու XVI, 9): Թող այդ վոսկին կողոպտված լինի—աղքատներին պոռններ բաժանիր, գեհնի փոխարեն՝ չերանելի քերովբե կը դառնաս, վորովհետև, ասված է՝ «չերանի աղքատաց» բայց տալն ավելի չերանելի բան ե, քան առնելը (գործք առաքելոց XX, 35): Մի մանեթ գողանաս՝ մի կուպեկ պիտի տաս. մարդու կշանքը խորտակես, մի կուպեկով նրան վոտով-գլխով կգնես, իսկ ինքդ սրբերի դասը կդասվես, բա ել ի՞նչ եք ուզում, ել սրանից հարմար բան կգտնեք: «Յերանի վողորմածոց» վորովհետև նրանք իրենց կողոպուտի համար «գողորմություն գրացեն»: Նույնպես չերանի բարեպաշտ թալանչոց, քանզի բազում են վարձք նոցա չերկինս, աստ, հաշխարհի՛ ի շարս մեծատանց, և հերկինս անդ—ի շարս սրբոց:

Միայն այնտեղ ե բարեգործությունը հնարավոր, ուր քայքայում ե տեղի ունենում: Չի կարելի վողորմություն ստեղծել, առանց աղքատություն ստեղծելու, աշապես ե ասում տերը «ծախեցեք ձեր կալվածներն ու վողորմություն տվեք» (Ղուկասու XII, 33): «Բան, բան,—կքորի գեղջուկը պորտատակը, լավ ե են մարդը կալված ծախի, ով ունի». Սրանից ի՞նչ դուրս յեկավ: Վորպեսզի փրկվես, սկզբից կալվածատեր պիտի դառնաս: Ամա թե կրոն ե, հա՛:

Բա պրոլետարն ի՞նչ անի: Նա չերեք արշին գերեզմանատեղ ել չուսի: Բա նա ի՞նչ ծախի: Ի՞նչ վերաբերում ե կալվածատիրոջը, նա, ի հարկե, ամբողջ

կալվածքին խակի ձեռք ել չի տա, վորովհետև... մի տեղ կկտրացնի, կող ու կուշտը վրա կպցի,— մեկ ել են տեսար՝ վողորմության համար տաս տարվա պաշար հավաքվեց: Յեվ այն ել ասած. ավելի լավ ե ինքը տա, քան սպասի վոր գեղջուկները գան, յեղած— չեղածը ձեռքից խլեն ու դեռ դռան սողնակն ել հանեն, քաշալ գլխին իջացնեն: Ուստի վողորմած չեպք, և տերն ել ձեզ կողորմի: Քրիստոնեյությունը կեղծավորության ու ստի կրոն ե: Այդ սուտը կապիտալի փրկությունն ե: Կապիտալի համար այն «կենարար ջուր ե»: Իսկ բանվոր դասակարգի համար՝ դուրեկան, հաշիշ, բայց մահաբեր թուչն:

**ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻՆ ԽԱՐԵԼՈՒ  
ԽԱՅԾՆ Ե՝ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱՐԹԻ ԾԱՅՐԻՆ**

Քրիստոնեյությունը մի զենք ե շահագործողների ձեռքին՝ իրենց դոհի դասակարգային զգացողությունը բխացնելու համար: Ձեր ճարը Քրիստոսն ե,— ասում են նրանք բանվորներին,— նա «խոցվեց մեր մեղքերի համար և տանջվեց մեր անորենության համար. մեր աշխարհի պատիժը նրա վրա թափվեց և նրա վերքերով մենք կբուժվենք .. Վոչխարի պես սըպանդանոց տււրվեցավ և գառան նման իր խուզողի առաջ անմուռնչ մնաց» (Յեսայի, III, 4—7): Ահավասիկ ձեր փրկիչը, պրուետարներ. ինչ՞ու կուլեք՝ բուժվեցեք նրա վերքերով: Ահավասիկ նրա անարատ մարմինը՝ պարուրված ձյունաթուլր սավանով, հպվեցեք նրան ձեր շրթունքներով,— նրա մարմինը գարշահոտ չե, նա վարդի հոտ ե բուրոււմ. համբուլր տվեք նրա վոտքերի ու ձեռքերի աստվածային խոցերին՝ պամված անա-

րատ մեխերով... Ե՛յ, Յեխտո, աղջի ի՛նչ ես հորանջոււմ, — համբուրիւր սրբազան բեռնները՝ մինչև գետին կռանալով, աստծու մարմինն արդեն սրբացրել է այդ բոլորը:

Յեվ պառկած է փրկիչը «իբրև վորոճ»: Նայեցե՞ք նրա վշտահար դեմքին՝ իսկապես վոր՝ վոչխարի կերպարանք ունի — հեզ, խոնարհ, յերանալետ, անմեղ ինչպիս յերեխայինն է, իսկ նրա ճակատին «վասն մերո փրկության» թափված արյունն է: Մանր է նայել անորեն դատավորների ձեռքով տանջված արդար դատավորի այդ չարչարանքներին. հոգին վշտից տկարանում է, արցունքներն իրենք իրենց անլնդհատ քամվում են աչքերից, ինչպես նավթը փայտե անոթից:

Բարբարոսները «թքում եյին նրա յերեսին» (Մատթեվոս, XXV, 6—7), և նա լռում եր: Հը՛, պրոլետարներ, դժւք վոնց, կթողնե՞ք, վոր ձեր ուխտն էլ թքեն: Համբուլը տվեք նրա բաց, թքակոլոլ այտերին ... «գավազանն առած՝ գլխին եյին տալիս» (Մատթեվոս, XXV, 30) իսկ դուք, նարմանագո՛ւնքներ, չեք թողի, վոր ձեր մատին անգամ դիպչեն: Համբուլը տվեք սրբազան ուռուցքներին, վորոնք փայտի հարվածներից են ցցվել նրա գլխին:

Չէ՞ վոր մեղ համար, մեղավոր մարդկանցս համար, տերն արհամարհեց անարգանքն ու իրեն նախատինքի մատնեց: Ահավասիկ նա գամված է խաչին՝ «դատապարտված»՝ կրելով իր պատիժը, քրեյական դասի յերկու ներկայացուցիչների հետ: Տերը գամված: Տերը ժուլիկների հետ միևնույն վիճակում, ավազակների հետ մի կոմպանիայում: Նրա թևերը սաստիկ ձգված են գերանի վրա ու մեխված են փայտին: Բըռ-

ներից մեկում՝ պատուված վերք, բեռնի յերկաթե դը-  
լուխը ժանգոտել ե արլունից .. մլուս ձեռքի վոսկոր-  
ներն են ջախջախված, ամբողջ թաթը կախ ե ընկել  
դեպի ցած: Վերքը բաց ու խուփ ե սնում, կոնատա-  
կով ու ամբողջ կողքի վրայով արլուն ե հոսում: Անա-  
սելի, աննկարագրելի լեն տիրոջ չարչարչանքները:  
Քրիստոսն ինքը լերկար ժամանակ չեր կարողանում  
վճռել՝ հերոսութունն դործելու: «Հոյր, անցո հինեն  
զբաժակս զայս» («Մատթեվոս, XXV, 39»), — աղոթում  
եր նա մահապատժից առաջ: Սակայն, ինքը՝ հայր  
աստվածը չկարողացավ հարգել սիրելի վորդու խըն-  
դիրը: Վորովհետև «պետք ե կատարվեր» նրա մասին  
«զբվածը» (Ղուկաս, XXII, 37): Աստված ինքը չկարո-  
ղացավ փոխելը «զբվածքը», Քրիստոսը պետք ե հանձն  
առներ այդ չարչարանքները, վորոնց սոսկալի մահը  
պիտի հաջորդեր: Նա տանջանքով պիտի մեռներ՝ փառ-  
քով հարուժյուն առնելու համար: Նա ավազակներից  
ցած դասեց իրեն, — նա «չարագործների շարքը դաս-  
վեցավ» անարգանքի ու նվաստացման դառը բաժակը  
նա մինչև մրուրը քամեց, վորպեսզի վաղն ել ավելի  
թունդ դիպչի նրանց հավատացյալների սրտին, լերբ  
նա յերկնքից ել ավելի բարձրացրած կլինի, լերբ շու-  
շանափայլ սպիտակ զգեստներով, անասելի լույս ճա-  
ռագայթելով, անուշաբույր ու ճաճանչափայլ՝ հարու-  
թյուն կառնի նա մեռելներից: Այն ժամանակ «ի մի  
բերան» կբացագանչեն. ո՛ր, տեր, կնքիր մեր մահկա-  
նացուն. վերցրու մեզնից՝ կեղտով, խավարով ու վըշ-  
տով լի կյանքը, մեզ հաղորդակից արա քեզ, քո փայ-  
լին, ուրախության ու պալծառության: Ո՛ր, ինչո՞ւ մեզ  
ել քեզ հետ չխաչեցին: Անասման ե ազդարների ու-

բախութիւնը տիրոջ համար, ինչ անհասանելի չե աստրծու ընտրյալներէ բախտը: Բա իսկի կարելի՞ բան ե, վոր պրօլետարն եդ բախտը չուզենա: «Ել ինչ դարդ ունես, հոգնած, վաստակած յեղբայր», — քաղցր նաչելով, ինչպես կատուն դեղձանիկին, ասում ե տերտերը պրօլետարին: Հետեիք Քրիստոսին և նրա հետ հանգիստ կառնես «ի գոգս արդարոց»: Հետեիք Քրիստոսին ու խաչից սկսիր: Չե՞ վոր միակ ճանապարհն ե այդ, վոր տանում ե դեպի հավիտենական փառք և բախտ: Քրիստոս չարչարվեց վնչ իրեն համար, այլ մարդկանց համար, հանուր մարդկության համար, առանց դասակարգի խտրության, բայց և այնպես, ի հարկե, ընտրյալ մարդկանց համար, վորոնց թվում նաև քեզ համար, վորպեսզի դու չարության, կռամբարության, կոպտության, լրբության, նախանձության թարկը տաս, վոր դու մի քիչ տաշվես և չերկընքում, աստծու արքայության կարգին հասարակության մեջ կարողանաս քեզ պահել: Թե՞ գլխատման տեղը, թե՞ փշե պսակը, թե՞ ձաղկումը (ճիպտտով, մըտրակով և այլն ծեծելը), թե՞ վերքերը, թե՞ չարչարանքը խաչի վրա, — այս բոլորը քեզ համար, հատկապես քեզ համար ե արված, չեթե, բան ե, պատահի, վոր դու ցանկանաս ձիուց վեր դալ, իշին նստել: Քրիստոս իր չարչարանքներով քեզ որինակ ե տալիս, թե ինչ պետք ե անես — ուզես՝ այդ տանջանքներով կազատվես, չես ուզի՝ աշխարհի խաբուսիկ բախտի հետեից ընկնելով՝ կկորչես:

Տե՛ր, քեզ հալտնի յեն իմ բոլոր իղձերն ու հառաչանքները — բացազանչում ե հավատացյալ պրօլետարը — ուզում եմ մասնակից լինել քո արքայության:

Տեր, ուղղյա գգնացիս իմ ի ճանարհ քո (դէր իմ վոտ-  
քերը քո ճանապարհի վրա)։ Խաչեցեք ինձ։ Շճուտ խա-  
չեցեք — «կամ իմ յերթալ զկնի տլառն» (ուզում եմ  
տիրոջ հետքերով, նրա հետևից գնալ)։ Առ, առ Ֆար-  
րիկատեր սրբ արյուն իմ (խմիր իմ արյունը), զոր  
յիս հեղի վասն տլառն մերո Հիսուսի Քրիստոսի (վոր  
յիս թափեցի մեր տեր Հիսուս Քրիստոսի համար)։  
Բռներիս մեջ քառակուսի բեռներ մեխիր, գլխիս մեջ  
հինգ վերշտկանոց պտուտակավոր մեխեր հուլ պտուր,  
անդամներս հոշոտիր ու ձիգ տուր, մեխիր, հաստոցին  
(դազգյահ) կպցրու։ Այժմ նրան համոզելու կարիք  
չկա, — նա իր ճամպեն գտել է, նա ինքն է ուզում  
չարչարվել, նա ուրախությամբ կտանի տերերի բոլոր  
բարբարոսությունները։ Ցանկությունը գերությունից  
էլ ուժեղ է։ Ահա այս ճանապարհն է ցույց տալիս  
նրան այս աշխարհի հզորը վոչ թե մանեթով, վոչ թե  
մտրակով, այլ «հարությամբ տլառն» միայն։ Զատկա-  
կան կարմիր դողանջը, վոսկեհյուս մոմերը, քրամերի  
շողշողուն շուրջառները, սուրբ պաշտումի քաղցրհն-  
չուն յերգեցողությունը, — այս բոլորը միջոց են՝ աշ-  
խատավորների ուշադրությունն ուրիշ կողմ դարձնե-  
լու այս աշխարհից, ուր թեքը մինչև արմունկները  
քշտած, բավականությունից լիզելով իրենց հասո-  
շրթունքները, վորոնք պրոլիտարի արյունով են ներկ-  
ված, կապիտալի դիշատիչ գործիքները կենտրոնացած  
ու լրջորեն իրենց դաժան գործերն են սարքում ու  
միաժամանակ թագ կենում իրենց դոհի հետեր։ Ել ինչ  
դարդ ունին — չե վոր նա հավատում է։

«Յերկինք նալիր, յեթե հաց ես ուզում», — պո-  
նիկ վարձկանի, իրեն վաճառող կենակցուհու՝ սուրբ

յեկեղեցու բերանով և շահագործողը լուսավորում իր զոհին: Մնուցանել բանվորներին աստծու հույսերով, կերակրել նրանց սուրբ հոգով ու ողով—սոցիալական հարցը վճռելու ամենաձեռնտու միջոցն է այդ:

Հետևանքը լինում է այն, վոր ցորենը կիսելիս՝ տակն ընկնում է պրոլետարին, իսկ պուխը՝ բուրժուազին: Բանվորն աչքը լերկինք է զցում, իսկ բուրժուազն իր հայացը՝ յերկրին է սևեռել, հառած նայում է, աչքը առանց թարթելու և առանց կախ գցելու՝ մի կետի յե նայում: Նա հետևում է, նա հսկում է իր զոհին, իսկ պրոլետարը ինքն իրեն է գալիս նրա ուղեկանը, նրա կարթն ընկնում ու վոչնչանում, ինչպես թիթեռը կրակի մեջ:

### ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՄԱՆ ՅԵՎ ՍՏՐԿԱՑՄԱՆ ԿՐՈՆ Ե

«Աղոթիր, աղոթիր,—ձայն է տալիս բուրժուազը բանվորի ականջին: Ու բանվորն աղոթում է ամենալավ բաժնի համար, իսկ ինքը բուրժուազին տալիս է այն բոլորը, ինչ իր ձեռքովն է պատրաստել, վորի կարիքն այնքան զգում են թե ինքը, թե իր ընտանիքը՝ ամբողջ կյանքում, վորով և նրա տերերը հարցատանում են: Տալիս է ու աղոթում. «տո՛ւր տեր»: Նա չարչարանքներից տկարանում է ու խնդում աստծուն՝ ել ավելի շատացնել այդ չարչարանքները: «Տէր, ուսո ինձ դարդարություն քո» (Տէր, սովորեցրո՛ւ ինձ քո արդարությունը): Տէր, սովորեցրո՛ւ ինձ քո համբերությունը: Սովորեցրո՛ւ ինձ զնալ քո ճանապարհով, վորպեսզի իմ վոչ մի խոսքը գործից չչեղվի: Դու մեզ համբերություն եյիր սովորեցնում և ինքդ այստեղ

խաչի վրա համբերում ես: Իր կուրծքը կոծելով, քրիստոնիան վսեմ յերդում ե տալիս, «կառնեմ իմ խաչն իմ ուսին ու կգամ քո լետեից, տեր ե... Ո՛ր միաչն թե ուշ՞ ունենային... լես անարժանս չարչարանքների մեջ կպերսպանցեմ քեզ: Պատանձված ու քարացած կանգնել ե քրիստոնյան,--չկա մի զոհ, վոր ի փառս նախասոված, անարգված, նվաստացած փրկիչ աստծու համար նա չբերիր: Տիրոջ անձնազոհության պատկերով, նա կարեկցությամբ ե լցվել: Ջերմեռանդութունից աչքերը փոս գցելով ու հիացմունքից բերանը բաց՝ նա պատրաստ ե լեզվով բռնել Գրիստոսի վերջերից ծորացող մուգ-կարմիր հեղուկի կաթիլները: Վոչ վալրույթի, վոչ ել վրեժի զարգացում ունի նա դեպի դահիճները: Ուրեմն, այդպես ել պետք ե, լեթե տերն այդպես ե կամենում: Կամավոր նվաստացման ամբողջ այդ անմիտ պատկերի մեջ նա անարգանք չի դրում, նա չի դրում այն, վոր համակվելով Գողգոթայի տրամադրութուններով, նա իր մեջ զարգացնում ե լծի համար ընտելացրած տավարի, գրաստի բոլոր այն զգվելի հատկանիշները, վոր բուրժուազիան ե ցանկանում նրա մեջ տեսնել, նա բթացել ե: Նրա մեջ բթացել ե այն ամենը, ինչ մարդկային ե. աշակերտն իր ուսուցչից բարձր չի (Մատթևոս, V, 24), շշնջում ե նա դողդոջուն շրթունքներով,—նա պատրաստ ե գերազանցել նրան՝ ինքնախարազանման, ինքնահողոտման, ինքնաթքման ե ինքնանվաստացման հերոսությամբ: Յես մի ճիճու յեմ ե վոչ թե մարդ, անարգանք ե արհամարանք (գիրք սաղմոսաց XX, 7): «Իմ գործած բազում մեղքերը հիշելով, նզովյալս դողում եմ»: Մարդիկ ստրուկներ են, վորոնք վոչ մի արժեք

չունենն (Ղուկաս, XVII, 10), գոչութեան սկզբի որից անարժան, անիծված, արհամարված, նդովված: Ի՞նչ պատիվ ասես, վոր քրիստոնյան չի տալիս՝ աստծու առաջ աղոթելիս: Հալհոյում ե, վատրանում ե, ու ալնպիսի անուններ կպցնում ինձ, վոր լեզուն պտտում ե և կարծում ե, թե խոզի նման ցեխում այդպեռ թավալելն աստծուն հաճելի լի:

Քրիստոնեյությունը՝ անասունների պես ունևորներ հնազանդեցնելու կրոն ե:

Քրիստոնեյությունը մարդուն քայքայող, նվաստացնող, սեպհական արժանապատվութեան գգացումից զրկող, բարոյական հյուծախտի մատնող կրոն ե:

Քրիստոնեյությունը շահագործողի վտաքին չերկաթի մի կոշիկ ե, վորով աշխատավորի գլուխը գետնին ե սեղմում ու վտանակոխ անում նրա կամքը:

### ՔՐԻՍՏՈՆԵՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՈՒՄԺՈՒԱԿԱՆ ՃՈՐՏԱՑՄԱՆ ԿՐՈՆ Ե

Քրիստոնեյությունը պրոլետարական ճորտացման հոգևոր զենքն ե, շահագործողների ձեռքին: Խաչից, չարչարանքի այդ գործիքից, պրոլետարական հուսո խարիսխ շինած — քրիստոնեյությունը խաչում ե աշխատավոր մասսանների գիտակցությունն ու կամքը. քրիստոնեյությունը համբերութեան, անհրաժեշտության ու պայքարի անհնարինութեան բուլթ գաղափարն ե մեխում նրանց գլխի մեջ: Քրիստոս, «բարձ զմեզս աշխարհի» ի վերա քո, (Քրիստոս, աշխարհիս մեղքերը քեզ վրա առ): Քրիստոս շահագործողների աշխարհի փրկիչն ե, վոր ստրուկներից պահանջում ե հնազանդվել, չերբ նրանց ծածում են, պրոլետարներ:

րից պահանջում է, վոր նրանք անտրտունջ տանեն իրենց տերերի բոլոր բարբարոսությունները: Քրիստոս, վոր կանչում է հրաժարվել այս աշխարհից հոգուտ հարուստների, շնորհիվ տեսերների ձեռքի ճարպիկության՝ ճնշողերի պաշտպանն է դառնում:

Քրիստոնեյական գաղափարի հիմքը կամավոր սարկությունն է՝ հոգուտ ունեւորների: Նրա գլխավոր նպատակը — դասակարգւիւն հակասությունների սըրբությունը բթացնելն է: Աշխատավորներին հանգըստություն խոստանալով, քրիստոս նրանց կապիտալի լծի տակ է տանում: Ստրուկների կրոնը, աղքատների ու ճնշվածների կրոնը ունեւորների գաղտնի կենակիցն է: Քրիստոսի պատկերը, իրենց ստոր առաջնության ու զազիր մեծության այդ հենարանը, նրանք ձգտում են թշվառ մերկության համար զրավիչ դարձնել: «Ահա թագավորն ձեր, պրոլետարներ» (սա չե ձեր թագավորը պրոլետարներ, ) — ասում են նրանք բանվորներին: «Վոչ թե մեր թագավորն է, այլ ձերն է: Պրոլետարի թագավորը, հյուսնական համքարական (vex) արհեստավոր թագավորը — հյուսնի վորդի յե: Վոչ բուրբոնն է, վոչ, դեսպոտ է, վոչ դաժան բռնակալ, այլ հեզ վորպիս վոչխար, գառն-աստժո, պարզասիրտ, անվըրդով հորթ մի թագավոր է: Բայց լեթե լերկրավոր թագավորները իրենց բարձր հոչակավոր ցեղով են պարծենում, ապա ձեր պրոլետարական թագավորն են տեղինն է բռնացնում, վոր էլ դեն գնալու տեղ չկա: Արհեստավոր թագավորը, ձղված-ճոթաածների փրկիչը աստվածալին ծագում ունի: Նրա հայրը սուրբ հոգին է լեղել, իսկ մայրը սուրբ կույս Մարիամը, վորը կույս եր և սուրբ կույս մնաց՝ վորդին աշխարհ

Կալուց հետո՝ Ուրեմն աշխարհ բերել է, իսկ ծնելը — չի ծնվել, յերկրային թագավորներինց ճվ ունի այդպիսի մայր։ Հրաշք է այդ աստվածա-մարդի աստված-վոչխարի աշխարհ գալու պատմությունը Տիրտերական մագոտ մեկ գլուխ չի, վոր մտածել է, այն հարցի վրա, թե ինչպես մի անձի մեջ ձուլեն թե ամենագոր յերկնային թագավոր-փրկչին թե իրավազուրկ՝ պրոլետարական միջավայրից դուրս յեկած թագավոր-փրկչին։ Ի՞նչպես-ձուլեն գառն աստծու հետ և Քրիստոսը վոչխարի հետ։ Յեվ ամեն բան շատ տեղին ու կոկ է դուրս յեկել։ ճղված-ճոթված թագավորը վոչ պալատից, վոչ թավշյա գահից, վոչ ել արքայական վոսկե գալիսոնը (գավազանը) ձեռքն է կառավարում իր հպատակներին։ Վոչխարի փարախի մսուրում ծնված, մանկությունից խոզային այդ պայմաններին ընտելացած, կեղտոտ ավելը ձևքին գոմաղբի (փեյին) կիտուկի վրա նստած, բոլոր աղքատներին նա ցույց է տալիս յերկնքի իր թագավորությունը։ Մարդկությունը պատրաստ է խեղդվել կապիտալիստական ճրնջման ծանրության տակ։ Յերկրագունդն արյան մեջ լողում է—աղքատները տնքում են, զինվորները պատերազմի դաշտում մռչում են, հազարներով սողալով դիակների միջով ու քարշ տալով իրենց հեռեից պոկված ու շախվախված անդամները, մարդիկ մեկ մեկու կտոր-կտոր են անում, մարմնի մեջ յերկաթե սրեր ցցելով։ Գիտնականները մտքերի մեջ խորագուզված՝ կռացել են իրենց գծած ծրագիրների վրա, ընտրելով մեքենայական միջոցով մարդկանց մասսայական վոչընչացման կատարելագործված ձևեր։ Յերկիրը գողում

ուցնցվում ե. նա շարունակ անդադար ու հուսահատ տնքացնելով լաց ու կոծով ե թնդում:

Իսկ ոտար քրմերը, իրենց դեմքի անասնական անկիրք արտահայտութիւամբ, վոսկե խաչերը վառողի ծխի ամպերի վրա բարձր բռնած, որհնում են ցավից ու բարկութիւնից սատանա կտրած մարդկանց, վորոնց նրանք իրենք են ճակատներով հրել. «վոչնչացրեք մեկ-մեկու»: Թագնւած գիշատիչի տենչանքի կրակը փայլում ե նրանց խորամանակ, անասնական աչքերում, ուր գրված է՝ «մենք կհաղթենք»: Համբերեցեք, լեզրայրներ,— թոթովում են նրանք վաճառք բերնով, — Գրիստոս հրամայել ե սիրել նրանց, ովքեր ձեզ վիրավորում են: Նրանց լեզուն մեղր ե, իսկ ուխներն արջան մեջ են, ու ձեռքերը մինչև արմունկները՝ դրանով ներկված, բայց մոտ ե ժամը, յերբ գայրութիւ ջրունկումով պրոլետարները վոտքով կհրեն իրենցին Գրիստոսի խեղկատականոցի (балаган) ծախու ծաղրածուններին: Յեվ քարերին զարնվելով կղնգան, այս ու այն կողմը կթռչեն տերտերական հանդերձանքի այդ կանթեղները, բուրվառները, սկիհներ, քոցներն ու մյուս բոլոր զիզի-բիզի բաները, զնգլտիկները: Յեվ այն ժամանակ կապիտալի բոլոր սևափիլոն պոռնիկներին պրոլետարները կասեն. հեռու հավաքեք ձեր բոլոր հրաշագործ անպետքութիւնները, չըխկչըխկիկները, սուրբ գրվածքները. առաքելութիւնները, գործք առաքելոցները, առակներն ու սաղմոսները և աստվածային պոռնըրկալեզու այդ գոհարները,— դրանք բոլորը այս փոան են գնալու, ալստեղ հավաքեցեք ձեր բոլոր փիլոնները, քղամիտներն ու ժամշապիկները, թագերը, կամիլովկոնները, սնահները, գավազաններն ու պոպոզները

(վեղարները): Դուք պրոլետարներին հիմարների տեղ ելիք դրել: Վա՛յ ձեզ, խաբված խաբեբանե՛ր: Յերկրորդ դալստյան փոխարեն դուք բոլորդ մի թուկ կստանաք, բարեպաշտ դամշեյներ:

Թող կորչեն քրիստոնեական բանդիտները, ժողովրդի խիղճն ու գիտության լույսն ու ամբողջ աշխարհում մուրողների վորջերը: Կորչեն սև սատանաների և ժողովուրդների մեջ գաղափարի հաշիշ տարածողների սև բանտկները: Քրիստոնեությունը վատթար, վարակիչ մի հիվանդութունն է, վորով աշխատավորներին վարակում է բուրժուազիան, վորով նախեղում է բանվորների որգանիզմը, առաջ բերելով այնտեղ պրոլետարական մտքի կաթված և կազմալուծելով մարտիկների դասակարգալին կամքը:

Թո՛ղ կորչի ժողովրդի վզի այդ ծանր բորը: Թո՛ղ կորչի այդ գաղբելի պալարը:

Թո՛ղ կորչեն ձրիակերները: Թո՛ղ կորչեն աստվածները, վորոնց նրանք ծառայել են: Նրանց ուրբը համբարված են: Հին ոսթիմի գերեզմանավորների ձեռքին հնչում է արգևն, բահերի զնգոցը: Թո՛ղ կորչի բուրժուազիան:

Փոսը լցրեք ժողովրդի ազատության բոլոր դահիճներին:

Փոսը լցրեք մեզ ճորտացնող, պրոլետարներին տանջելու համար՝ մեր թշնամիների ձեռքին գտնվող գործիքները:

Թո՛ղ կորչի կրոնական հաշիշը: Հսկա գերեզմանի հատակը, ուր պրոլետարները բուրժուազիայի դիակն են իջեցնելու արհամարհանքի ու նողկանքի զգացմունքով նրանք պիտի նետեն այն ամենը, ինչ վոր

աշխարհիս յերեսին ճնշողների իշխանութիւնը վաճառված կերպով ծառայող կրօնի հետ և կապված չեղել...—պիտի նետեն ու ասեն՝ թեկուզ պատուեք—տրբաքեք, հաճար կտոր ել լինեք, ել աշխարհը տեսնող չեք:

## ԶԱՏԻԿՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(թեզիսներ)

1. Քրիստոսի հարութիւնը Քրիստոսի լեզենդի առանցքն է: Քրիստոսի հարութիւնն «աստվածամարդու» գաղափարի տրամաբանական զարգացման մեջ լեզրափակող մոմէնտ և հանդիսանում: Այդ գաղափարի եյութիւնն այն է, վոր մարդ աստծու իզեսլին ձգտելը մարդկային կյանքի հիմնական նպատակը դարձնեն, ուր հակաբնական կերպով միանում են չերկու սկզբունք. առաջինը՝ մարդկային, յերկրորդը՝ աստվածային, վորը առաջինի կատարելալ հակապատկերըն է:

2. Զգտումն առ աստված համանիշ և «աշխարհից հրաժարվելուն»: Աշխարհից ու բոլոր աշխարհայինից հրաժարվելը, մարմինն ու նրա պահանջները արհամարելը, արհամարհանքը դեպի կյանքն ու դեպի բոլոր այն փորձերը, վորոնց նպատակն է՝ կյանքն այնպես կառուցել, վոր մարդկային բոլոր պահանջները բավարարվեն,—տհա այս և քրիստոնեյական իզեսլին մոտենալու ճանապարհը: Կյանքի պայքարը, պալքարը լավ բաժնի համար—սատանային ծառայելն և այդ,—իսկ ազոթքով ու պաս ու ծոմով մարմինը հյուծելը, ճգնութիւնը, անձնուրացութիւնը, ինքնախարդանումը, ինքնահողոտումը, հոգով աղքատանալը,

հասարակ ապրելը, խենթութիւնը, հեղութիւնը, համբերութիւնը—այս բոլորն «աստօռ արքայութեան վորոնումն ե»:

3. Կյանքի մասին ունեցած այս ըտլոր հայացքների հիմքն այն է, թե աշխարհը չարի և վոճիրների աղբուր է: Վողջ աշխարհը չարիքով լիքն է ( Վ Հովհաննու V, 19): Յերկրի վրա միմիայն մեղավորներն են ապրում. փրկութիւն—ես աշխարհում չկա (Հռոմայեցոց III, 10—12—23): Մինչև Քրիստոսի աշխարհ գալը աշխարհում ամբողջ մարդկութեանը ճնշում էին՝ հանցանքի, անեծքի, մահվան ու սատանայի իշխանութեան բռնը: «Աստվածամարդու» պատմական դերն այն յեղավ, վոր մարդկութեան մեղքերը քաղելու համար իրեն զոհաբերեց: Աստված ինքը, չկարողացավ մարդուն ազատել մեղքից՝ առանց չարչարանքի ու անձնազոհութեան դիմելու: Աստված իրեն անորեն դատավորների կամայականութեանն է հանձնում, վորոնց ձեռքով սատանան է զործում: Սատանան իր ժամանակավոր հաղթանակն է տոնում, վորպեսզի անարգանքը կատարյալ լինի:

4. Մեռելներից հարութիւն առնելով, մահվամբ դմահ կոխելով, Քրիստոս համայն աշխարհի մարդկութեանը հավիտենական կյանք է պարգևում իր թագավորութեան մեջ, այն թագավորութեան մեջ, վորն «այս աշխարհից չի»:

5. Քրիստոսի հարութիւնը մարդկանց կյանքի մեջ նոր բախտավոր շրջան է սկսում՝ սիրով, ուրախութեամբ, բախտավորութեամբ, համբույրներով ու տոնական խնդութիւններով լի: Քրիստոս իր հարութեամբ սոցիալական աշխարհի ընդհանուր չեղբայրաց-

ման ու դասակարգերի ներդաշնակութեան նոր դարա-  
 պլուխ և բաց անուամ: Մարդիկ պետք է պատրաստովեն  
 գիմափորելու նրա գալուստը՝ ճշմարտական կյանքի առա-  
 քինութեան ու մարմիններն սպանելու վարժութեան-  
 ների միջոցով: Մարդիկ պետք է չերկնային կյանքով  
 ոգտովեն, վորպեսզի այդ կյանքը խաչ կրելու և մար-  
 մինը խաչ հանելու հերոսութեան մատնեն:

6. Հոգու բախտավորութեանը մարմնի տանջանք-  
 ների գնով և ձեռք բերվում: Հոգուն սղատութեուն,  
 մարմնին՝ շղթաներ: Ահավասիկ կապիտալի լոգունգ-  
 ների տերտերական խմբադրութեանը: Այս լոգունգ-  
 ները հրապարակելով, չերկրի վրա նա իր տիրապե-  
 տութեան շրջանն է բնդլայնում, իսկ Քրիստոսի չե-  
 կկեցիին կրնկակոխ նրա հետեից և գնում. կապիտալի  
 իշխանութեան ամբողջ ժամանակաշրջանում բուրժու-  
 ազիան դասակարգերի ներդաշնակութեան գաղափարն  
 իրականացնելու սլամաններ գտնելու անհագ պահանջ  
 և զգացել: Բուրժուազիան ձգտել է հավատացնել շա-  
 հագործող դասակարգերին, թե կապիտալի ու մասնա-  
 վոր սեպհականութեան իշխանութեանը. վորին «վերջ  
 չի լինելու», ասածու իրեն ձեռքով և արված:

Այս ստախոսութեան մեջ չեկեցիցին պաշտպա-  
 նում և բուրժուազիային, իր աշխատանքի համար նը-  
 բանից դրամ ստանալով: Աշխարհի չերեսին վոչ մի  
 հավասարութեուն հնարավոր չի (Վ Կորնթացոց XV, 41):  
 Անհավասարութեանը հավիտյանս հավիտենից կմնա,  
 և աշխարհիս չերեսին աղքատներ միշտ ել կլինեն  
 (Հովհաննու XII, 8), Վորովհետե նրանց հենց ինքն՝  
 աստված և ստեղծել (առակք Սոդոմոնի XII, 2), ու մար-

յը նրա կամքին հակառակել չի կարող (Թուղթ աս հոռմայեցիս (IX, 19—20) :

7. Բուրժուազիան ձգտում է միջոցներ գտնել՝ գոյություն ունեցող դասակարգային հակասությունների սրությունը բթացնելու, իր զրկած դասակարգերի՝ դեպի իրեն ունեցած ատելության զգացումը մեղմացնելու համար և յեկեղեցին բանաձևում է կապիտալի հրամանները՝ «սիրեցեք զթշնամիս ձեր (Մատթեվոս, V, 44) : Յեկեղեցին առաջինն է բոլոր հավատացյալներին սիրելու որինակ ցույց տալիս դեպի շահագործողները : Նրա սերը կապիտալի կողմից «նազե ե» հատուցվում : Սուրբ պողոտան իր զգացումները փողով հարուստներին է վաճառում :

8. Յեկեղեցին, վոր անողոք է կապիտալի ձեռքով զրկվածների, բոլոր ճնշվածների նկատմամբ, պարզապես առաջ սիրալիր է ու քծնող, լակելություն է անում ու նրանց վտոքերի տակ քարշ գալիս, «ունեցողին կտրվի, իսկ չունեցողից կառնվի» (Ղուկաս XIX, 26) : «Ստրուկներին բեռ ու մահակ» (Յեսայի Սիր. XXXIII, 20), ստրուկներին «կապանքներ ու վերքեր ու ծանր շղթաներ» (Յեսայի սիր. XXXIII, 26—29), ստրուկներին—«հուրն անշեջ, գուրն հրեղեն, գեհեն և կրճտել ատամանց», իսկ պարազիտներին՝ գինի (Յեսայի Սիր. XXXI, 31—32), «Սիր» :

9. Այս պրոպագանդան, իբրև դասակարգային պայքարի զենք, կարող էր չերկասյրի բնույթ ունենալ, կարող էր վտանգավոր զենք դառնալ նաև այն կողմի համար, վորն այդ զենքով ոգտվում է : Այդպիսի վտանգի հնարավորությունը նախազգուշացվում է կապիտալի զոհերին ներշնչելով, թե չերկրային չար-

չարանքները յերկնքում հավիտենական լերջանկության հասնելու միջոց են:

10. Այդ տեսակետից ամենաբախտավոր Էրանն աղքատությունն է «լերանի աղքատաց» (ՄատթևոսՎ, 3) «Հեռու մնացեք ազահությունից, վորովհետև մարդու կյանքը նրա ստացվածքի առատությունից չի կախված (Ղուկաս 13, 15): «Մի գանձեք ձեզ գանձս յերկրի» (Մատթևոս 7, 19), վորովհետև այդ «ի չարեն ե»:

11. Բարձրագույն իշխանությանն ստրկորեն հընադանդվելը, բռնությանն ու չարին կատարելապես չհակառակելը — նույնպես քրիստոնեական ամենաբարձր առաքինությունն է, վորովհետև «տուք զկայսերն՝ կայսեր»։ Այն ինչ, վոր աշխարհից է, հակառակ է Քրիստոսին, հակառակ է նրա ուսմունքին: Քրիստոնյան աշխարհային ամեն մի բանից պետք է հրաժարվի, այդ բոլորը նա պիտի արհամարհի ու աշխարհի հոգսերը նրանց թողնի, վորոնց համար մուտքը յերկնքի արքայություն արգիլված է: Դճւք, աղքատներ, հրաժարվիցեք ձեր բաժնից, հոգուտ հարուստների, ճանաչեցեք նրանց իշխանությունը ձեր կյանքի վրա:

12. Ահավասիկ այն միջոցները, վոր պրոլետարի դասակարգային ատելությունը դեպի իր թշնամիները բթացնելու և մեռցնելու համար՝ յեկեղեցին իր տրամադրության տակ ունի: Բայց ավիլի ճիշտ՝ այդ նըպատակը զատկական տրամադրություններ ստեղծելով է ձեռք բերվում:

13. Այդ նպատակով տերտերները զորակոչում են իրենց յեկեղեցական խեղկատակների ամբողջ հանդերձանքը նախ՝ վարչամակ կտրել, խաչելություն, քրմերի սգո զգեստավորում ու թագման սրտաճմլիկ,

վշտազին յերգեցողություն, իսկ ապա հրճվանքի անդուստ պոռթկում, խանդավառության մի տարափ, մի ալիք, ցնծազին, խիզախ և ուրախաբեր, զատկական շարականներ, ամպերի պես սպիտակին տվող, արծաթափայլ վառվող մոմեր, ծաղիկներով զարդարված ու վռակեհյուս: Մերը հորդում և: Ատելությունն ու չարիքը մոռացության են տրվել: Մարդիկ զրկարաց լւրար են դիմում ու ձուլվում են հոգով՝ ի համբույր սրբության:

14. Տերտերները վոչ մի միջոց չեն խնայում, վոր բռնաբարված, հոշոտված, խաչված Քրիստոսի պատկերը գրավիչ դարձնել հավատացյալների համար ու նմանության որինակ: Հուզմունքի այդ հսկայական զժուլըժին, վոր մեռցնում և մարդկանց մեջ դասակարգային զգացումը, մի նոր հարված և հաջորդում մարդկանց նյարդերի վրա — զրախտի դռները կըրնկի վրա բացվում են Քրիստոսի մոտ կանչվողների համար՝ հեռու այս աշխարհից: Գրկենք թշնամիներին, համբուրենք բռնաբարողներին, հնազանդվենք ձրիակերներին, դահիճների սիրուց հուզվենք:

15. Քրիստոսի հարությունը պրոլետարիատի դասակարգային զգացումը մեռցնելու, նրա գիտակցությունը բթացնելու մի գործիք և, նրա կամքը կախվածահար անելու մի միջոց և տետերների ձեռքին:

16. Զատիկը սևափիլոն փալանդողների (թամբազործ) ձեռքով կարած մի սանձ և բանվորների վզին:

17. Պրոլետարի պարտքն և՛ թոթափել այն իր վրայից, իր դասակարգի մյուս անդամների գիտակցությունն ազատել նվաստացուցիչ ու փրասակար


զատկական այս տրամադրութիւններից: Մերկացնել  
 դասակարգային աստառն ու զատկական տոներ կազ-  
 մակերպելու միջոցով՝ մերկացնել Քրիստոսի զատիկն,  
 իբրև բանվորների դասակարգային գիտակցութիւնը  
 մեռցնելու գործում բուրժուայի զազրելի խարդախու-  
 թիւններից մեկը: Պրոլետարը պետք է բուրժուական  
 հին հասարակարգն այնպես ճխլի, վոր նա այլևս չի-  
 բեք չկարողանա հարութիւն առնել: Թող ստրուկնե-  
 րը փրկիչներն վրա հուշս դնեն: Բանվոր դասակարգն  
 առանց հուշսեր շռայլելու, վողջ մարդկութիւնն ա-  
 դատագրում է ստրկութիւնից:




## Ց Ա Ն Կ

Առաջարան . . . . .	3
Ավետարանի տեղեկությունների անճշտությունը Քրիստոսի մասին . . . . .	10
Տերտերական գրաքննությունը սատժու խոսքի վրա . . . . .	16
Ավետարանիչների պատմություններն ու հակասությունները . . . . .	19
Քրիստոսի հարության պատմությունը հնարովի բան և . . . . .	24
Քրիստոս իրոք չի յեղել նրա մասին տերտերա- կան բոլոր պատմությունները պոչավոր սը- տեր են . . . . .	27
Ումը և ինչու համար և պետք յեղել Քրիստոսի վերաբերյալ գրույցը . . . . .	32
Քրիստոնեությունը մի գործիք և բուրժուազիա- յի ձեռքին, պրոպետարիատի ատելությունը բը- թացնելու համար . . . . .	36
Ինչպես և առաջ յեկել Քրիստոսի լեզենդը . . . . .	39
Քրիստոս պատմական դեմք չի, այլ ճնշող դա- սակարգերի փոլփայած պատկերն ու յերևակա- յությունն և միայն . . . . .	48
Ձատիկը դասակարգերի պայքարը դադարեցնելու որ և . . . . .	58
Ձատիկը դրախտի զուռ և բոլոր նրանց համար, ովքեր հրաժարվել են աշխարհից . . . . .	62
Մարմնի փրկությունը հոգու կորուստն և . . . . .	65

Քրիստոնեկութիւնն անհաժաարութիւնն որհնող կրոնն և . . . . .	71
Քրիստոնեկութիւնը շահագործողների շահերը պաշտպանող կրոնն և . . . . .	74
Քրիստոնեկութիւնը ստրկութեան կրոնն և . . . . .	75
Քրիստոնեկութիւնը պրոլետարիատի գիտակցութեանը մեղցնող կրոնն և . . . . .	79
Քրիստոնեկութիւնը բուրժուազիայի կեղծավորութիւնն որհնող կրոնն և . . . . .	81
Քրիստոնեկութիւնը պրոլետարիատին խաբելու խաչն և՝ բուրժուազիայի կարթի ծայրին՝ . . . . .	83
Քրիստոնեկութիւնը նվաստացման և ստրկացման կրոնն և . . . . .	88
Քրիստոնեկութիւնն աշխատավորների համար բուրժուական ճորտացման կրոնն և . . . . .	90
Չատիկն ու բանվոր դասակարգը . . . . .	95
Յանկ . . . . .	102





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038865

[204]

ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

A  $\frac{I}{4105}$

